

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

ԵՒ

ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՄԵՄՐՈՎՔ ՎԱՐԴ. ՏԵՐ-ՄՈՎՍԻՍԻԱՆԻ

Հ*)

ԵԿԵՂԵՑՈՒ ՑԱՏԱԿԱԳԻԾԸ


Պեղումները միանգամայն արդարացլին այն բոլոր յոյսերը, որ շատերը տածում էին դէպի այդ եկեղեցու ճարտարապետական յատկութիւնները՝ Պեղման ամենայաջող արդինքները երեւան եկան հէնց սկզբից, որովհետև մի ամառուայ ընթացքում, սկսած 1900 թ. Մայիս ամսից մինչև Յուլիս ամիսը, հ. Խաչիկը անընդհատ աշխատութեամբ բացեց և մաքրեց եկեղեցու ներսը և երեւան հանեց շինութեան լաւագոյն զարդիր կաչմող քարերը, խոյակները, սիւները, սեղանը, մողափիկ խաչը և այլն։ Այսուհետեւ տեղի դանդաղ ընթացքով, բացւել մաքրել են շինութեան երկրորդական մասերը և գլխաւորապէս կաթուղիկոսարանի ընդարձակ շինութիւնները։

Եկեղեցուց մնացած են. Ա. 2օրո զլիս սւոր կամ Մայր սիւները, սրանց հաստութիւնը երեք ու կէս մետր է, քառակուսի տարածութեամբ՝ եթէ չհաշւենք անկիւններով կտրւած և ներս ընկած ժամերը, որովհետև սիւները, երկու հակադիր կողմերով, սկզբում ուղղագիծ, ապա կիսաշրջանաձև գծերով ներս են ընկնում, որով անհամեմատ բարականում, փոքրանում է սիւնի մեծութիւնը։

Եկեղեցին շինած է մի ընդարձակ բլրի վրայ։ Նրա հարաւային և արևմտեան կողմում՝ փոքր ինչ թեքւած դէպի արևմտաք շինւած են կաթուղիկոսական բնակարանները, իսկ հիւսիսային և արևմտեան կողմերում բլուրի սկսւածքն է, բաւական ընդարձակ դաշտով, ուր շինարար կաթուղիկոսը մեծ այգիներ և ծառատուններ էր տնկել, Բլուրի արևմտահիւսիսային ցածրագոյն մասից սկսելով և շրջան անելով մինչև կաթուղիկոսարանը, եկեղեցու շուրջը շինւած էին լայնանիստ սանդուխներ, որ ամենացած տեղում բաղկացած էին եօթը աստիճանից։

*.) Տես Ազգագրական Հանդէս գ. XV.

Նկեղեցու յատակսգիծը որ մեր խնդրով նկարել է ճարտարապետ Տէր Սարգսեանը, ունի հետևեալ պատկերը. Ա. պատերը դրսից ունին 32 (որոշ բարձրութիւնից անկիւնների թիւը հասնում է 64) բութ անկիւնանի շրջանու Բ. Ներսի կողմում չորս



անկիւններում, հաւասարապէս հեռու միմեանցից և պատերից, բարձրանում են չորս «հաստամեղիւս» մս յր սիւներ. Գ. Սոցա մէջում կան երեք կիսաշրջաններ, որոնց վրայ բարձրանում էին կոլոր բարի վեց վեց սիւներով, գեղեցիկ խարիսխներով և խոյ-

ակներով սիւնազարդեր. Արևելեան կողմում՝ լցնելով սիւների համապատասխան կիսաշրջանը և այնտեղից էլ 3,24 մետր առաջ ընկած, գտնուում է սեղանը, որի յետեի կիսաշրջանում բարակ պատ է բարձրանում: Դ. Եկեղեցու արևելեան մասում ուղիղ սեղանի հանդէպ կայ մի քառանիվ կիսանիվ օֆինած երկու փոքրիկ դռնով միացած ներսի հետ: Ե. Շուրջ այդ բոլորի փուած են 16 անկիւնանի ասթինանները, 7-ական աստիճաններով: Եկեղեցու մեծութիւնը, հետը հաշւած պատերը, 41 մետր է, առանց պատերի 33 մետր:

Ա. Պատը շուրջ բոլոր բանդւած է մինչև 2—3 արշին հիմքից բարձր, միայն ներսի երեսն է անվնաս. հիմնած է եղել երեք աստիճանի խարսխի վրայ, որի ընդհանուր բարձրութիւնը 1,14 մետր է, իսկ իւրաքանչիւր աստիճանի լայնութիւնն ու բարձրութիւնը $0,38 \times 0,37$ մետր. բուն պատի հաստութիւնը 0,98 մետր է,

Մինչդեռ եկեղեցու ներսի սիւնազարդերի, սեղանի ևն, մանրամասնութիւնները վերականգնելը առանձին դժւարութիւն չի ներկայացնում, զրոսի պատերը կարող են կասկածների տեղիք տալ: Չափազանց շատ են ամեն տեսակ քանդակներ, եռանկիւնի, կոլոր, ժապաւէնաձև քանդակներով, մետոպներով ևն: Հարկաւոր է այդ բոլոր միմեանցից բաժանւած բեկորները հմտութեամբ միացնել, որպէսզի իրաքանչիւր բար իւր տեղը դրւի և չբացատրւած քար չմնայ գուրսը: Այդ աշխատանքը կատարել է ճարտարապետ Թ. Թոռոմանեանը, որը մի քանի ամիս աշխատել է Զուարթնոցի վերականգման վրայ և իւր ներկայութեամբ մի քանի մասեր յատուկ պեղել է տւել: Այդ մասերը մենք տալիս ենք հիմնելով նրա վըկայութեան վրայ:

Ամբողջ շինութիւնը դրսից սիւնազարդ էր. բացի արեելեան դուրս ընկած քառանկիւնի մասից, որ առ այժմ մնում է կասկածի տակ: Երջապարհսպը սիւներով բաժանւած էր 32 զոյտ սիւներով: Սիւները կպած էին պատին և դուրս էին ընկած երեք քառորդ տրամագծով, 0,13 մետր հաստութեամբ: Սիւների խարիսխները անձիշտապէս ամրացրած են վերսկի աստիճանի վրայ և իրենց ձևով բիւզանդական են. իսկ խոյակները ներկայացնում են շուշան ծաղկի զոյտ բանդակներ (տես տախտակ I): Մաղիկը քանդակւած է ոչ միայն ճակատի, այլ նաև կողերի դուրս ցցւած մասերի վրայ: Բոլոր սիւները միացած էին իրար հետ աղեղներով, կազմելով 32 արկադների շարք: Իւրաքանչիւր աղեղ կամ կամարի պատին (կարնէզը) ունէր երկու շերտ. առաջինը՝ ժապաւէնաման է, մաքուր տաշած բարերով, միւսը գեղեցիկ զարդարւած էր խաղողի ոստերով և ողկոյզներով: Աղեղների սկսւածք-

ները կազմող եռանկիւնիների մէջ դրւած են մեթոպներ¹⁾ — մարդկանց քանդակներ, որոնց կուրծքից բարձր մասը կատարեալ բարձրագանդակ է (Ras-relief), իսկ ներքեխ մասը ոլորում զարդ է, այնպէս որ մարդկանց ոտները չկան: Այդ մնացաներից գտնւել են ինն հատ, մի քանիսը խիստ ջարդւած, միւսները լաւ վիճակում, բացի երեսներից, որ կարծես դիտմամբ քերւած է: Դոքա բոլորը ձեռներին բռնած ունին մուրճ և այլ գործիքներ և ընդհանրապէս միմեանց նման են, բացի մէկից: Այդ մէկի անունը «Յոհան» կամ «Յոհանա» կողքին գրւած է: Նա ունի վեղար, մինչդեռ միւսները գլխարաց են: մի ձեռին ունի մուրճ, միւսում թիակ:

Մետապները և կամարի պսակի մէջ գոյացած անկիւնաւոր տարածութիւնը գարձեալ ամենահարուստ քանդակներով՝ խաղողի ոստերով և նունենու թուփերով զարդարւած էր, սակայն այնպիսի հաշով, որ ամեն մի մետապի գլխին մի մի վիթխարի նուռ կար, որով խիստ համաչափ կերպով լցւել է այդտեղի անկիւնը: Խոյակներից մինչեւ երրորդ շերտը 0,72 մետր բարձր է. շերտերն առանձին բարձր են 0,27 և 0,90 մետր: (Տես տախտ. IX):

Դոցանից բարձր կայ մի նոր շերտ ժապաւէնանման, տաշւած քարերով (0,98 մետր), որից աւելի վերև՝ (1,98 մետր) համապատասխան ներքեխ պատուհաններին, շինւած են երկրորդ կարգ լուսամուտներ: Սոքա կոլոր են, տերենների և այլ օրնամենտների քանդակներով և զերւած: Պատուհանների տակի շերտին համապատասխանում է երկրորդ շերտ վերևից (դարձեալ 0,98) և ի վերջոյ գալիս է պսակը (կարնեղը): Պահկը բաղկացած է խոշոր քարերից, որոնք դէպի ներքեւ նայող՝ լայն մասում զոյգ ճիպոտների հիւսւածքով են քանդակւած: Իսկ նեղ՝ հորիզոնական շերտում քանդակները տերենների զարդեր են: Ամբողջ պատի բարձրութիւնը սկսած ամենաներքեխ աստիճանից մինչեւ պսակը 12,21 մետր է (կամ 17,2 արշին), զոյգ սիւները 0,87+3,45+0,87=4,19 մետր:

Պատի ներսի մասն էլ զարդարւած էր 64 պատին կպած բարակ սիւների արկադներով: Դոցա խարիսխների ձեզ կարելի է տեսնել եօթներորդ տախտակի վրայ: Սիւները հաւասար հեռաւորութիւն չունին, այլ փոխ ի փոխ միմեանցից 1,62 և 1,15 մետր հեռու են: Այս սիւների հաստութիւնն էլ հաւասար է դրսի զոյգ սիւներին: Մինչդեռ դոցա խարիսխների մեծագոյն մասը պահպանել է, խոյակներից միայն մի հատը կայ: Այդ խոյակի ձեզ խիստ պարզ

1) Դասական շինութիւնների մէջ մետապների եւ խոյակների մէջ գտնւում է մի հորիզոնական բարակ շարւածք: ինչ որ այստեղ պակասում է:

է և ըստ ամենայնի յիշեցնումը է խարսխի ձեզ, բայց դրա փոխարէն հարուստ քանդակ ունէր խոյակի գլխին նստած քարը: Նրա քանդակը նման է խոշոր տերեների, որով զարդարած էին նաև կողոր լուսամուտները ներսի կողմից: (Տես տախտ. I, VII):

Դմբերի վերականգնումը ամբողջ շինութեան մէջ ամենից շատ կասկածելին է. նրա բեկորներից պահւել են միայն մի քանի սիւնի կտորներ և երկու տարբեր խոյակ¹⁾ յարմարեցրած պատի մէջ զնելու: Դոցանից մէկը ունի կողով, առանց հիւսւածքի և խոյ գոտեորւած և տերեազարդ քանդակներով (0,50 բարձր, 0,49 մետր երկար), միւսը կողով չունի Սիւների բեկորներն ու խոյակները հաստատում են, որ զմբէթի թմբուկը սիւնազարդ էր, իսկ թէ որ քան էր նրա բարձրութիւնն ու վեղարի ձեզ և որ ամենից գլխաւորն է, ինչ եղանակով էր բաղմած ոտմբողջ շինութեան վրայ, մընում է թէական: Պ. Թորոմանեանի կարծիքով թմբուկի մէջ կային 16 պատուհանն Եղիսեան ծաղկազարդերն ծառայումէին պատուհանների արկադների պատկները զարդարելու, ինչպէս շրջապատի պատի վրայ խաղողի և նոննենու քանդակները:

Բ. Դուների թիւը հինգ է, հարաւից հարաւ-արևմուտքից, արևմուտքից, արևմտահիւսիսից և հիւսիսից, երկու փոքր դուռ է միացնում արենելեան կից շինութիւնը: Դոները բացւածքով իրար հաւասար են և ընդհանրապէս բաւական փոքր են, — լայնութիւնը 1,60 մետր է, բարձրութիւնը որոշել դժուար է: Դոներից երեկը փոքրիկ դուրս ընկած մասեր են ունեցել, ուստի այդ երեքը, պատի հաստութիւնն էլ հետը հաշւած 3,25 մետր ընդարձակութեամբ են, իսկ երկուսը 2,15 մետր: Դուրս ընկած մասերի պատկաճեան քանդակների բեկորները խիստ գեղեցիկ են²⁾: (Տես էջ 128):

Գ. Սիւնազարդերը. Մենք արդէն նկարագրեցինք չորս մեծ սիւները, որոնց վրայ հաւանական յենւած էր ամբողջ զմբէթը, իսկ այդ չորս հիմնական սիւների հետ էին միացած շինութեան ներսի միւս կլոր քարերի սիւները, որոնք մի տեսակ վանդակների պէս երեք կողմից չլցափակում էին եկեղեցու ներսի կիւսարուրակները: Այդ կիսարուրակների ամբողջ երկարութեամբ և նոյն իսկ մեծ սիւների տակը անցրած էր մի մայթանման բարձրութիւն, յատակից 9 սանտիմետր բարձր և 98 սանտիմետր լայն, որի

1) Եղիսեան ծաղիկ կոչւած (Fleur d'Elis) պասական զարդի գեղցիկ քանդակով.

2) Յատակաղծի մէջ երկու փոքր դոները նկարի սխալ վերարտադրութեան պատճառով. լաւ չեն երեւում:

վրայ իրքն հիմքի՝ շարւած էին սիւները։ Սոցա թիւը երեկ կիսար շրջաններում հաւասար է $3 \times 6 = 18$ -ի։ բացի այդ մի հատ էլ մեծ սիւների գէպի սպատը նայող մասի առաջն է եղել, ուրեմն 18+4=22 հատ Սիւների հեռաւորութիւնը միմնանցից 1,05 մետր է, իսկ ամեն մի մայր սիւնից մինչև իւր անմիջական մօտի փոքր սիւնը 1,40 մետր է։ Նկարագրենք սիւների մասները։

1. Խարխսիսը բազկացած է միակտուր քարից, յոնիական ձեխ է, բարձր 92 մետր և լայն 0,82 մետր։ Դորա մէջ բունը ամրացնելու տեղում 2,5 սանտիմետր խորութեամբ փորւածք կայ Բացի այդ մի խաչածի գիծ իրքն շառաւիզ կտրում է այդ փորւածքը, որի կինդրոնը 18 ս. խորացրած էր և ծառայում էր բունի և խարսիսի մէջ ամրացրած երկաթը տեղաւորելու Համապատասխան փորւած, խաչածն գծով, կայ նաև բունի մէջ։ Երկու կտորները իրար հետ միացնելու երկաթներից մի քանիսը պահւած են։ Փորւածքի տրամագիծը 0,58 է։ (Տես նկար I, III):

2. Բունը բազկացած էր մի քանի խիստ խոշոր քարերից, կողոր տաշւած, առանց որևէ զարդի, վերնը ներքեխն հաւասար։ Պահւած կտորների հաստութիւնն է 0,58 մետր, երկարութիւնը՝ մեմացածի մի կտոր քարինը 2,10 մետր։ Աւելի մեծ, հաստ և երկար են մայր սիւների կիսաբոլորակների հանդէպ գտնւած չորս սիւները, որոնց խոյակների ձեմբը՝ արծւախիւներ կլոչենք։ Սոցա խարսիսի և բունի ձեզ միւսներին միանցամայն նման է, տարրեր են խոյակները։ Սոցա բունը ամրացրած էր ուղղակի խարսիսի վըր բայ, առանց փորւածքի, որովհետեւ բունի հաստութիւնը կամ որպատ մագիծը և խարիսխինը 0,82 մետր է։ Պահւած միակտուր բունի մի քարի բարձրութիւնը 2,20 մետր է։ (Տես նկար VІІІ):

3. Խոյակները իրանց նուրբ և ձեւաւոր քանդակներով անկակած շինութեան ներսի լաւագոյն զարդարանքն էին կազմում։ Նոքա երկու ձեխ են։ 18 սիւներինը կողովներ են յոնիական ոլորակներով կամ խոյերով, մնացած չորսինը՝ թուշուներ են։ Մայր սիւների առաջի երեկ քառորդ սիւների խոյակների մասին արդէն խօսք է եղել։ Իրքն գեղարուեստի արտադրութիւն նոքա բիւզանդական կոչւած ճարտարապետական արտւեստի լաւագոյն օրինակներ են։ Առաջինները ունին հետեւալ երեկ մասերը, հաստ քառանկիւնի արակ կամ սալ, յոնիական ոճի ոլորակներ, կամ խոյեր և հայ-բիւզանդական ոճի կողովներ։ Արակի մեծութիւնը 1,01×0,95 մետր է, խոյերինը 0,94×0,37, կողովինը 0,49 բարձր, ամբողջի բարձրութիւնը՝ 1,3 մետր է։ Կողովը ներկայացնում է երեկ ճիւղերից գործւած մի հիւտածք, որի վրայ կարծես ամրացրած է խոյը։ միջում փոքրիկ մեղալեօններ, վրան կամ խաչ քանդակած,

կամ Շինող կաթուղիկոսի անունը փորագրւած յունարէն լեզով՝ Խոյի կողքերի քանդակը տերեի զարդ է, ուղիղ մէջտեղից գտփով ամրացրած։ Աբակի և խոյի միացումը երկու կողմից մի մի զոյդ համանման հիւսւածքով և յատուկ հանգոյցներով է։ (Տես նկար I, VII)։

Արտասովոր են թռչունի չորս խոյակները։ Սոքա անհամեմատ մեծ են միւսներից, և ինչպէս նկատեցինք, ամրացրած էին աւելի հաստ բուների վրայի թռչունի պատկերը բարձրաքանդակ փորագրւած է թեները փռած դէպի երկու կողմբ։ Խոյակի արակը անհաւասար քառանկիւնանի է. ճակատն ունի 1,2 մետր, յետնը 1,88, իսկ կողքը 1,6 մետր. Խոյակի ներքերի մասը բունի հետ միացնելու աեղը կոլորացրած է, և թռչունի հակառակ կողմում կան ծաղկանման դարդեր, որ կրկնւած է նաև առաջի կրդմից՝ թռչունների ոտների տակ։ Խոյակի ընդհանուր բարձրութիւնն է 0,97 մետր։ Թռչուններից երկուաը գլուխները մի կողմ են թեքել, միւս երկուսը հակառակ կողմը, կազմելով մի տեսակ զինանշան երկու զոյգ իրար նայող թռչուններով։ Կողովաձև խոյակների քանդակների մէջ արուեստի տարրերութիւնը այնքան աչքի չի ընկնում, նոյնը չենք կարող ասել թռչունների խոյակների մասին։ Թռչունները ընդհանրապէս թողնում են ընականից ընդօրինակութեան տպաւորութիւն։ բայց երբ չորսը իրար հետ համամատում ենք, իսկոյն աչքի են զարկում քանդակող վարպետի կարողութեան աւելի ու պակաս աշխատանքի և հմտութեան չափը Բոլորն էլ պահւած են լաւ վիճակում։ իրաւ է բարձրից ընկնելով, մէկը պատուել է միջից, միւսների ոտների մասից է ջախջախւել, բայց անթերի են բեկորները և դիւրաւ կարելի է լրացնել։

Ի՞նչ թռչուններ են դրֆա Առաջի հայեացքից, երբ մանաւանդ ի նկատի էք առնում կտուցների յայտնի կորութիւնը և զօրեղ թեների լայն և ուժեղ թռիչքը, կարծում էք թէ արծիւ էր Սակայն Պետերբուրգում հնագէտ Յ. Ի. Սմիրնովը իմ ուշադրութիւնը հրաւիրեց նախ՝ այն բանի վրայ, որ թռչնի ոտների վրան չկան մագիւներ և ապա, որ եկեղեցիների նկարներում, մանաւանդ գմբէթի և կամարների անկիւններում, սովորական են աղաւնիներ, բայց ոչ արծիւներ։ Այդ ցուցմունքը ինձ կասկածի մէջ ձգեց։ (Տես տախտ. I, X, 1, 4):

Սակայն երբ աւերակների տեղում նորից ուշադրութեամբ քննեցի խոյակները, ոչ մի կասկած չմնաց, որ այդ թռչունները իսկապէս արծիւներ են, թէկուզ գեղարուեստի մէջ արտասովոր երևոյթ։

Ամբողջ սիւնազարդի 22 սիւնից անկորուստ պահւած են 16

խարիսխ, 16 խոյակ. չորսը ճեմարանի բակում, մէկը վանքի պարապի մօտ, մէկն էլ գիւղի գերեզմանատանը (որոնք բոլորն էլ հաւաքւելու են վանքի թանգարանը) և չորսն էլ պեղումների տեղում, 3 հատ բռնի ամրող կտորներ և չորս հատ բնեկւած։ Պակասածները դուրս են տարել, Կան բաւական բեկորներ էլ, որ հաւաքւածները են ժամանակաւոր թանգարանի մէջ—Խաչիկ վարդապետի թանգարանում Զուարթինոցի մօտ։

4. Սեղանի մասին ինչ որ ասել էինք մեր ոռւսերէն աշխատութեան մէջ, չնորհիւ պեղման ընթացքում կրեան եկող նորութիւնների, հիմնովին փոխել պէտք է։ Ամենից առաջ պիտի նկատենք, որ սեղանը ուշ ժամանակում է վերաշնուել, նախնականի համեմատութեամբ ընդարձակւել և կրկնակի մեծութիւն է ստացել։ Մինչդեռ սկզբում նա տեղաւորւած էր միայն արևելեան երկու գլխաւոր կիսարոլորակում։ Այժմ նա սիւներից առաջ է ընթած 2,24 մետր դէպի եկեղեցու կենցրոնը։ Յետոյ հին սեղանի տակը երեխ ծածկ կար և հաւանական այնտեղ են գտնւել մասունքներ։ Այս ենթադրութիւնը հիմնած է այն բանի վրայ, որ երկու սիւների կողքից սանդուվսներ են իջնում դէպի ներքեւ ամեն մէկը չորս աստիճանով, որոնց քարերը մաշւել, փոսացել են ներս ու դուրս անողների ստաներից։ Օտարութի է մի հանգամանք, որ պատերի վրայ նախսկին կամարների հետք ամենեին չկայ, նթէ տարածութիւնն ի նկատի առած, կամար անցրած լինէին, այդ կամարը խիստ կրաքարանար, ուստի տրամադիր ենք ենթադրելու, որ սեղանի տակը փայտաշչն ծածկով է։ Յամենայն դէպս այդ հարցը մնում է շուշածած։ Պէտք է կարծել, երբ հարկ են համարել սեղանը մեծացնելու, քանդել են հին ծածկը և ամրող տարածութիւնը հողով լցրել։ Թէ իսկապէս եղել են հին և նոր սեղաններ հաստատւած է, բացի յիշած աստիճաններից՝ նաև նրանով, որ երկու սիւների այն մասը, որ հին սեղանի ժամանակ բաց էր, իսկ նորի ժամանակ ծածկւած էր, կրաքին ծեփ ունէր և հէնց այդ ծեփի ներկայութիւնը Խաչիկ վարդապետին միաք տուեց փորւածը անել, (Տես տախտ. IV):

Սեղանը իւր ներկայ վիճակով ունի 7,75 մետր խորութիւն և 13,24 մետր երկարութիւն ճակատի կողմից։ բարձրութիւնն է 1,45 մետր։ Սանդուվսները բարձրանում են թէ կողքերից և թէ ճակատի մէջտեղից, իւրաքանչիւրը 4-ական աստիճաններով։ Սեղանի վրայ կար վէմ քար և մի յատուկ շինւածք՝ բարեալ գերց։ Այդ գլրոցը շինւածք է սեղանի պոռնգին՝ աջ անկիւնում, 1,90 մետր դէպի ներս։ Խնչպէս պարզ երեսում է նկարի վրայ, գլրոցի ձեզ մի տեսակ մինիատուր կոլոր տաճար է, սիւնազարդերով և

կարնեզներով եղերւած։ Պէտք է զարմանալ թէ ինչպէս տաճարի կործանման ժամանակ վերելից մնե թափով զլորուղ բեկորները ամբողջովին չեն փշրել և ջարդել այդ շնուածքը։ (Տես տի. V, IV):

Խօսելով « Դրիփորի մասոների տեղափոխութեան մասին, տոկ ենք, որ պեղումները հաստատում են Յովհաննէս կաթողիկոսի և Մ. Կաղականդացու ցուցմունքները։ Եւ յիրաւի, ուրիշ ինչ գործածութիւն կարող էր ունենալ քարեայ գզրոցը սեղանի վրայ, իտես ժողովրդեան կառուցած, եթէ ոչ մասոններ տեղաւորելու։ Սեղանը մնեացնելով փոքրանում էր եկեղեցու տարածութիւնը, այդ անհրաժեշտութիւնը չէր զգացուիլ, եթէ մասանց համար տեղ պատրաստելու հարկաւորութիւն չինէր»

Սեղանի մնեանալու հետ եկեղեցու մէջ կատարել է ուրիշ փոփոխութիւն եւս։ Սեղանի առաջ, եկեղեցու ուղղի կենդանում, 1903 թ. ամառը բացւեց մի աւազան՝ 6 աստիճաններով, որի աըրամագիծը 1,77 մետր է, իսկ խորութիւնը 1,25 մետրու Եկեղեցու ամբողջ յատակը սարայատակւած էր քառանկիւնի սալերով, իսկ աւազանի երեսը ծածկում էին երեք մնե զերեղմանաքարերի նման սալեր, Խաչիկ վարդապետը ենթադրելով, որ այդ քարերի տակը կարող է հին արձանագրութիւն գտնել, 1908 թ. ամառը, պրօֆեսոր Մասի և իմ ներկայութեամբ փորձեց շրջել այդ քարերը և փոխանակ արձանագրութեան յանկարծ երեսան հանեց պատի հետքեր։ Քանզին առաջ տանելով երեսացին աստիճանները և շրջանաձև աւազանը հաստ կրաշաղախով ծեփած։ Աւազանների պառնդները քանդել շրջել էին մէջը, այնպէս որ լիցքը մնեաւ մասամբ հէնց այդ շնուածքից էր Գտնւած ծեփերի վրայ զանազան գոյնի ներկեր կային, որ ասել է թէ աւազանի գոնէ վերեի մասերը նըկարւած էին։ Աւազանի հիմքում կար յրջանաձև մի կոլոր ուլ, սորա մէջը բոռնցքից մի քիչ մնե մի ծակ՝ մէջը ցցւած քարեայ զլանաձև խցան։ Անյաջող անցան քարը անվաս հանելու փորձերը, որովհետեւ կրաշաղախով ամրացրած էր, ուստի հարկ եղաւ կոտրտելու։ Նրա տակը երեսացին միայն չորս անտաշ քարեր։ Մի փոքրիկ սանդուխ, հինգ աստիճանով, ինչում է աւազանի տակը։

Թէ այդ շնուութիւնը աւազան է, կասկածել չէր կարելի, դրա ամենալաւ ապացոյցը տակի շրջանաձև սալի միջի անցքն է, քարեայ խցանով, որը կարող էր միայն մի նպատակի ծառայել, հարկաւոր դէպքում նրան բացել են, որպէս զի աւազանի ջուրը հոսի գետնի տակը։ Այլ հարց է, թէ ինչ է եղել աւազանի նշանակութիւնը։ Ամենասառաջի միտքն է, որ եկեղեցու մկրտութեան զկըզբնական աւազանն այդ էր, Մանաւանդ երբ ի նկատի ունենանք տանարի կոլոր յատակագիծը, որ ընդօրինակութիւն է բիւզանդա-

կան մկրտարան կոչւած (Baptisterion) եկեղեցիների յատակագծին, խև սրբա էլ ընդօրինակութիւն էին հին հռովմէական բազնիք-ների, որոնց աւազանը յինութեան մէջն էր: Նկարների հետքերը աւելի են հաստատում այդ միաբրր: Հաստատ համոզմունք կազմելու համար, բաւական է յիշնենլ, որ Հոգինում և ուրիշ տեղեր մի քանի այդպիսի եկեղեցիներ կան, որոնց ուղիղ կենդրունում գմբէթի տակը, մինչև այժմ էլ անփոփոխ պահւած են հին աւա- զանները¹⁾:

Երբ մեծացրել են սեղանը, ծածկել են նաև հին աւազանը, որովհետեւ այդ ժամանակ աւազանի տեղի մասին հասկացողութիւնը փոխւած էր: Հնի՝ ծածկածի փոխարէն մի խոշոր քարից աւազան են շինել և հաստատել սեղանի յետեր, մեծ սեան և սեղանի արենելահարաւային պատի անկիւնում: Աւազանը, ինչպէս նկարը ցոյց է տալիս, որ տեղաւորւած է յատակից մի աստիճան բարձրացրած: Նրա փորւածքը խաչածն է, կիսաբոլորակ, յիշեցնելով եկեղեցու յատակաղիծը՝ ի նկատի առած չորս մայր սիւները իրանց կիսաբոլորակներով: (Տես տախտ. III):

Աւազանի խորութիւնն է 0,84, բերանի բացւածքի լայնութիւնը $1,38 \times 1,43$ մետր: Մինչդեռ մեր հին թէ նոր եկեղեցիներում աւազանը գտնուում է հարաւային պատի մէջ, այսուղ նա միանգամայն անսովոր տեղուում և դիրքուում է: Այդ ևս ապացոյց չէ, որ աւազանը յետոյ է այդտեղ շինել: Աւազանը այնքան մեծ է, որ, հաւանական, նրա մէջ մլրտել են ոչ միայն երեխաներ՝ այլև հասակն առած մարդկանց:

Մոզայիկ. Աւերակների փլատակների տակ (նկար V, XI, 6) սեղանի մասում գտնուել է մի մեծ կտոր մոզափիկ, մօտաւորապէս 60×37 ս. մեծութեամբ, որ ներկայացնուում է մեծ խաչի բեկոր: Հաւանական նա ընկել է սեղանի կիսաբոլորակ ծածկից: Մոզափիկ զարդերը պէտք է որ ընդարձակ տարածութիւն բռնած լինին, որովհետեւ, բացի այդ մեծ կտորից, փոքրիկ բեկորներով և հաս հստ գոյնդոյն քարերով լիքն են աւազը և խիճները: Խաչիկ վարդապետի կարգադրութեամբ երկար ժամանակ մի ծեր մշակ դրազւած էր յատկապէս այդ քարերը ժողովելով: Փոքրիկ քառանկիւնի քարերը կամ սեղական գոյն ունին, կամ ներկւած են միայն դրսի երե-

1) Համեմատել F. D u r g, Handbuch der Architectur զրքի մէջ յիշւած մի քանի մկրտարան եկեղեցիներ. Ս. Կոնստանտ Հոռչմի մստ (էջ 57), Ս. Ստեփանը (էջ 60). Լատերանեան բապտիստերիսնը (էջ 65) եւ նոցերայի բապտիստերիսնը (էջ 85).

ւացող կողմից։ Խաչի թերը ոսկէ գոյն է, վեց շարքով, որը եղերած է մի շարք կարմիր քարով։ Ճաճանչները սպիտակ գոյնի են, իսկ թևերի և ճաճանչների միջի տարածութիւնը լցւած է շրջանաձն՝ արծաթէ գորշ և կապոյտ շերտերով։

Նկարներ. Եկեղեցու պատերը ներսից թէկ մաքուր սրբատաշ քարով էին ծածկւած, երբեմն նաև զանազան օրնամենտներով զարդարւած, հարկ են համարել, բացառութեամբ սիւնազարդերի, ծեփել հաստ կրաշաղախով և ներկել։ Սիւնազարդի նկարները կպցրած են ուղղակի քարին։ Նկարները եղեւել ոչնչացել են. աննշան, ոչինչ չներկայացնող գունաւոր հնագեր կան թէ խոյակների և թէ պատերի կրաշաղախի վրայ։

Ե. Քառանկիւնի շինուած 6×9 մետր մեծութեամբ, որը երկու փոքրիկ դռներով հաղորդակցութիւն ունէր եկեղեցու ներսի հետո։ Ունեցել է արդենք զրսի կողմից էլ դուռ, հաստատել կամ մերժել դժւար է, որովհետեւ պատը շատ խոր է քանդւած։ Շինութեան ուղիղ մէջտեղը մնացել է քառակուսի սեան մի հաստ հիմք, որի վրայ բարձրանում էր աւելի բարակ սիւն և որովհետեւ սեան երկու հանդիպակաց կողմերում կան պատերի դուրս ընկած մասեր, պէտք է կարծել, որ քառանկիւնի շինութեան զլուխը կամարակապ էր։ Ոչ հայկական և ոչ էլ նրա համացեղ բիւզանդական, վըրացական և ասորական եկեղեցիների շինութիւններում չկարողացանք զտնել այդպիսի մի յաւելւած։ Ուստի մնում է մեզ ենթադրաբար ասել, որ այդ շինութիւնը ծառայել է եկեղեցուն իբրև աւանդատունն Քանի որ եկեղեցու մէջ խորան չկար, անհրաժեշտապէս յատուկ աւանդատուն և առանձնացած ծածկի կարիք կզգացւէր։ (Տես տախտ. VII):

Անհաւանական չէ մինչև անդամ կարծել, որ այդ հաւանդատունը յետոյ է շինուել, որովհետեւ ուշադրութեամբ քննելով նրա պատերը, տեսնում ենք, որ նոքա սերտ չեն միացած եկեղեցու պատերի հետ, այլ դրսից կցւած են։

Յետութեան մի ուրիշ ապացոյց էլ կայ, որի վրայ իմ ուշադրութիւնը դարձեց ճարտարապետ Քրիստուֆոր Տէր-Սարգսանը։ Եկեղեցու հետ միացնող երկու փոքրիկ դաները չեն նայում եկեղեցու կենդրոնին, ինչպէս միւս հինգ դռներն են, այլ փոքր ինչ դէպի կողք են թեքւած։ Այդ ցոյց է տալիս, պ. ճարտարապետի ասելով, որ այդ դռները յետոյ են կարւել պատից՝ նախկին պատուհանների տեղում։ Նոքա իրենց մեծութեամբ էլ պատուհանների չափով են։ Այդ շինութիւնը կրկնւած է Գագիկի շինած եկեղեցու մէջ։

Նկարագրելով բոլոր էական մասերը, փորձենք, հիմնուելով դարձեալ պ. թորոմանեանի ասածների վրայ, ցոյց տալ թէ ինչպէս էին դրսի պատերը միացել մի կողմից՝ չորս մայր սիւների հետ և միւս կողմից ինչ կապ կար սիւնազարդերի և մայր սիւների ու դրսի պատի մէջ:

Խնչպէս յատակագծից երեսում է, մայր սիւների և սիւնազարդերի մէջ՝ դէպի դրսի պատը դարձած կողմում, կան ութ քառանկիւնի տարածութիւն. դրսի պատի վրայ մայր սիւների համապատասխանող պատի մէջ դուրս ցցւած մասեր չկան, որ կամարների յենարան ծառայեն, ուստի բնական հարց է ծագում, թէ ճարտարապետը այդ ժժւարութիւնը ինչ եղանակով էր վերացրել, կապ հաստատելով պատերի, մայր սիւների և սիւնազարդերի հետՊ. թորոմանեանը այսպէս է բացատրում. եթէ կարկինով շրջան անցնելու լինինք եկնդղեցու կենդրոնից, կնկատենք, որ կարկինի ծայրը կպչում է արծիւների չորս սիւներին և սիւնազարդերի վերջի դոյդ սիւների ծայրերին, այդ շրջանն արդէն շատ բան է բացատրում: Արծւասիւներից դէպի սիւնազարդերը կամարներ էին անցրած, յինւելով արծւի և միւս խոյակների վրայ, այդ փոքրիկ ութ կամարները միացած էին իրար հետ մի ընդհանուր ուղղահայեաց պատով, որ զուգանեռական դրսի պատին՝ շրջափակում և միացնում էր ներսի սիւները: Սիւնազարդերի և ահա այդ պատի իրքն խարսխի վրայ յենւել է այն կամարը, որ միացնում էր դրսի պատը:

Արծւի սիւնը աւելի բարձր է քան միւները և այնքան, որքան սոցա իրար միացնող կամարները կապահանջէին: Ուստի երբ յայտնեցինք, որ արծւասիւները և միւս սիւները իրար հետ կամարով կապւած էին, պէտք է այդ երկրորդ կամարի սկսւածքը մի կողմից ընդունել անմիջապէս արծւի խոյակից, ինչպէս արդէն ձեզ ցոյց է տալիս, միւս կողմից յիշած կամարների գլխից: Կոլորածն սիւների կամարների պատկերը հետևեալն էր. աղեղներ, վրան կլոր պսակներ: Արծւասիւնը մայր սիւնի հետ կապւած էր զմբէթաթարթ կամարով, որով արծւասիւնից երեք աղեղ են սկիզբն առնում: Աւելի խօշոր զմբէթաթներ գոյանում էին արծւասիւների և միւս սիւների անկիւնաւոր խորշերի վրայ:

Եկնդղեցու պատուհանների թուի մասին կարելի է հետեւալն ասել. առաջի կարգում 27 հատ էին իւրաքանչիւր կամարում մի մի հատ, բացի հինգ դռներից և արենելեան քառանկիւնի մասից: Անպայման 32 է եղել կոլոր պատուհանների թիւը, դարձեալ անորոշ թողնելով արենելքի շինութեան մասը, իսկ թմբուկի պատուհանները հաւանական 16 հատ էր:

Մնում է մի դժւար հարց ևս լուծելու Ռւշաղրութեամբ քըն-նելով յատակագիծը, մեր աչքին է զարկում հետեւալը. մայր սեան հաստութիւնը ն, ն մետք է, հետն էլ հաշւած արծւասիւնը Արծւա-սիւներից կամար անցնելով դէպի սիւնազարդերն ու դրսի պատը, պիտի հարցնենք, ինչով էր լցրած արծւասիւնի յետեի 4—5 մետք ընդարձակ տարածութիւնը. Պ. Թորոմանեանը այսպէս է բացա-տրում. գմբէթը յենւած էր արծւասիւներից սկսւող շրջանաձև պատի վրայ, այնուհետև չորս մետք աղատ տարածութիւն էր մը-նում և այդտեղ անց էր կացրած մի կրկնայարկ, մի տեսակ զա-լերի, յարմարեցրած մայր սիւնից դէպի միւները անցրած կա-մարների զլիին. Պ. Տէր Սարգսեանը զրա դէմ առարկում էր ա-սելով. Նախ մայր սիւներն էին ծառայում գմբէթը կրելու և ոչ թէ սիւնազարդերը, հետեապէս գմբէթի շրջագիծը շօշափում էր մայր սիւների ներս նայող երեք քառորդ սիւները, ինչպէս ժա-մանակւայ ճարտարապետական արուեստի դիմութիւնն է հաստա-տում, երկրորդ. Երկրորդ յարկի կամ գալերի համար ոչ պա-տերում և ոչ էլ հաստ սիւներում չեն գտնեմ սանդուկներ, ու-րեմն որտեղից է եղել հաղորդակցութիւնը, ի վերջոյ գմբէթը իւր չափազանց լայն նստածքով, եթէ յենւած էր սիւնազարդի վրայ, ինչ հարկ կար այնքան հաստացնելու մայր սիւները:

Մենք ապացուցանում ենք, որ շինութիւնը ոչ թէ քանդել են արաբները. այլ որ նա վիշել է երկրաշարժից, և ենթադրա-բար ընդունում ենք՝ եթէ միւս հարեան եկեղեցիները կանդուն են մեացել, իսկ Զուարթնոցը վիշել է, այդ առաջ է եկել նրանից, որ շինութեան մէջ հաշւի սիւսալ է եղել. Երկու ճարտարապետների կարծիքներն առաջ բերելով, հրաւերում ենք ձեռնհասներին քըն-նել ինդիբը նաև այդ կողմից, որով շատ բան կպարզւի:

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՆՉՆԱՅԱՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Եինութեան համար գործ է դրւած հրաբխային կարմիր, գորշ և սև գոյնի քար, այն քարը, որ այժմ էլ գործ են դնում էջմիածնում և շրջակայքում կարեսոր շինութիւններում։ Քարահանքը ընկած է եկեղեցուց դէպի արևմտահիւսիս և մեծ դիրութեամբ ստացում է ցանկացած մեծութեան քարեր։ Բացառութիւն կազմում են սիւնազարդի խոյակներն ու խարիսխները, որոնք շատ գեղիկ բազալտ են, խիստ կարծր սև գոյնի ապակեայ բծերով։ Բացի այդ, գմբէթի և կամարների մէջ գործ են դրեւ հրաբխային չեշաքարը և պեմզա կոչւած քարը, որոնք բազմաթիւ ծակոտկենների չնորհիւ շատ թեթի են և կամարները չէին ծանրացնիւ։ Չեշաքարը շատ սովորական է էջմիածնի զներում, իսկ պեմզան, որքան ներկայում է յայտնի, գտնուում է միայն Արարատի փեշերի վրայ։ Սա աւելի է գործ ածւել մեծ կտորներով, նոյն իսկ մաքուր պատի մէջ, ինչպէս ցոյց են տալիս ծեփով ծածկւած կտորները։

Ընդհանրապէս մեծ իմամք և ջանք է գործադրւած եկեղեցու շինութիւնը կատարեալ կացուցանելու։ Սակայն եկեղեցին միայն այդ յատկութեամբ չէ աշքի ընկնում, Նրա շրջանաձեւ յատակագիծը, ներսի սիւնազարդը՝ բազմաթիւ պիլիսաստներով, սիւների գեղեցիկ խոյակները, մանաւանդ արծիւները, բացառիկ են ոչ միայն հայ եկեղեցիների շարքում, այլ ընդհանրապէս նաև բիւզանդական և հարեւան ազգերի ճարտարապետութեան մէջ, եկեղեցու կենդրնը ներկայացնում է հաւասարաթե խաչ—այն է քառակուսի տարածութիւն չորս շրջանաձեւ զուրս ընկած մասերով։ Կիսաշրջաններից երեքի վրայ շարւած էին վեցական սիւնի սիւնազարդերը, իսկ չորրորդը մեղանի յետնում ծածկւած էր բարակ պատով։ Եթէ այդքանն առանձին վերցնելու լինինք և սիւնազարդի փոխարէն պատեր երեսակայենք, այն ժամանակ կստանանք Հոփիսիմէի և էջմիածնի յատակագիծը միայն այն զանազանութեամբ, որ վերջիններիս խաչը արևելքից արևմուտք երկարացրած է և Հոփիսի-

մէն՝ եկեղեցու ներսում ունենալով կիսաբոլորակ, դրսի երեսից ներկայացնում է հարթ հաւասար պատ, ներս ընկած նիշերով:

Հէնց այդ էր եկեղեցու էական մասը. շրջապատի կողոր պատը, որ յաճախակի պիլիխաստրով մի տեսակ վանդակ է յիշեցնում, կարծես թէ յաւելւած էր բուն եկեղեցու վրայ: Թէ ինչպէս էր օրդանիքական կապը ներսի մասի և մանաւանդ գմբէթի հետ, կարելի եղաւ հաստատել պ. ճարտարապետների ջանքերով. բայց նոցա համար էլ անհասկանալի մնաց արևելեան կողմի քառանկինի շինութեան կապը:

Եկեղեցու կտուրը կորնթարթ էր և կարմիր կղմինդրով ծածկած: Կղմինդրի ձևը կամ տափակ էր, կողքերից առաւակիկներ կամ կիսաքանդակի նման, բայց բոլորն էլ շինւած են կորնթարթ: Փլատակներում գտնւած են քաղմաթիւ անվես և կոտրւած բեկորներ: Մի քանիսը մինչեւ անդամ ծայրում վերջանում են կենդանու և թուչունի գլուխներով: Կղմինդրը խիստ հաստ է և սկսակով բարակ և նեղ՝ գմբէթի նեղ մասին համապատասխան՝ գնարզ լայնանում է: Գտնւած են այդպիսի տարրեր ձևի շինւած օրինակներ: Ակնյայտ է, որ այդտեղ գործածւած կղմինդրը յատկապէս այդ եկեղեցու համար էին պատրաստւած:

Գմբէթը ըստ երեսյթին ներկայացնում էր մի տեսակ երկրորդ յարկ և անկասկած երկնակամարանման էր: Մտաքերենք Ասողիկի նկարագրութիւնը Գագիկի Անիում շինած եկեղեցու մասին. նա զարդարւած էր նուրբ քանդակներով, ունէր լոյս արձակող պատուհաններ, երեք դուռ և զմբէք խիս բարձր երկնանման գնեփ կերպարանով: Կաղականդացին էլ է յիշատակում կամարեր որի տակ ամփոփեցին Լուսաւորչի նշխարները: Եթէ անդամ շունենայինք այդպիսի վկայութիւններ, հաստանեղիւս չորս սիւները, նոցա իւրաքանչյուրի կողքին ընկած ժայռանման խոշոր բեկորները, ապա կամարների ներկայութիւնը, միջոց են տալիս ընդունելու, որ այդպիսի մեծ զանգւածի վրայ կանդնած պիտի լինէր համապատասխան լայնանիստ գմբէթ: Ցաւալի է, որ պեղման ժամանակ գմբէթի բեկորներ քիչ գտնւեցին, որ բացատրւում է փլւածքի եղանակով: Յամենայն դէպս գմբէթի ամբողջ ծանրութիւնը ըստ երեսյթին բացաւապէս ծանրացած էր չորս սիւների վրայ: Պատերը կանգնած էին ազատ իրանք իրանց համար և կտրի կորնթարթութեամբ էին միանում գմբէթի հետ. որովհետև պատերի ոչ մի մասում սիւների կամարակապի հետ միացող աղեղներ չկան և այնտեղ, որտեղ պէտք է բնականարար սկսւէին կամարների աղեղները, այնտեղ երկու սեան դիմաց մինչեւ անդամ դռներ են շինւած:

Գմբէթի ձեր մասին Ասողիկի հաղորդածը միանգամայն համապատասխան է ժամանակւայ ճարտարապետութեան մասին մերունեցած համացողութեանը: Հայոց եկեղեցիների գմբէթները՝ բարձր սրածայր վեղարները բազմանկիւնանի թմբուկներով, իրենց բարձր սրածայր վեղարները բաւական ուշ են ընդունել: Եւ որքան հին են գմբէթները, այնքան աւելի են յիշեցնում բիւղանդական գմբէթի կամարակերպ պատկերը: Զուարթնոց եկեղեցին խիստ շատ կողմերով ներկայացնում է բիւղանդական ճարտարապետական արւեստի տիպիքական կերպարանք, հենց այդ պատճառով էլ հիմնաւոր է ընդունել գմբէթի մէջ բիւղանդական ոճի արտայայտութեան:

Գմբէթի կազմի աչքի ընկնող մասերից անկառկած նշանաւոր էին մեր նկարագրած խոյակները չորս բարձրաքանդակ արծիւներով: Մեզ այնպէս է թւում, որ շինարար կաթուղիկոսը կամ ինքը ճարտարապետը, ցանկացել է դոցա միջոցաւ այլաբանական միտք արտայայտել: Եւ ուրիշ ինչ միտք կարող էինք այդտեղ նկատել քան աստուածային անսահման մեծութեան գաղափարի պատկերը, մարդկային ձեռքի շօշափելի ստեղծագործութեան մէջ: Հսկայական թռչունների լայն բացւած թևերի ուժգին թափը, որոնք չորս անկիւնում կանգնած երկրից երկինք էին ոլացնում երկնանման գմբէթը, կարծես պատկերացնում էր մահկանացուների ջերմ աղօթքների բարձր թռիչքը դէպի բարձրելոյ գահը:

Երբ այդ յանդուգն կերտածքը դիտում ենք, բնականաբար մեր մէջ հարց է ծագում: արդեօք մեր առաջ դրած կազմածքը նոր մատքի ինքնուրոյն ստեղծագործութիւն է, թէ, գուցէ, ճարտարապետը ընդորինակել է արդէն յայտնի ստեղծւած: Այդ հարցը տալիս ամենից առաջ մտաբերեցինք Եղեկիէլ մարդարէի նկարագրած զերբնական կառքը:

«Եւ նմանութիւն հաստատութեան ի վերայ գլխոյ գաղանացն իրքն զտեսիլ ական վանի՝ տարածեալ ի վերայ թեոց նոցա ի վերուաս Եւ ի ներքոյ հաստատութեանն թեք իւրեանց տարածեալ սաւառնէին ընդ միմեանս: և իւրաքանչիւր երկու երկու ծածկէին զմաքմին իւրեանց Եւ լսէի զձայն թեոց նոցա ի սաւառնէլն իրքն զձայն ջուրց բազմաց: և իրքն զձայն Աստուծոյ սաղալից¹⁾:»

Գաղանների գլխին և թեսերի վրայ տարածւած էր բիւղանդական պքանչելի գմբէթ և նոքա չորսթեեայ՝ երկերկու մարմիննե-

թին կպցրած, միւս երկուաը լայն բացած ռաւառնուամ էին Զուարթ-նոց եկեղեցու մէջ նոյն միտքն է իրագործւած. միայն զերբնական կենդանիների փոխարէն քանդակւած է թոշունների թագաւոր բարձրաթոփչ արծիւը. Յարմար գոյներով ներկելով նոցա մարմինները աւելի են բարձրացրն իրականութեան և կենդանութեան տպաւորութիւնը. Մանաւանդ եթէ ի նկատի առնենք այն հանգամանկը, որ այդ խոյակները աւելի մեծ են, ամբացրած էին աւելի հասա և բարձր սիւների վրայ, հետևապէս միւս սիւնազարդից բարձր էին և եկեղեցի մտնողի վրայ այնպիսի տպաւորութիւն պիտի թողնէին, թէ նոքա գմբէթն առած թոչում են վերե.

Մենք որոնեցինք, նաև դիմեցինք Պետերբուրգում բիւզանդական գեղարւեստով պարապող մի քանի մասնագէտների, արգեօք չէր գտնիլ այդ կոմպոզիցիայի նախատիպը կամ մօտաւորական գաղափարը. Կատարեալ նմանութիւն չդժանք ոչ նկարչական և ոչ էլ ճարտարապետական արուեստում. մասնաւոր հաշմատելու օրինակներ գտնւեցին: Կենդանակերպ խոյակներ, ինչպէս յայտնի է, շատ յարգի էին արևելեան ճարտարապետութեան մէջ. բաւական է յիշել Խորսապատի խոյակները եզան գլուխներով և Սուզայի սիւները ձիազլուխ խոյակներով: Բայց ճարտարապետութեան մէջ թոշունների խոյակներ չկարողացայ գտնել: Դրա փոխարէն մանրանկարչական և մողաքի արևեստի մէջ կան օրինակներ, որ ամենայն համարձակութեամբ կարելի է համեմատել մեր արծիւների հետ: Ասորական մի ձեռագիր աւետարանի, մէջ, որ այժմ գտնւում է Ֆլորենցիա քաղաքի Լաւրենտիինեան գրադարանում, կան Եւուերիստի կանոնները խորաններով զարդարւած: Չորս խորանների սեան խոյակները կենդանակերպեր են, մի զոյդի վրայ թոշուններ են, միւս զոյդի վրայ մարդու զլուխներ¹⁾: Այդ աւետարանը գրւած է 586 թուին: Յետոյ պատահում են խոյակներ թոշունի զլուխներից կամ ձկներից²⁾: Նաև հայերէն աւետարանների խորաններում պատահել է մեզ տեսնել խոյակներ աւետարանի չորս կենդանակերպի զլուխներով³⁾: Որով հաստատում

1) Համեմատիր Garrucci, storia dell'arte crist. 133. 1,2.

2) Այդպիսի օրինակներ կարելի է տեսնել Garrucci 425. 2. 455. 2. 456. 2. Համեմատիր նաեւ Դ. В. Айналовъ. Эллинистические основы Бизантийского искусства, СПБ, 1902, էջ 45.

3) Այդպէս է Յոհան Երզնկացու մերքով գրած աստուածաշունչ մեռագիր աւետարանի կանոնների նկարը. Տես մեր՝ Հисторія перевода Біблії на арм. языке, 1902, СПБ. էջ 424. 422.

է, թէ կենդանիների խոյակներ գործածելու միտքը գեղարւեստի մէջ գոյսութիւն ունէր:

Այսքան էլ յարմար չեն այնպիսի օրինակներ, երբ խոյակների վրայ իրեն զարդ գտնում ենք կենդանիների քանդակներ, որոնք փոխարինում են զասական խոյակի տերևների կամ ուրիշ օրնամենտ¹⁾:

Այդպիսի խոյակներ ամեննեին չկային զասական արւեստի մէջ, բայց որովհետեւ նոքա սովորական են բիւզանդական լաւագոյն ժամանակւայ գեղարւեստական յիշատակարաններում, —մի կողմ թողնելով Պարսկաստանի և Ասորենատանի արւեստը—արևմուտքում ինչպէս նաև արենելքում, ուստի պէտք է եղբակացնենք, որ Հայաստանում աշխատող ճարտարապետը օգտվել է արդէն պատրաստի ձևերով, աւելացնելով, շատ կարելի է, նաև իւր սեփական զիտեցածն ու տեսնդագործածը:

Թէ այդ այդպիս էր, ապացուցանուում է, երբ քննութեան առնենք միւս խոյակները իրենց խոյերով, մեղալներով և հիւսւածքներով, նոցա համար ես ի զուր աշխատեցի գտնել միանգամայն համապատասխան նախագաղափարներ, բայց կան առանձին մասների համանմանութեան ամենանիշտ օրինակների մէջ խաչեր, հիւսւածքներ, սոցանից մէկն ու մէկի զուգաւորութիւնը ոլորակի հետ. կամ կողովը պարզ արակի հետ, որոնք դարձեալ պատահում են ասորական և ռավեննական յիշատակարաններում Պրօֆ. Սարիթիգովսկին մեր խոյակների վերաբերմամբ այն միտքն է յայտնում, որ նոքա թէոդոսիան ժամանակւայ տիպն ունին, որ փոխութեան ենթարկւեցին Յուստինիսանի ճարտարապետների ձեռքով. Այդ փոփոխութիւնը արտայայտեց նրանով, որ ականֆի տերենների տեղ դրին կողովը և ոլորակների տեղ՝ կենդանիների. Իսկ ինչ վերաբերում է Զուարթնոցի խոյակներին նա կարծում է, որ նոքա բյատուկ տեղ են գրաւում Քանի որ օգտվել են հիւսւածքից, ուստի Յուստինիսանի ժամանակից հին լինել չեն կարող, իսկ

1) Այսպիսի օրինակներ են Ռավեննայի եկեղեցիների խոյակները. S. Vitale, Palazzo arcî Vescoville, մի անգամ էլ հանդիպում ենք վրացական մի եկեղեցու սեան վրայ (Dubois de Montprégeux, Voyage autour du Capcas, Atlas V, III pl. XVIII). Յուստինիսկուպուն յայտնեց ինձ. որ Կարսից դէպի էրգորում տանող ճանապարհի վրայ. քաղաքից ոչ հեռու, մի կիսաւեր եկեղեցու մէջ, կամարների վրայ ներսից կան քանդակւած կենդանիների մարմիններ:

որ դրա հետ միասին պահպանել են նաև ոլորակները, իմ կարծիքով, և զրակացնում է նա, ներկայանում են իրեն միակ օրինակ¹⁾։ Այն սակաւաթիւ օրինակները, որ համեմատութեան համար մեզ յաջողւեց գտնել, որքա են. մենք ունենք խոյակներ կողովներով. համարեա միանգամայն նման մերինի կողովին, սակայն առանց խոյերի, Ասորիքի Ցուրմանին եկեղեցում²⁾) կամ թէ խոյակներ խոյերով, արանքում մեղալիոնի մէջ փորագրած խաչ, բայց առանց կողովի, Էլ-բառան եկեղեցում³⁾): Համեմատարար փորք է այն նմանութիւնը, որ նկատելի է Ռավիննայի Ս. Վիտու եկեղեցու և Զուարթնոցի խոյակների մէջ, ոչ այնչափով, ինչպէս ասորական եկեղեցունն էր Սոցա նոյն խսկ օրնամենտների մէջ էլ խոշոր նմանութիւն կայ. Օրինակ, Էլ-բառահում կան կարնեղներ և նիշեր զարդարւած խաղողի թիւերով, ողկոյզներով, ճիւղերով, ինչպիսին գտնում ենք Զուարթնոցի աւերակներում:

Առ այժմ բաւականանում ենք մատնանիշ անելով այդ ակներն և խիստ մերձաւոր յարաբերութեան վրայ, որ նկատում է, նոյն խսկ մանրամասնութեան մէջ, ներսէսի շինութեան և ասորական, մասսամբ նաև Ռավիննայի եկեղեցիների մէջ, յետոյ մենք կը գառնանք այդ խնդրին, եկեղեցու ճարտարապետութեան ծագման մասին խօսելիս:

Մենք արդէն առիթ ենք ունեցել նկատելու, որ աշխատանքի ճարտարապետական կողմը, թէ ընդհանրապէս վերցրած և թէ մանրամասնութիւնները քննելիս, պարունակում են մեծ կատարելութիւններ. Ով առիթ չի ունեցել աւերակները տեղնուտեղը դիտելու, թող ուշադրութեամբ դիտի մեր ներկայացրած բազմաթիւ նկարները: Պատերի և սիւների քարերի կանոնաւոր և խնամքով տաշւածքը, զարդերի գեղեցիկ փորւածքը, կաթուղիկոսի անոււան մակագրութեան ճաշակալից ձեզ, մեղալիոնների, խաչերի, խոյերի և նոցա արտաքին կողմի տերեների քանդակների կանոնաւորութիւնը, կողովի հիւսւածքի և մանաւանդ արծիւների բնականութիւնը, մանաւանդ փոքր ինչ հեռանկար տեսաղութեան համար, ինչ հաշւով նոքա պատրաստւած են, այդ բուլոր միայն մի բան են ապացուցանում, որ շինութեան վրայ աշխատել են ժամանակւայ ամենալաւ ճարտարապետները: Զօրեղ տպաւորութիւն են թողնում նաև եկեղեցու զբուի հարուստ զարդերը. նուռ, ողկոյզ, որթ և թուփ, fleur d'Elis—Եղիսեան ծաղիկ—

1) Das Etschmidziner—Evangeliar, էլ 40.

2) Voguë. Syrie Centrale, pl. 136,1 (Tourmanin).

3) Voguë, pl. 47,3 (El-Barah).

կոչւած պքանչելի նուրբ փորւածըը, դռների զարդերը, մարդիկ մուրճը ձեռին աշխատելիս եղն., այդ բոլորը հաշւած էր կենդանացնելու մեռած քարը, Աստուծոյ տունը առատութեամբ ու կենդանութեամբ լցնելու, Երբ յիշնը, որ ևկեղեցին ներսից նկարւած էր, որ մոզակի գոյնզգոյն խաչեր և զարդեր ծածկում էին սեղանի գլուխը և դուցի նաև ուրիշ մասեր, որ ևկեղեցում կային հարուստ անօթներ և զգեստներ¹⁾, դժուար չէ երեակայել, թէ որքան զօրեղ էր նրա թողած տպաւորութիւնը ներսից և թէ դրսից, Այն ժամանակ ինքն ըստ ինքեան հասկանալի է դասնում բոլոր պատմազիրների միաբերան պքանչացումը և բացատրում այն բուռն հետաքրքրութիւնը, որ ննրկայում էլ զրաւում է բազմաթիւ այցելուներ բուլոր դասակարգերից և ազգութիւններից:

Հնումն էլ այլ կերպ չի եղել, Երբ նա բախտի սոսկալի հարւածից զլորելով, կիսակործան, աւերակ էր դարձել, նրան շարունակում էին այցելել և հայ և վրացի և տաճիկ և արար և յոյն Սոցանից մէկը կամ միւսը, ուղիղ այնպէս, ինչպէս ներկայ ժամանակւայ այցելուներն են սովոր անելու, պատերի ծեփերի վրայ գրել է իւր անունը, յիշատակ ապագայից, Աւերակ էր եկեղեցին, կործանւել էին շրջակայ ընակարանները, արմատից չորացել, աւազի տակ ծածկել էին ներսէսի կենդանացրած բուրաստաններն ու այգիները, մենաւոր այցելուները գալիս դիտում էին անցած փառքի այդ փլատակները և հեռանում էին ծանր խոհերի տակ, նոքա երեխ մնաց պէս հարցրել են, թէ ինչը կամ ովքեր են եղել այդ ճարտարանիւմ և փառահեղ ատերման պատճառը և ով գիտէ ինչպիսի բացատրութիւններ են տեսլ, Մենք էլ փորձենք այդ անել և մնր բացատրութիւնը տալ, որովհետեւ ինչ որ Մխիթար Այրիվանեցին և, անկասկած նրա հետեղութեամբ, Կիրակոս Գանձակեցին են հաղորդում, թէ տաճիկներն էին նրա կործանողը, շատ դժուար հաւատալի է, ինչու տաճիկները հայոց այնքան կանգուն և հոչակաւոր եկեղեցիները չէն պիտի թողնէին և այդ մէկը այդպէս հիմնովին կործանէին, այն էլ տամաներորդ դարում, Երբ Հայաստանում թուլացել էր արաբների իշխանութիւնը, Երբ թուլացել էր նոցա դէպի քրիստոնեաները տածած ֆանատիկոսութիւնը, Երբ Հայաստանում էին Բաղրատունի թագաւորները,

1). Եկեղեցու արեւելա-հարաւային փուլը մաքրելիս, կամարի փուշ մասից թափւել են ծալած. հող եւ փոշի դարձած գոյնզգոյն շորերի մը-նացօրդներ, որոնք լոյսի ազգեցութեամբ իսկոյն կորցրել են իրենց գոյնը, կատարեալ մոխրի կերպարանը ընդունելով.


Մենք սկսեցինք կասկածել Այրիվանեցու վկայութեան վրայ, ի նկատի առնելով, որ նրանից առաջ Ասողիկը հազորդելով եկեղեցու աւերը, տաճիկների անուն չի տալիս և, մանաւանդ, երբ սկսեցինք ուշադրութեամբ քննել աւերակների մի շարք մանրամասնութիւններ: Մենք տեսանք, որ շնութեան բոլոր քարերը, ի բաց առած աւազակոյտի տակ ծածկւած աննշան մասի, տարել են, պատերից չափազանց աննշան բան է ազատուել այդքան մեծ շնութիւնից: Սկսեցինք ուշադրութեամբ քննել յափշտակութիւնից ազատւած բեկորները. շնութեան ներսի լաւագոյն զարդը, որ անկասկած արծիններն են կողովաձեն խոյակներն էին, որ արծիններից և ոչ մէկի վրայ մարգկային ձեռքի աւերման ոչ մի նշան չկայ, նորա վեաւել են միմիայն իրենց սոսկալի ծանրութեամբ, մեծ թափով գետին գլորելով: Միւս խոյակներն, իրաւ է, աւելի են վեասւել, բայց ուշադրութեամբ նայելով, տեսնում ենք, որ դարձեալ բնական պատճառով վերեկց ներքեւ գլորելիս: Դողանից երկուուր վը-նասւածի ոչ մի հետք չունին. միւսների մնդալիոնների խաչը կամ կաթուղիկոսի մակագրութիւնը դարձեալ անվեաս են: Սոքա բարձր էին. աւերողների ձեռքը գուցէ չի հասել. դիտենք եկեղեցու միւս մասերը: Չորս հաստ սիններից մէկը Խաչիկ վարդապետը քանդեց, երեքի աւազից և փլատակներից մաքրւած մասը մեր աչքի առաջ է, ոչ մէկի վրայ չկայ մուրճի, բրիչչ հետք, ոչ մի քար տեղից չի հանւած, մինչև անգամ ծեփը անազարտ է մնացել: Խակ սեղանը իւր վրայի քարէ գլորոցով, սեղանի յետեի խաչածն աւաղաներ. մարդու աւերիչ ձեռք սոցա էլ չի կանչ. բաւական էր մի հարւած ջարդ ու փշուր անելու քրիստոնէական եկեղեցու շնութեան ամենանիրական մասերը. և սակայն այդպիսի հարւածի հետք չկայ: Միակ դիտաւորեալ հարւածը, ըստ երևոյթին, հասցրած է մարդակերպ բարձրագանդակների երեսներին, որոնք բոլորն էլ տաշւած են: Եթէ ընդունելու էլ լինինք, որ այդ թշնամաբար է կատարւած և ոչ թէ հէնց սկզբից այդպէս թողնւած, այդտեղ էլ աւեր և կործանում չի նշաբարում: Երեսը քերող թշնամին խիստ զգուշաբար է վարել. երեսից բացի, մարդու կերպարանքը անազարտ է, անվեաս են մազերը, միրուքը, ձեռփ գործիքները:

Այդ բոլորի հիման վրայ իրաւացի հարց է ծագում: միթէ քրիստոնէական եկեղեցին պղծողներն ու կործանողները իրենց աւերմունքի հետքերը չեին թողնիլ հէնց այնտեղ, ուր ամենից շատ է սպասում տեսնել նոցա թշնամութեան և անհամբերողութեան արտայայտութիւնը: Ուստի ես տրամադիր եմ եկեղեցու կործանումը բնական պատճառի վերագրել, այն է Արարատեան դաշտի, ինչպէս նաև ընդհանրապէս հայկական բարձրաւանդակի վրայ խիստ

յաճախ կրկնուզ երկրաշարժներին: Անկասկած է, որ եկեղեցու շինութեան մէջ խոշոր թերութիւններ են եղել. պատերի, սիւնադարդի և գմբէթի օրդանիքական կապը գժւարհականալի են: Շինող ճարտարապետը նախագաղափար չունենալով, իւր կերտուածքի մէջ հեշտութեամբ կարող էր արհնաստագիտական խոշոր սիսալ թոյլ տալ: Նոյն սիսալը կրկնել է Անիի ո. Գրիգոր եկեղեցու ճարտարապետը, ուստի այդ եկեղեցին էլ տասներեքերորդ դարում կործանւեց:

Վերջապէս կործանման եղանակն էլ աւելորդ փաստ է հաստատելու մեր ենթադրութեան հշմարտութեանը Եկեղեցին պատռել է ուղիղ մէջտեղից և հաւասար կերպով փուել զէպի չորս անկիւնը: Բազմաթիւ են Հայաստանի ամբակները, դարեր են սահել անցել նոցա զվարութիւնը, բնութեան արհաւիրքը խոշոր հետքեր են թողել նոցա վրայ. բայց Զուարթնոցի կործանումը սոսկալի է եղել. այդպիսի հիմնայատակ վլատակներ նոյն իսկ Հայաստանի հողի վրայ արտասովոր են: Մարդկացին ձեռքը անզօր կը լինէր և չէր ձեռնարկիլ այդպիսի գործի. միայն բնութեան ծածկւած ոյժն է ընդունակ մի հարւածով այդպիսի կործանումն առաջ բերելու:

Էջմիածնի միւս եկեղեցիները Զուարթնոցի հետ չեն վնասել, այդ հաղիւ թէ հակասի մեր ենթազրութեանը երկրաշարժի վերաբերմամբ: Զուարթնոցում ազգել է, բացի երկրաշարժից, նաև շինարարական խոշոր պակասութիւնը: Դազիկի եկեղեցին հնում մի անգամ ենթարկւել է կործանւելու վտանգի. ստիպւած են եղել մի քանի սիւներին կից յենարաններ դնել, որ սակայն երկար ժամանակով չի օգնել:



ՅՈՒՆԱԿԱՆԻ ԿԱՐՈՒՊԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐ

Ժ.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵԲԻԼ.

Կաթուղիկոսական բնակարանը տարածւում է եկեղեցու առևմտեան և հարաւային կողմերում: Խնչպէս եկեղեցու, այս բնակարանի վրայ էլ մեծ խնամք է գործ դրւած: բոլոր սենեակները սրբատաշ, խոշոր քարերով են շինւած և հաւանական կամարածածք էին, իսկ մի քանի սենեակներ նաև սիւնազարդ: Սորա քարերն էլ տարւած են. յափշտակութիւնից ազատ են մնացել միայն հողի տակ ծածկած մասերը, որ ամենաքարձր տեղում հասնում է միայն մօտ մի կամ երկու մեարի կամ փոքր աւելի:

Ամբողջ շինութիւնը կառուցած է եկեղեցու յատակի բարձրութեան վրայ. իսկ մի քանի սենեակներ արևմտեան կողմում՝ բլուրի սկսւածքում, ընկած են աւելի ցած. այդ կողմից սկսող աստիճանների մակերևութիւն համահաւասար: Շինութիւնը հեռակց նայելով, քառանկիւնի յատակազիծ ունի, մի կամ միւս անկիւնից ներս կամ դուրս ընկած մասով և մի նեղ երկար միջանցքով բաժանւած է երկու՝ արևմտեան և հարաւային բնակարանների:

Ա. Արեւմտեան բնակարանները, սերտ զուգորդւած սենեակներով, միջանցքներով և գահիներով բանում են քառանկիւնի մի տարածութիւն 60 մետր երկարութեամբ և 20 մետր լայնութեամբ: Այդքան տարածութեան մէջ կան երկու մեծ և փոքր սենեակ և երկու սիւնազարդ սրան: Սենեակների դասաւորութիւնը այսպէս է: Ամբողջ շինութիւնը ընկած է երկարութեամբ՝ հարաւահիւսիս, լայնութեամբ՝ արեւելք-արևմուտք:

Ա. Սկսնք հարաւահից: այդտեղ կայ մի ընդարձակ սրան, առևմտեան ճակատով դարձած դէպի միարանական խցերը, հարաւայից դէպի բաց դաշտը, հեռանկարում ունենալով պանչելի տեսաքան Արարատի վրայ. իսկ նրա արևմտեան և հիւսիսային կողմերում սենեակներ են: Այդ պատը ճակատի վրայ ունի չորս ամբողջ և երկու կիսախարիսմներ: սրանի ներսը, առաջի խարիսմները

հանդէպ, զանւած են երեք ուրիշ խարիսխ¹⁾: Այդ սիւնազարդ սըրահի հարաւային ճակատը այժմ ունի անտաշ քարերի մի ամենահասարակ պատ, որը ընդհանուր հոյակապ չինութեան հետ որեւէ կապ ունենալ չի կարող, պէտք է կարծել, որ այդ պատը յետոյ են շարեր Սրահի մեծութիւնն է 16×10 մետր:

բ. Սրահին կից կայ մի մեծ սենեակ, որի հարաւային պատը դարձեալ հաօարակ քարերից է շարւած: Այդ սենեակն հիւսիսային պատում ունի երկու դռւու. մէկով հազորդակցում է ա սրահի հետ, միւսով մի փոքրիկ սենեակի հետ: Այս սենեակի մէջ ուշադրութեան արժանի է այն, որ նրա արևմտահիւսիսային անկիւնում յարմարեցրած է մի անցք՝ այդտեղից ջուր գուրս թափելու համար:

գ. Սրահի հիւսիսային կողմում, բարակ պատով որոշւած կայ մի միջանցքանան աղատ տարածութիւն, որ հազորդակցում է դահլիճի, սրահի, մի մեծ և անմիջապէս յիշելիք երկու փոքրիկ սենեակների հետ:

դ. և ե. Միջանցքի արևմտեան կողմում են մի փոքր և մի աւելի փոքր և նեղ սենեակներ, որոնցից առաջինը՝ դ միջած է երեք գանով գ միջանցքի, բ և և սենեակների հետ: Վերջինս ունի մի դռւու դ սենեակից և արևմտեան պատում պատի միջից դարձեալ մի անցք ջուր գուրս թափելու համար:

զ. Վերոյիշեալ գ միջանցքից յետոյ գալիս է մի հոյակապ դահլիճն, որը տարածում է չինութեան ամբողջ լայնութեամբ: Անկասկած չինութեան ամենաէական մասը այդ էր, նրա հիւսիսային և արևմտեան պատերում հինգական կամարների ոտներ են բարձրանում, երկու զոյզը չորս պատերի անկիւններում դասաւրւած: Կամարների յենարաններից երեքի ճականները վերջանում էին զոյդ սիւներով, ինչպէս պարզ երեսում է պահւած խարիսխներից, իսկ անկիւնները մի մի սիւնով: Ուշադրութեան արժանի է, որ այդ յենարանները սենեակի մէջ բաւական առաջ են բերւած: Նոցա արանքները կազմում են առանձնացած նիշեր և այդ նիշերի յատակը մի աստիճան բարձր է ընդհանուր յատակից: Մենք գիտենք, որ ներկայում էլ հայկական գիւղական աներում, օդաներում և զարագաներում այդպիսի սպառուներ—բարձրութիւններ:

1) Մի հատ խարիսխ էլ կայ դահլիճի (գ) եւ սրահի մէջ ընկած պատի վրայ, մի ուրիշը ը սենեակում: աւելի խոշոր քան միւս չորսը: Այս խարիսխները յոնիական ոճով են, հրաբիսային քարից, հասարակ տաշւածրով: Մեզ չյաջողւեց որոշել սոցա պատկանելիութիւնը:

կան¹⁾ և հաւանական այդտեղ են հնում բազմել բարձի վրայ նըստելու արժանի մեծամեծները և իշխանները:

Դանիլին ունի երկու դուռ: առաջինը գ միջանցքից, երկուսը հիւսիսային պատի մէջ՝ դէպի մի փոքրիկ միջանցք և դէպի գ սենեակը: Կ—ր. Երկու սենեակ զանազան մնեութեամբ, դանիլին հիւսում: Երկուսի ամբողջ լայնութեամբ ընկած է մի միջանցք, որը չորս դուռ ունի դէպի սենեակները. Արենեւան մնե սենեակի անկրանում զանակը: Հանդիսարան զանիլին կածած և յատուկ դռնով նրա մի թռնիր: Հանդիսարան զանիլին կածած և յատուկ դռնով նրա հետ միացած սենեակի թռնիրը չէր կարող հաց թխելու համար ծառայել. Մենք կարծում ենք դրա բացատրութիւնը կարող ենք գտնել, եթէ դիմելու լինինը հայ ժողովրդի սովորութիւններին: Ամբողջ լինութեան մէջ ոչ մի տեղ կրակ վառելու և սենեակ տառացնելու յարմարութիւն չենք գտնում: պէտք է կարծել, որ այդ թռնիրը շինուած էր սենեակը տարացնելու համար և նա վառելուց յետոյ կամ բաց էր մոռում, կամ ժածկում էին ինչպէս ներկայ ժամանակիւայ շատ հայ գիւղական տները բուօփիները²⁾:

Այդքանով վերջանում է կաթողիկոսական տան առաջին կարգը, որին յաջրդում են թ—ծ սենեակներն ու միջանցքները՝ հիւսիսային մասում, որոնք բոլորն էլ ընկած են ցած, եկեղեցու ներքերի աստիճանների մակերեսոյթի վրայ և որոնց գասաւորութիւնն ու կատը երևում է յատակագիծ վրայ: Դոքա ունեցել են շարունակութիւն, բայց լաւ չի բացւած պեղումների ժամանակի:

Բ. Հարաւային օինուրիներն էլ են քառանկիւնանի տարածութիւն բանում և բազկացած են 15 մնե և փոքր սենեակները, դարձնեալ իրար հետ սերտ զուգորդած: Սենեակները բաժանուած են չորս կարգի, շախմատի տախտակի ձևով գասաւորւած:

1. Ինչպէս պարզ ցոյց է տալիս յատակագիծը, դէպի կաթողիկոսականը ընկած են ինն սենեակի. Առաջի զծի վրայ երեք սենեակ. աւելի փոքր սենեակներներ, աւելի մնե միջինը: Իւրաքանչիւր սենեակի մի դուռ ունի դէպի միջանցքը, իսկ միջինը՝ բացի այդ մի դռնով միացած է նրա յետնում գտնուած երկորդ կարգի միջին սենեակի հետ: Այդպիսով այդ երկու մնե սենեակները կազմուն են մի բնակարան:

1) Տես Փ. Տեր-Մովսիսեանց, Հայ գիւղական տունը, Վիեննա,

1894 էջ 83 եւ նկար 29. նոյն դերմաններէն՝ էջ 162. Fig. 132.

2) Հայ գիւղական տունը. էջ 79—81 եւ գերմաններէն՝ էջ 160.

2. Երկրորդ կարգի փոքրիկ սենեակների դռնները դուրս են գալիս մէկը դէպի հարաւ, միւտը՝ հիւսիս, դէպի եկեղեցու սրահը:

3. Նոյնը նկատելի է երրորդ կարգ սենեակների վերաբերմամբ, միայն սոցա միջի սենեակը երեք դուռ ունի՝ դէպի երկու սենեակները և դէպի չորրորդ կարգը:

4. Մինչդեռ շատ պարզ են նկարագրած ինն սենեակների թէ դասաւորութիւնը և թէ նոցա նշանակութիւնը, նոյնը չենք կարող ասել չորրորդ կարգի վերաբերմամբ։ Այդանդ արևմուտքից—արեւելք, դէպի եկեղեցին դարձած, գտնւում են չորս փոքրիկ սենեակ, որոնցից առաջի երկուում դռններ ունին դէպի եկեղեցու բակը, իսկ երրորդի գտնում դէպի արևելք, և ե բացւում էր մի ուրիշ խիստ փոքրիկ սենեակի, կամ նախագաւթի մէջ, որ նայումէ դէպի արևելք։ Առաջի երկու սենեակներ հաղորդակցում են մի մեծ Շինութեան հետ, որի մէջ երեք տարրեր երկարութեամբ պատեր կան, պատերի մէջ փոքրիկ քառանկիւնի անցքեր, որոնք քունգերի—խողովակների միջոցաւ, իբրև օդանցքի, հաղորդակցութիւն ունէին դրսի հետ, կարծես յատուկ օդանցքներ էին։ Այդպիսի օդանցքներ կան թէ այդ սենեակի հարաւային և հիւսիսային պատերի մէջ և թէ վերսիշեալ արևելեան փոքրիկ սենեակում։ Վերջապէս այդ անսովոր սենեակին կից ամենահարաւային ծայրում կայ մի սենեակ, կամ սրահ, միայն երեք կողմից պատով ծածկած և որի պատերի մէջ դարձեալ կան օդանցքներ։ Արևելեան կողմից երկու փոքրիկ սենեակը ընդհանուր քառանկիւնուց դուրս են և, ինչպէս ցոյց են տալիս ծայրի պատի փլւածքները, շարունակութիւն ունէին։ Դուցանից մեծ սենեակի մէջ կան և օդանցք պատերի խողովակներով, երեք ուրիշ օդանցք մէկը սենեակի հիւսիսային և երկուուր արևմտեան պատերի անկիւններում և մի վառարան—ընդարձակ բուխարի, կարծր քարի սալայատակով, հարաւային և արևմտեան պատի անկիւնում, բաւականաչափ դուրս ցցւած մասով¹⁾։ Արևմտեան օդանցքները համապատասխան օդանցքներ ունին հետեւեալ սենեակների արևմտեան պատերի անկիւններում։ Ինչպէս ցոյց է տալիս յատակագիծը, շմնութեան դէպի եկեղեցին դարձած մի ճակատի վրայ պահւած են կամարների վեց խարիսխներ, նոյնչափով որքան կաթուղիկոսական սրահի կամարներն էին։ Ի վերջոյ նկատենք նաև այս, որ եկեղեցու բակի և արևելեան երեք սենեակի

1) Դժբախտաբար փայտից պատրաստել տւած կլիշէի մէջ յի քանդակած ոչ այդ վառարանը եւ ոչ էլ գանիմին կից սենեակի թոնիքը։ Այդ թերութիւնը յատակագիծը կազմող պ. Թորոմանեանինը չէ։

մէջ ընկած է անորոշ մի փոս տարածութիւն, կամարների գծի ուղղութեամբ:

Փորձենք ընդհանուր հայեացք ձգել ամբողջ շինութեան վրայ և որոշել նորա մասերի նշանակութիւնը, Բացի Ա. մասի թ—ծզ սենեակ-ներից, միւսները ընկած են մի մակերևոյթի վրայ, սերտ կերպով իրար հետ միացած են և մի ընդհանուր յատակագծի արդիւք են: Այդ հաստատում են ամենից առաջ բոլոր պատերի միատեսակ հաստութիւնը, միանման արուեստը, յետոյ Ա. և Բ մասերի կամարների սաները և նոցա համանանութիւնը բատ հետարութեան, դասաւորութեան և թուրի:

Մենք հաւատացած ենք, որ կաթուղիկոսական տան շինութիւնը միայարկ էր և որ լոյսը ստացւում էր վերեկից, այսինքն կտրից: Եկեղեցու պատերի և գմբէթի մէջ մենք հաստատեցինք երեք կարգ պատուհան, այստեղ փոքր ինչ հարցը կատակածելի է և լուսարանութեան կարօտ: Քանի որ պատերից քիչ մաս են պահել, գուցէ դժուար է արագէս դրական կարծիք յայտնելը, բայց երբ հաշումի առնենք Ա. մասի դ, ը սենեակի և միջանցքի դասաւորութիւնը միւս սենեակների մէջտեղում, Բ մասի մէջի երեք՝ աւելի մեծ սենեակները, որոնք դրսի հետ յարաբերութիւն չունին, կարծում ենք, անհիմն չի լինի խնդիրը ընդհանրացնել և ասել. որովհետև այդ հինգ սենեակը անհրաժեշտապէս վերեկից պէտք է լոյս ընդունէին, հաւանական միւսներն էլ նոյն ձևով էին լուսաւորում Ժամանակի արւեստը հաւանական այդպէս էր. այլապէս մեր յիշած միակ սենեակները ուրիշ դասաւորութիւն կստանային: Որոշ չափով դարձեալ ենթադրական է, եթէ պնդելու լինինք, որ բոլոր սենեակները կամարածածկ էին. սակայն այդ բանին ապացոյց են գլխաւոր դաշտին կամարների, սրանի և միւս շինութեան ճակատի և Բ մասի չորս փոքրիկ սենեակների ոտները: Թէև այս էլ պիտի ատենք, որ Ա.-ի զ ե կ սենեակները, Բ.-ի միջի կարգի բոլոր սենեակները զուրկ լինելով կամարների ոտներից, կարող են եղաւ կացնել տալ, որ գուցէ այդ սենեակները փայտածածկ էին: Թէ Ա.-ի և թէ Բ.-ի սոսացի երեք կարգի բոլոր սենեակները սրբատաշ քարերով սալայատակած էին, բացառութիւն կազմում է Բ.-ի չորսրդ կարգը:

Ամբողջ շինութիւնը երկու մասի բաժանելով, մենք տրամադրի ենք Ա. մասը համարել կաթուղիկոսի կացարան, իսկ Բ մասը յատկացնել նրան շրջապատող եպիսկոպոսներին և վարդապետներին: Առաջին մասի մէջ մենք գտնում ենք խիստ լաւ դասաւորութեամբ մի ընդարձակ սրան, սիւնազարդ, երկու կողմից բաց, որ անհրաժեշտ է չոք երկիրների համար: Ընդունելով նրա մօտի մնջ

սենեակը սեղանատուն, փոքրիկ սենեակներից մէկը կծառայէր սպասաւորների համար, աւելի փոքրիկը լուսացարան, Ազա գալիս է հանդիսական դահլիճը, ներկայ հասկացողութեամբ՝ կից կարինետով և ննջարանով, ընդհանուր միջանցքով միացած: Անորոշ ենք թողնում կէս յարկով ներքե ընկած ք—ծզ սենեակները, Երկորորդ մասի մէջ գտնում ենք եօթ փոքր սենեակ, երկը կարգի մէջ, առանձին մուլքերով և 2 մեծ սենեակ իրար հետ միացած: Երրորդ կարգի միջի սենեակը ըստ յարմարութեան կարող է կողքի սենեակներից մէկի կամ միւսի հետ միանալ: Սուա 8 կամ 7 մարդու կացարան էին:

Ամենադժւարին է Բ մասի վերջին՝ չորրորդ կարգի շինութիւնները որոշել, արտասովոր օդանցքներով, վառարաններով և միջանկեալ պատերով: Այդ մասը առանց սալայատակի է: այդտեղ գտնւել են կարասներ լիքը հատիկներով, գտնւել են հորեր, ուրիմն ամենից բնականն է կարծել, որ այդտեղ էին մթերանոցները և խոհանոցը և հասկանալի կլինի թէ Արարատեան դաշտի պէս առաք երկորում ինչի էին ծառայում օդանցքները: Մեզ փոքր ինչ շփոթեցնում է ներսից կիսարոլորակ շինութիւնը¹⁾:

Այս տան յատակագծից մնաք կարող ենք շատ բան սովորել: Ո՞րքան շնչին և անհան է մեր գիտութիւնը մեր նախնիքների ըընակարանների մասին: Հայկական տան կլասիկ նկարագրութիւնը մինչև այժմ էլ մնում է Քաննոփոնի յիշատակութիւնը Քրիստոսից շատ դարեր առաջ, երբ հայերը ապրում էին ստորերկրնեայ հիւղերում, մի յարկի տակ անային կենդանիների հետ: Ուղիղ ինչպէս դեռ ևս մեր շատ և շատ գիւղերում: Պր. Մառը փորեց մեծանուն Անի մայրաքաղաքի մի փողոցը: Շատ այցելուներ գնացել տեսնել են մայրաքաղաքի հողակոյտի տակից հրապարակ հանած այդ անկիւնը: սարսափելի նեղ փողոցներ, փոքրիկ, խզուկ սենեակներ, մէջը մերը թոնիրներով, ծուռ, բարակ պատեր, անպէտք քարերից, առանց կրաշաղախի շինւած: Եւ ոչ մի մերձաւոր նմանութիւն

1) Երեւ կուրիոզ յիշենք: որ Խաչիկ վարդապետը այդ շինութիւնը յայսարարել էր Սահակ Պարթեւից շինած նապային եկեղեցի: վառարանով եւ օդանցքներով սենեակները կրակատներ: իսկ մեծ եկեղեցին Լուսաւորի դամբարան: Խնչ մեծ համբերողութիւն ներսէս Եհնողի կողմից, որ հին մատուռը, նրա կողքի կրակատունը իրար մօտ Թողելելով, անմիջապէս նոցա շարունակութեան վրայ եւ նոցա մեւով շինել էր իւր համար բնակարան եւ բոլորի կողքին այն հոյակապ եկեղեցին: Այս կուրիոզն էլ Խաչիկ վարդապետի յամառութեամբ պաշտպանւած մոթերիցն է եւ յատուկ խնդրել է իրեւ իւր միտք անպայման յիշատակել:

գեղեցկաշէն եկեղեցիների, հոյակաս՝ խնամքով զարդարւած պարիսպների և այդ ողորմնելի բնակարանների մէջ, որտեղ սենեակի յատակը աւելի ցած է քան փողոցը. ուղիղ ինչպէս թանոփոնի ժամանակի Հայկական անցած կեանքի այդ կողմը մնում է գեռ և թանձր քօղի տակ ծածկւած:

Ներսէսի տունը, ինչպէս նրա շինած եկեղեցին, անկասկած պէտք է դասել Հայաստանում չինւած լաւագոյն տների կարգին: Մենք տեսնում ենք, որ այդ շինութեան մէջ կայ ճաշակ—ապացոյց նրա սիւնազարդ դանիլիները, հաստատում սրբատաշ քարերի պատերը, կրաչազախով հիւաւած: Յատակագծի մէջ կայ որոշ, խելացի բարդութիւն, միացած մեծ յարմարութիւնների հետ: Տեսանկը թէ ինչպէս սիւնազարդ միջանցքներով միմնանց հետ միացած են երկու գլխաւոր բաժանմունքը, ինչպէս յարմարեցրած սենեակների հաղորդակցութիւնը և միմնոյն ժամանակ անջատ սենեակներ և բնակարաններ կազմած, ուր մարդիկ ապրում էին առանց իրար խանգարելու:

Ամբողջ Հայաստանում մինչև այսօր էլ, որտեղ չի գործում եւրոպական կրթութեամբ ճարտարապետ, փոքր քաղաքների և աւանների լաւագոյն համարւած մները ուղղակի զանցառութեան են տալիս մաքրութեան և կլիմայի յարմարելու անհրաժեշտ պայմանները: Ներսէսի տունը այդ կողմից գերազանց է. փոքրիկ սենեակների պատերի մէջ գտնւած ջրանցքները մաքրութեան էին ծառայում, իսկ սենեակների դասաւորութիւնը հէնց առաջի հայեցքից ցոյց է տալիս, թէ նոքա որքան նպատակայարմար էին Արարատեան դաշտի երբեմն անտառնելի շոքերին—բնակարանը դով պահելու և խստաշունչ ձմրան—քամիներից պաշտպանելու:

Շինութեան ամբողջ յատակը սալայատակած էր և պիտի կարծել, որ արևելեան սովորութեամբ ծածկւած էր թանգագին գորգերով: Եթէ ճիշտ է օդանցքների մասին մեր արած ենթադրութիւնը, պէտք է ընդունել, որ յատուկ ինսամք էր տարւում նաև ամբարւած մթերքների թարմ պահպանութեան համար:

Ի վերջոյ այր էլ նկատենք, որ խոհանոցի ուղղութեամբ, աւելի դէպի արենելք, և Խաչիկը, պասորից վերադառնալուց յետոյ, առաջ տանելով պեղումները, բացել է մի մեծ հնձան, բաւական նման այն հնձաններին, որ մինչև այժմ էլ շինում են հայ գինեւէտ գիւղերում: Այդ մասը չի մտել մեր յատակագծի մէջ:

ԺԱՌ

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Բ .

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ շինութեան քարերի մեծագոյն մասը կողոպտաւած է, իսկապէս բախտի շատ յաջող բերմոնք պիտի համարել, որ բացի սեպաման խոշոր արձանագրութիւնից, հայերէն և յունարէն գրերով քարեր գտնւեցին: Դոքա մի կողմից հաստատում են մեր պատմական և ուսումնափրութեան նախընթաց արդիւնքները, միւս կողմից կուան տալիս շինութեան վրայ աշխատող վարպետների մասին որոշ ենթադրութիւններ անելու:

ա. Սկսենք յունարէն արձանագրութիւններից: Ամենից առաջ պիտի ասենք, որ ձեմարանի բակում գտնւած խոյակների ներսէս կաթուզիկոսի անւան մակագրութիւնը՝ մեդալիոնների մէջ, հարստացաւ նոր օրինակներով: Այդ մակագրութիւնն է «NAPCOU»-Ներսէսի-խոյակի մի կողմի վրայ, միւս կողմի վրայ կամ խաչ կամ «ԿԱԹ[Օ]Ճ[ԱԿ]ՈՒ»-կարութիկոսի, հակառակ կողմի վրայ դարձեալ խաչ: Խնչակս առաջուց արդէն պ. Ստրիթիգովսկին արդարացի որոշել էր. մակագրութիւնները հաստատում են, այդ եկեղեցին Շներսէսի կաթուզիկոսի է շինեալ: (Տախտ. X, 2, 3):

բ. Եւ, եթէ գտնեէին կասկածողներ, այդպիսիններին կարող ենք ցոյց տալ յունարէն երկրորդ արձանագրութիւն ի լոյս հանած փլատակների տակից և որը դարձեալ յունարէն լեզով գրում է. «NAPCHC ΕΠΟΙΗΣΕ ΜΝΗΜΟΗΕΥΣΑ[ΤΕ]», որ բարգմանում է-Շներսէսի է շինեալ յիշեցէք: (Տախտ. XI, 7):

Երկար քառանկիւնի քար է $0,88 \times 0,36$ մետր մեծութեամբ, չքանակի պէս եղերած և ամենագեղեցիկ յունարէն զիխագրերով փորագրած: Մի աննշան պատռածք մի անկիւնումն է, աւելի շոշափելի վնաս վերջի ծայրում, որ պայմանական է դարձնում վերջի բառի ընթերցումը: Քարի հետ մէջտեղից մեր պատրաստած կլիշի վրայ միացած է մի քառակուսի խաչ, որը հին արձանագրութիւն-

ների մէջ սկիզբն է գտնուում, այն էլ ոչ առանձին քարով, այլ նոյն քարի վրայ, փոքր դիրքով փորագրած¹⁾:

Համարել միայն այդքանը շինութեան վրայ եղած արձանագրութիւն, դժւար է. նրա մէջ չկայ շինութեան տարեթիւ, և այլ մանրամասնութիւններ, որ սովորական են VII դարու եկեղեցիներում: Հաւանական նա պատուհանի կամ գոներից մէկն ու մէկի վրայի գրութիւնն է: Ուշադրութեան արժանի է, որ արձանագրութիւնը գրւած է անսխալ, գեղեցիկ և կանոնաւոր տառերով: կամ այն է, որ զրողը լաւ իմացել է յունարէն, կամ թէ նոյն իսկազդով յոյն էր: Սերէսոփ ասելով կաթուղիկոսը մեծացած էր յունական կրթութեամբ, համակրութեամբ հակւած էր դէպի բիւզանդական քաղաքակրթութիւնը և յունարէն արձանագրութիւնը միմիրայն հաստատում է պատմագրի վկայութիւնը: Հայաստանի սրտում կանգնեցրած եկեղեցու յունարէն գրութիւնը անծանօթ և անհասկանալի էին հայ ժողովրդին, հայ կաթուղիկոսը անհասկանալի յեզուն գործ է ածել միայն իւր ներքին տրամադրութեան հետնելով:

Բայց նա մտածել է նաև հայերի համար և ունեցել է հայերէն արձանագրութիւններ: Դոցանից երկուոց գտնւած են, մէկը պատի ժամացոյցի վրայ, միւսը միայն ընկոր է մի քանի տառերով:

գ. Ժամացոյցը մի մեծ քառակուսի սալ է, $1,26 \times 1,26$ մետր մեծութեամբ, մէջը շրջանաձև փորւած և տրամագծով երկու, վերեկ և ներքեփ մասերի բաժանւած ներքեփ մասում անցրած են տասներկու շառաւիզներ, ծայրերին շրջանաձև փորւածներով: որոնց հանդէպ փորագրած են ա. բ. գ. մինչև ծբ համարներ: Ժամացոյցի երկրորդ՝ վերեկ կիսում գրւած է Սաղմոսի հատեւալ տունը²⁾: (ԱՂ) ԱԼԹԵՑ(Ս) | ՑԵՆ | Ա(Ռ Տէ) | Ա(ՄԵ) | Ն | ԱԾՅ ՍՈՒ(ՐԲ) ³⁾ | Ի (ԺԱՄՄ) | ԸՆԴՈՒՆԵ(ԼԻ): Ով եկեղեցու մօտով անցնելիս դիտէր ժամերը, այդ գեղեցիկ խօսքերը նրան կյշշեցնէին քրիստոնէի պարտքը: ամեն ժամ յիշել Աստուծոյ անունը: Եւ յունասէր կաթուղիկոսը լաւ խրատ էր տալիս իւր հօտին, նրան հասկանալի մայրենի լեզուով: (Տախտ. XIV, 18):

1) Այդ խայը կայ Հ. Խացիկի լուսանկարի մէջ. իսկ այժմ արձանագրութեան քարի վրայ լկայ Արդեօք նա է յարմացրել. Թէ պեղման ժամանակ միացած արձանագրութիւնը գրանցուած է առաջին արձանագրութիւնը:

2) Սաղ. ԼԱ. 7. փոքր ինչ տարրեր է. «Ցաղօթս կացցեն առ Տէրամենայն սուրբք ի ժամ ընդունելի»:

3) Ինկատի ունեցած բնկորի տարածութիւնը կարելի է նաեւ սուրբք կարդալ:

դ. Միւս արձանագրութիւնը գրւած է համանման տառերով. առաջի տողում կան ՈՍ, երկրորդում Յ տառերը, երրորդ տողում Շ, որից որեփցէ բան հասկանալ չի կարելի, այլ ծառայում են իրրե ապացոյց, որ յունարէն արձանագրութիւններին կից եղալ են հայերէն գրւածքների Եթէ յունարէն գրող վարպետը հմուտ էր և քաջ գիտէր իւր արւեստը և լեզուն, բառացի նոյնը պիտի ասել նաև հայերէն արձանագրութիւն գրողի մասին:

Ե. Մարդակերպ բարձրաքանդակներից մէկի վրայ, ինչպէս յիշել է, կայ Յօհանա անունը Յունարէն և այս երկու հայերէն արձանագրութեան քարերի վրայ պահած են կարմիր ներկի և տառերի փորւածքներում՝ սպիտակ գոյնի հետքեր. ասել է Պոքա ներկւած էին, թէն անկասկած եկեղեցու դրսի պատի վրայ էին. ժամացոյցի տեղը հարաւային պատն է:

Այս հինգ արձանագրութիւնները հին, եկեղեցու շինութեան ժամանակից են և նոցա շնորհիւ մննք իմանում ենք հաստատապէս Շինող Ներսէս կաթուղիկոսի և ոմն Յօհան վարդապետի անունը, իմանում ենք, որ շինող վարպետները հաւասար հմտութեամբ կարողացել են փորագրել հայերէն և յունարէն լեզուններով գրութիւնների Անցնենք ուրիշ արձանագրութիւնների:

Սոքա գրւել են եկեղեցին աւերելուց յնտոյ, ամեն ազգի պատահական այցելուններից, որոնք ներկայիս սովորութեամբ պատերի ծեփիրը ծածկել են իրենց անյայտ անուններովի Այդ տեսակ ծեփիրով քարեր Խաչիկ վարդապետը հաւաքել է և պահում է արևմտեան կամարի բեկորի տակ. մի քանի գրութիւններ հարաւային կանգուն սեան վրայ են:

Ա. Դրան հարաւային սեան վրայ եղածները անձրեի աղդեցութիւնից մաշում են, կոտրտում և շուտով անհետ կլինին. Դուշա լուսանկարները պահած են:

Ա. 1. «Ես Զարեհ Փառոսին|որդիվ Վասպորակա|նեղի զիս յաղաթայիշեցէկ ես մնջաւոր եմ»: (Նկար XIV, 12):

2. Սորա տակը կար յունարէն դժուար ընթեռնելի գրութիւն, որը կոտրել, եղծւել է: (Նկար XIV, 10):

3. «Յովանէա»:

4. Արաբերէն գրութիւն, որ կոտրտում է:

5. Հայերէն գրւածք, որ եղծւել, անընթեռնելի է դարձել:

Բ. Նրեկ քառորդ սեան բեկորների վրայ:

1. «Ես շուշա»: (Նկար XII, 9):

2. «Ճ՛՛՛Ե ես . . . »: (Նկար XII, 9):

3. Վրացերէն գրութիւն, բաւական անորոշ, պրոֆ. Մառը կարդում է. «Ես քրիստոնեայ եմ գարձաւել»: (Նկար XII, 9):

4. Յունարէս կամ լատիներէն «PAT»:

դ. Երկը քառորդ սեան բնկորների վրայ:

1. «...թեամի սրբոյ Գրի... Բարսղին վաստ քահանի»:

2. «Ես Թողորոպ(ս) | իղի. որդիք.—յամամ¹) . . նից»:

3. «Ես Սամել մատուակ (կամ մատուակ) զծառայ սրբոյ Գրի-

գորի»:

4. «ԵՄարդիսա»:

5. «Ողոր Դաթաւ»:

6. «Ես սիմեոն քահանա | սիմա քհանա սերդիս | ես եմ ծառայ տանարիս (?)»:

7. «Թողորոս քահանի»որ կազմե...» ? Տ. ՃՇ :

9. Սորա վրայ կան երկու արաբերէն գրութիւն ես, որ չը կարդացւեց, լեզուն չիմանալու պատճառով: (Նկար XIII, 8, բովանդակում է 1—9 գրութիւնները):

դ. Մի տափակ քար է, զրան հայերէն, արաբերէն և ասորերէն գրութիւններ, երեսին իրար վրայ գրւած:

1. «Որք ընթեռնոյք զտիրուակ անարժան | ծառայ սուրբ եկեղեցւոյ յաղաւթօ յիշեցէք»:

2. «Զամբաս ծառա .. | Աստուծոյց: (Նկար XIII, 11, ունի 1, 2 արձանագրութիւնը):

ե. Դարձեալ սեան կտորի վրայ կայ արաբերէն գրութիւն: (Նկար XIII, 12):

Արաբերէն և ասորերէն գրութիւնները Պետերբուրգում պրոֆ. Մասն ու Բարտոլդը կարդացին: Ասորերէնի վրայ միայն արեգակի յիշատակութիւնն է որոշւում (Նկար XIII, 8), արաբերէնի մէկի մէջ. «Գրեց իլվաս, Եախի որդին, ալ-Կերաքի թող Աստուծ ների (Նրա մեղքերը):» Սորա տակը «(գրեցի) Եախիէ, իլ Արտեր «Թող Աստուծ մեղքերին թողութիւն տայց (Նկար XIII, 11), Երկրորդը. «Մուհամեդ (Թող Աստուծ ինայի նորան և նորա ընտանիքն) գրեցի այս 259 թուին (872—3 Ք. յետոյ): Էմիր իսա...» (Նկար XIII, 11):

Այստեղ յիշատակած անունները կարող են պատմական որևէ արժէք ունենալ, բայց գրութիւնները խիստ համառօտ են և ընդհանրապէս անշանակի: Մեզ չփոթեցնում են տարէթւերը և գ, 1, 8, 6, դ, 1 գրութիւնները: Եթէ ընդունելու լինինք, որ «ՃՇ» (150) և «ՃՇ» (155) հայոց թուական է, այն ժամանակ կատանանք 701 և 706 տարէթիւ, որ յիշեալ արաբական 872/5 թուականի հետ արդարացի կասկած

1) Կարող է կարդացւել նաեւ «յատատ»:

պիտի յարուցանի, թէ ինչպէս թոյլ կտային շէն և կանգուն եկեղեցում պատահական այցելուներին պատերի վրայ իրենց ուղածը խաղաղեցի. Միւս կողմից տեսնում ենք, որ նոյն իսկ եկեղեցու պաշտօնեաները, օրինակ Սամել ծառայ սրբոյ Դրիգորի, Սիմէոն և Սարգիս քահանայք տաճարին և Տիրուկ ծառայ սուրբ եկեղեցւոյ ամենայն հանգստութեամբ պատահական մարդկանց մօտ զրել են իրենց անունները. Մեզ չփոթեցնում է նաև ուրիշ հանգամանք և այդ զրերի ձևերն են. Մեր հասկացողութեամբ տասնումէկերորդ դարուց առաջ բոլորգիրը հայերին անծանօթ էր և յետոյ ստեղծւեց, իսկ այստեղ, ուղիղ ընդունելով յիշած տարէթւերը, գտնում ենք մի քանի զրեր բոլորգրով գրած ութերորդի սկզբում և իններորդ դարում. Այս էլ պէտք է տաեմ, որ զրութիւններ միայն մեր առաջ բերածները չեն, այլ անհամեմատ շատ են գտնւել, մանաւանդ սեղանի գզրոցի վրայ, բայց իսկամ վնասւած լինելով անընթեռնելի են. Ռուսերէն մեր աշխատութեան մէջ տարէթւերը համարել էինք անվիճելի. լաւ մտածելով և քննելով խնդիրը, տարակուսանքի մէջ ենք ընկել, և բարուց ենք համարում հարցը թէական թողնելի. Մեր հասկացողութեամբ կանգուն շէնքերի վրայ չէին թոյլ տալ այլնայլ գրութիւններ զրելու, հակառակը ապացուցանելու համար Զուարթնոցի օրինակը բաւական չէ:

Ուշագրութեան արժանի են տառերի ձևերը, տարէթւերով գրերը անպայման աւելի հին են, օրինակ, քան XIV տախտակի հ. 12-ի՝ Զարեհի գրութիւնը. Առաջիններում անցողական տառեր համարեա չկան, այլ հնագոյն երկաթագրեր են, թէն գեղագրութեամբ գրւած, իսկ վերջինում անցողական ժամանակի գրեր են.



ԺԲ.

ԳԵՂՄԱՄԲ ԵՐԵՒԱՆ ԵԿԱՄ ԶԱՆԱԶԱՆ ԻՐԵՐ.

1. Կաթուղիկոսական շինութեան, յատկապէս ամբարներում, գտնւել են մեծ թւով հորեր, հորած կարասներ, մեծ և փոքր, որոնցից չորսը հանւել են անվեաս: Սոցա մէջ գտնւել են հացահատիկներ, աւազ կորած և մի զանգւած, որ Հայր Խաչիկի մեկնութեամբ ձէթ է: Այդ զանգւածը վառւում է և անուշ հոտ ունի:

Ճարտարապետ Ք. Տէր Սարգսեանը ի նկատի առնելով զանգւածի անուշահոտութիւնը, ենթադրեց, որ կարող է պնդացած մարմինը մեռնի իւզ լինել: Նա մի փոքր մաս տարաւ Թիֆլիդ անալիգի ենթարկելու և իսկապէս հետաքրքիր էր ստուգել այդ կարծիքը:

2. Կաւեայ բազմաթիւ և բազմատեսակ ամաններ, ա. Ապակեածածկ անօթներ, որոնց նմանը մինչն հիմա էլ Պարսկաստանում կան առօրեայ գործածութեան մէջ բ. Ապակեայ բազմաթիւ կոռուսանք, որածայր կանթեզանման կերպաւորութեամբ: գ. Զանազան տեսակի ճրագներ: դ. Խունկ ժխելու փոքրիկ անօթներ, մի քանիսի վրայ կան գրութիւններ. «Զայասլ(η) ապս?: ե. Զանազան երկաթի մնացորդներ, որ իրեն կապոցներ սիւների, կամ գուցէ իրերը կախելու են ծառայել: զ. Խաչքարեր, զեղեցիկ փորւածներու:

3. Երբ պեղել են արեալահարաւային անկիւնը, մայր սեան բեկորի մէջ երեսացել է մի բաց տարածութեան մէջ լիքը փոշիացած զգեստների մնացորդներ, կանթեզներ և անհշան անօթներ: Այս մնացորդներն էլ, կարծում եմ, աւելորդ ապացոյց են, որ եկեղեցին իսկապէս երկրաշարժից է կործանւել, այլապէս այդ զգեստները և անօթները կողոպտած կլինէին:

4. Կաթուղիկոսական տան ամենավերջի, դէպի եկեղեցին դարձած ներքնայարկ սենեակի մէջ, Խաչիկ վարդապետը ի մի է

հաւաքել վերոյիշեալ բոլոր բնկորները, հետն էլ աւելացնելով շինութեան ամենանշանաւոր քանդակներից մասեր Այդ սեննեակը այժմ ժամանակաւոր թանգարանի գեր է կատարում: Ի միջի այլոց այդտեղ կան երկու մեծ խարիսխու Դոքա սովորական հրաբիսային քարից են, տաշւած են ոչ այնքան մաքուր, սակայն ձեր խիստ կանոնաւոր է և ըստ ամենայնի բուն բիւզանդական Այդ խարիսխն ները եղել են կրակում: հրդեհի ազդեցութեան ակնյայտնի հետքեր կան վրան: Թէ շինութեան որ մասում են գտնում դոքա հ. Խաչիկը չը ասում նոցա բարձրութիւնն է 0,82 մետր, լայնութիւնը 1,6 մետր:

Ի վերջոյ հարկ ենք համարում նկատել, որ մեր ծրագրից դուրս համարելով գտնւած իրերի մանրամասն նկարագրութիւններով:

Թէն ոչ այնքան յարմար տեղում, աւելորդ չեմ նկատում ամբողջ շինութեան մի մասն էլ այստեղ յիշատակել: Խօսելով եկեղեցու ընդհանուր յատակազդի մասին ասել էինք, որ շինութեան խարիսխը կազմում են բլուրի հիմքից սկսած ընդարձակ աստիճանները և անուշադիր էինք թողել այն նշանաւոր շրջապարփռավը, որ շրջափակում էր եկեղեցին իւր յարակից շինութիւններով: Այդ պարփռավը շինուած էր հասարակ անտաշ քարերով, չափազանց լայն նստածքով և, միանգամայն համապատասխան եկեղեցու բազմանկիւն կողմներին, ներկայացնում է կամնանաւոր շրջանի մէջ անցրած բազմանկիւն: Անկիւնների կամ կողմների թիւը որոշել զեւ չենք կարող, որովհետև հ. Խաչիկը այդ պարփռավը գեռ նոր է բանում, առ այժմ երեսում են միայն նրա երեք անկիւնը: Պարսպի և առտիճանների միջի շրջանաձև տարածութիւնը, մոտ 20 արշին լայնութեամբ, կազմել է եկեղեցու բակը, կամ գուցչէ նրա ներսի պարտէզը: Պարսպի միջով անցրած են քարից շինած ջրախողովակներ, իսկ բաց տարածութեան մէջ կան մի շարք հորերի հետքեր: Հիմքից սկսում է վեց արշին հաստութեամբ, ապա նեղանում է մինչև հինգ արշին և, մինչդեռ դրսից ամբողջովին քարից է, գէպի եկեղեցին նայող մասով հիմքից երկու արշին բարձր, շարւած է հում աղիւսից: Ուշագրութեան արժանի են մանաւանդ անկիւնների ժամանակաւոր դուրս ցցւած մասերը:

ԺԳ.

ՍԿԶԲՆԱՀՈՐՈՒԹԻՒՆ ՃԱՐՑԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ.

Հայոց ճարտարապետութեան տեսակէտից Զուարթնոց եկեղեցու աւերակների նշանակութիւնը շատ մեծ է: Մենք տեսանք, որ նայած քարերի յափշտակութեան, շինութեան ամբողջութիւնը կազմող ամենահական մասերը անկորուստ են և փոքր աշխատութեամբ կարելի է շինութեան ներսը թէ դուրսը՝ մինչև զմբէթը վերականգնել: Ստորև առաջ բերելիք ցուցակից կտեսնենք, որ եօթներորդ դարուց, Զուարթնոցին ժամանակով շատ մօտ, բաղմաթիւ չէն և անշէն եկեղեցիներ ունենք: Բայց մինչդեռ դոցա մեծ մասի սկզբնական և ներկայ պատկերի համանմանութեան վերաբերմամբ կարող են կատաձնենք ծագել, Զուարթնոցի նիւթը, թէն բեկորներով, փշրւած ու ջարդւած, մեր առաջն է միանգամայն անաղարտ, այնպէս ինչպէս շինող վարպետն է նրան պատրաստել. կեղծիք և փոփոխութիւն չկայ:

Եթէ ուշադրութեամբ դիտենք եկեղեցու յատակագիծը, ներքերի աստիճաններից մկան, զուգորդենք նրա հետ կաթուղիկոսական տան շինութիւնները, դիտենք մէկի և միւսի պատերի, սիւնազարդերի, բաղմազան քանդակների կատարեալ համաշափութիւնն ու համերաշխութիւնը, կնկատենք գրչի մի շարժում, ստեղծագործող մի միտք, Երբ դրա հանդէպ մտարերենք պատմութիւնը, յիշենք, որ շինութիւնը ընդհատումներով տևել է ոչ պակաս քան տասնուհինգ տարի, որ Հայաստանում, յատկապէս Արարատեան դաշտում, չէր մոռացւած արաբների առաջի արշաւանքից տարածւած սարսափը, որ շինարար կաթուղիկոսը ստիպւած էր ապաստան և ապահովութիւն որոնել Պօլում և իւր հայրենիքի ամրութիւններում, շինութեան գործը ուրիշներին թողնելով, այն ժամանակ միայն պիտի զարմանալ, թէ ինչպէս է պահպանել մեր չեշտած և հաստատած միատեսակութիւնն ու համաշափութիւնը գործի սկսւածքի և վերջաւորութեան մէջ: Հին ճարտարապետները ամենից առաջ հասարակ արհեստաւորներ էին, և միմիայն գործնական աշխատութեամբ և սեփական տաղանդով էին ընկերներից

առաջ անցնում և պատասխանատու գործեր ձեռք բերում: Նոքա
մի բարդ շինութիւն կառուցանելիս յատակագծեր, ֆասադներ,
կամարների, պատերի կայունութեան և անկայունութեան հաշիւ-
ներ են, նախապէս չէին կազմում. այդպիսի աշխատութեան մե-
ծագոյն մասը կենդրոնացած էր շինող ճարտարապետի մաքում,
նա էր հրահանգում աշխատաւորներին և մշակներին Ռւղիղ այդ-
պէս են գործում ներկայում էլ, եթէ շատերից օրինակ յիշելու
լինինք, Ալէքսանդրապոլ և Շուշի քաղաքների հմուտ վարպետները,
որոնք սակայն, դպրոցական վկայական չունենալով ձեռներում,
յայտնի օրէնքներով կաշկանդւած և սահմանափակւած են, մեծ
պատասխանատու շէնքեր կառուցանելու իրաւունքից զուրկ են և
չեն կարողանում արտայատել իրենց բնական ձիրքը: Զուարթ-
նոցի ճարտարապետը ինքնաբուս քանքար էր. նրա մաքի թոփչքը
ոչնչով կաշկանդւած չէր, նա արտօնւած էր և կաթուղիկոսից պատ-
ւէր ընդունած ոչ մի դժւարութեան, ոչ մի ծախքի առաջ կանգ
չառնել, շտապ և փութով չվերջացնել սկսւածքը, միայն թէ չի-
նած եկեղեցին կատարեալ լինի:

Ի նկատի առած մեր ակնարկած քաղաքական պայմաններն
ու շինութեան տեսողութիւնը, թէսական պիտի թողնենք այն հարցը,
թէ արդեօք շինութեան սկզբից մինչեւ վերջը նոյն ճարտարապետն-
է հակել, թէ, սթէ անձինք փոփոխել են, գուցէ փոփոխւողներին
ուղղութիւն և հրահանգ տւողը ինքը Շինող կաթուղիկոսն էր: Այդ
հարցը այնքան էլ կարենոր չէ. հիմնական է հետևեալ խնդիրը, ա-
ռաջին՝ թէ որտեղից են վերցրել չէնքի հիմնական ծրագիրը և երկ-
րորդ, ովքեր են եղել գիխաւոր և երկրորդական ճարտարապետ-
ները, արդեօք հայ մարդիկ, թէ Բիւզանդիոնից կամ հարևան եր-
կիրներց հրաւիրւած օտարազգիներ: Այդ հարցին պատասխանե-
լու համար ամենից առաջ կարող ենք մատնանիշ անել հայերէն և
յունարէն անսխալ և միատեսակ գեղեցկութեամբ փորագրած ար-
ձանագրութիւնների վրայ, տաճարի յատակագծի առանձնայատ-
կութիւնների վրայ, նրա զարդերի և ընդհանուր ոճի վրայ, բաղ-
դատերով այդ ամենը բիւզանդական ոճի հետ՝ լայն մաքով առած:
Եւ եթէ դրա հետ միասին ծանօթանանք հայկական ճարտարապե-
տութեան հետ այդ դարում, ի մի հաւաքելով այն չափազանց հա-
րուստ նիւթի գոնէ մի մասը, որ ճշտւած և հնարաւոր է, այն ժա-
մանակ ոչ միայն բաւականաշափ մօտեցած կինենք մեր առաջա-
ռքած խնդրի լուծմանը, այլ ընդհանրապէս կընդայինենք մեր գի-
տելիքը այդ շրջանի հայկական ճարտարապետութեան արւեստի
մասին:

Հայաստանը իւր աշխարհագրական դիրքի նորհիւ մեծ գեր-

է կատարել հին աղդերի պատմութեան մէջ և այժմ էլ ներկայացնում է չափաղանց հետաքրքիր ասպարէզ հնագիտական հետախուզութիւնների տեսակէտից Անցել են դարեր և ամենատարբեր ժողովուրդները այդ երկրի վրայով, անհետ չեն կորել վերջինների քաղաքակրթական արտայայտութիւնների նշանները Երկրի ամենաաղանաղան մասերում սփռւած են մեծ փոքր ըլուրներ, ամենահին, նախազատմական ժողովրդի գերեզմաններով, երբ մնաել ներին թաղելիս նոցա զարդարում էին բրոնձեայ և ոսկեայ ամենաալաւ զարդերով, զրաններով, ուլունքի շարաններով և հետները գերեզման դնում տեսակ տեսակ կաւեայ անօթներ: Ուրարտեան, Տուսպիան կամ Բիայնայի բնական ժայռերի կամ ամուր որձաքարերի վրայ զրած սեպաձև արձանագրութիւնները տարածուում են Վանայ լճից մինչև Սևանայ լիճը, Ուրմիայի լճից մինչև Մասուն՝ Խոլթ¹⁾ լեռոր և հանճարեղ ուսումնականների չնորհիւ օրէցօր աւաելի և աւելի բացայայտելով իրենց գաղտնիքները, պատմում են այն զօրեղ ցեղի և թագաւորների մեծագործութիւնները, որոնք հարաւում կոփու մղելով ասորական մեծագօր աշխարհականների դէմ, պաշտպանել են հայրենի երկիրը և միւս կողմից սփռւելով դէպի հիւսիս, նւաճել, ընկճել են այնտեղի ցաքուցրիւ փոքր ցեղերին, ամրոցներ, տաճարներ, դղեսակեր շինել, երկրի մշակութեան համար ջրանցքներ անցրել, օրինական կարգերի գիտակցութիւն մտցրել, Հայաստանի արևմտահարաւում ապրել է այժմ անհետ կորած հետիտական մեծ ցեղը, որ երբեմն կուի էր դուրս գալիս Եղիպատոսի թագաւորների դէմ և որի թողած հիէրոգլիֆանման արձանագրութիւններն ու այլ և այլ արձանները միայն ամենաավերջի ժամանակներս են սկսել ուշադրութեան առնել, ուսումնասիրել և նոցա բովանդակութեան ու գործածած լեզւի մասին հնարաւոր ենթադրութիւններ անել:

Այս անհետ կորած, և, միմիայն մարդկային խորաթափանց մաքրի ոյժով պատմական յիշատակարաններով վերակենդանացած ժողովուրդներին Հայաստան հողի վրայ յաջորդուում են ուրիշ մեծ աշխարհակալ ազգեր, որոնց կեանքն ու պատմութիւնը մեզ քաջածանօթ է, որովհետև նոքա նոր են, նոցա գործերը զրի են առնել և ապրում են մինչեւ այժմ: Դոքա են՝ պարսիկներ, յոյներ, պարթեներ, հոռվմայեցիներ, արաբներ և Միջին Ասիայի կիսա-

1) Ամենավերջի ժամանակներս է գտնւել Սասունի եկեղեցիներից մէկի որմի մէջ մի սեպաձեւ արձանագրութիւն, որը արտանկարւած է եւ ուղարկւած եւրոպա ի քննութիւն:

վայրենի ցեղերու Սոքա բոլորը, որոնց յաջողւել է ոչ միայն տիրել երկրին այլ և ժամանակաւորապէս հաստատել այնտեղ, թողել են Հայաստանում իրենց քաղաքակրթութեան հետքերը Մեր տեղեկութիւնները դոցանից իւրաքանչիւրի ընդհանուր քաղաքակրթական մասնաւորապէս ճարտարապետական արևեստում ցոյց տւած գերի նկատմամբ խիստ ցանցառ են և ցանկալի հետախուզութեան չեն ենթարկւած: Նոյնպէս պարզաբանութեան կարօտ է, թէ ինքը հայ ժողովուրդը ինչ դեր է կատարել այդ ազգերի ներմուծող քաղաքակրթական խնդրում՝ իրրե ընդօրինակող և թէ իրրե իւրացնող Օրինակ, մենք ունենք հայ Արշակունի թագաւորների դրամներ, յար և նման պարսիկ Արշակունիների դրամներին, կտրւած յունական փողերի հետևողութեամբ թագաւորների անւան և կոչման յունարէն գրութիւնով: Մենք գիտենք, որ Տիգրան Մեծի արքունիքում յոյն դերասանները ներկայացումներ էին տալիս և յոյն ճարտարապետներ էին հրաւիրում չէնքեր շինելու: Խոկ Արտաւազդ Առաջինը ինքն էր յունարէն դրամաներ գրում: Նախաքրիստոնէական ժամանակւայ, մի կողմ թողած Ուրարտեան շրջանի ոչ այնքան լաւ ուսումնասիրւած դղեակների աւերակները, Հայաստանում գտնւած յիշելու արժանի միակ ճարտարապետական շինութիւնը, Երևանից ոչ հեռու, հին Գառնի քաղաքի տեղում պահւած այսպէս կոչւած Տրդատի, կամ նրա քոյր Խորովագրուխտի պալատի աւերակներն են, որ իւր արտաքին քանդակներով, շինութեան ընդհանուր պատկերով ներկայացնում է հին Հռովմի ժամանակակից շինութիւնների կատարեալ ընդօրինակութիւն:

Ինչ խօսք, այս յիշատակած և ոչ մի դէպքում հայկական արւեստի արտայտութեան մասին խօսք լինել չի կարող: Դոքա բոլորը ընդօրինակութիւն են օտար գեղարւեստի, փոխ առնւած, ըստ ամենայնի բնատիպի համանմանութեամբ և ամենայն հաւանականութեամբ զիշաւոր աշխատողները հէնց իրենք օտարներն են եղել: Գոնէ մինչեւ այժմ մեզ յայտնի և երեան հանած փաստերի հիման վրայ, հայկական քաղաքակրթութեան ինքնուրոյն գոյութիւնը, գեղարւեստի ասպարիզում, չորրորդ դարուց առաջ առանել չենք կարող, որը որոշ, չօշափելի և ամբողջական պատկեր է ընդունում միայն հինգերորդ դարում: և այնուհետև դանդաղ ընթացքով, երբեմն ընդհատելով կամ խիստ դանդաղելով, երբեմն էլ համարձակ թափչքով ծաղկելով և գեղեցիկ պտուղներ տալով, շարունակում է մինչև տասնուհինգ, տասնուղեցերորդ դարի ըսկիցըները Այնուհետև սաստիկ խաւար է պատում հայ հողի վըքայ: բռնի գաղթականնութիւնները, տաճիկների հակաքաղաքա-

կրթական տէրութիւնը իւր անլուր բռնութիւններով ճնշում, ոչնչացնում է գեղեցիկի ազատ արևեստը և հայ լաւագոյն ոյժերը օտարին ծառայելով կորցնում են ինքնուրոյնութիւն և կորչում են մայր երկրի համար, զուրկ լինելով ազատ աշխատելու հնարաւորութիւնից:

Որովհետեւ յիշած դարաշրջանում հայ, ինչպէս և ընդհանրապէս նրան հարեսան միւս ազգերի մէջ շեշտում է մտաւորական շարժման մէջ յատկապէս կրօնական կեանքը, ուստի գեղեցիկ արևեստներն էլ ծառայում են ամենից առաջ եկեղեցուն, գրականութիւնը, բանաստեղծութիւնը, երաժշտութիւնը, նկարչութիւնը, մանրանկարչութիւնը և ճարտարապետութիւնը բոլորն էլ հայերի մէջ կրօնական-եկեղեցական են թէ բովանդակութեամբ և թէ արտաքին ձևով: Դարերի ոգին այդ էր. ուրիշ պահանջներ կամ չըկային կամ շատ թոյլ էին. հայերը, ինչպէս նկատեց, բացառութիւն չէին կազմում: Չորրորդ դարու սկզբում Հայաստանում հաստատած քրիստոնեայ եկեղեցին հայերի համար դարձաւ այն միացնող և ի մի ձուլող շաղախը, որ գաւառներով աւխարհներով, բարբառներով, ըստ մեծի մասին կիսանկախ մեծ և փոքր, իշխանութիւններով բաժան-բաժան հայ ժողովրդի տարրերին ի մի ձուլցի: Ընդհանուր ազգային եկեղեցին իւր զօրեղ կազմակերպութեամբ, ժողովրդին ցաւակից և ըստ ամենայնի բարձր բարոյական եկեղեցական վարչութեամբ ազգի միացման և այդ գաղափարի ամեն կերպ ընդհանրացման խնդրում այն դերը կատարեց, ինչ որ չէր կարողացել նոյն չափով կատարել երկրի թագաւորական իշխանութիւնը. Եկեղեցու ամենաղիխաւոր զէնքը այդ խընդրում քաղաքակրթութիւնն էր:

Հայ եկեղեցու սկզբնական կազմակերպութեան մէջ մեծ գեր են կատարել յոյներ և ասորիներ, հայերը նոցանից են վոյխ վարչական ձեռները, եկեղեցու պաշտամունքի արտաքին շատ կազմակերպութիւնը. «Վասն զի զդարութիւն զիտութեանս մերոյ եւ զիմաստ բանաւոր ուսմանց յաշխարհին Հոռոմոց ուսեալ եմ. եւ են իմ անդ ծանոթը բազում եւ ուսումնակիցը, այլ եւ զկերպարան նանդերձիցս զոր ունիմքս մե՞ անտի զնեմի. վասն զի եւ ոչ յայլ աշխարհի զտանի սա ուրեք բայց անդ. հարկաւորեմբ անտի զնել զայս ըստ ժամանակին պիտոյից» (Փարաբեցի. Վենետիկ. 4894. էջ 589, 590).

4. Յայտնի է. Դ. Փարաբեցու դրածը Գիւտ կաթուղիկոսի մասին. Արան պարսից արքունիքում մեղագրում էին, որ կապ ունի յունաց հետ. կաթուղիկոսը ցի ժխտում. այլ բացատրում է այդ կապի անհրաժեշտութիւնը. «Վասն զի զդարութիւն զիտութեանս մերոյ եւ զիմաստ բանաւոր ուսմանց յաշխարհին Հոռոմոց ուսեալ եմ. եւ են իմ անդ ծանոթը բազում եւ ուսումնակիցը, այլ եւ զկերպարան նանդերձիցս զոր ունիմքս մե՞ անտի զնեմի. վասն զի եւ ոչ յայլ աշխարհի զտանի սա ուրեք բայց անդ. հարկաւորեմբ անտի զնել զայս ըստ ժամանակին պիտոյից» (Փարաբեցի. Վենետիկ. 4894. էջ 589, 590).

զեցիներ շինելը, հետևապէս եկեղեցական ճարտարապետութիւնը Ասորիքից և Յունաստանից է մտել Հայաստան։ Զուտ գրական խնդիրներում այդ փոխադարձ յարաբերութիւնների հարցերը արդէն ենթարկւած են բազմակողմանի քննութեան և մշակման։ եթէ կան շուծւած կնճիռներ, բազմաթիւ մասնագէտներ զրադաւած են նոցանով։ նոյնը ամենահեռաւոր չափով ճարտարապետութեան մասին ասել չենք կարող իրաւ է, ճարտարապետութիւնը այն չափով չի արտայայտում ժողովրդի մտաւոր կեանքը, ինչպէս դրականութիւնը, բայց միթէ ճարտարապետութեան զարգացումը, նրա զօրեղ ու թոյլ կողմները ուղղակի հետեանք չեն ժողովրդի զարդացմանը, այդ ժողովրդի նուրբ կամ անկիրթ ճաշակի չափը չեն ցոյց տալիս։ Այդ մտքով որքան հետաքրքրական կլինէր, այս կամ այն շրջանի գրական շարժման հետ զուգահեռաբար ուսումնասիրել նոյն շրջանի ճարտարապետութիւնը, որով, անկասկած, աւելի կատարեալ կլինէր ժողովրդի քաղաքակրթական աստիճանի պատկերացումը։ Այդպիսի աշխատանքներ մինչեւ օրս չեն կատարւած և առ հասարակ հայ ճարտարապետութեան մասին շատ քիչ բան է գրւած։

Մենք այսքանը գիտենք, որ ինչպէս եկեղեցու ժամասացութիւնը ժողովրդին հասկանալի կցցուցանելու և քրիստոնէական վարդապետութեան ամենազիլսաւոր ազդիւրը՝ Ս. Գիրքը նրա ձեռքը տալու կարիքը ստիպեցին հայ լաւագոյն մտքերին ստեղծել հայերէն այրուքնեն, թարգմանել թէ Ս. Գիրք և թէ ծիսարաններ, ապա թարգմանականից գրական սեփական ստեղծագործութեան անցնել, այնպէս էլ իւրաքանչիւր քրիստոնեայ համայնք պէտք է ունենար ընդհանուր ազօթատում։ Ազօթատան յատակագիծը, յարմարեցրած ժամակարգութեան պահանջներին, պատրաստուած և արուած էր Ասորիքում և Յունաստանում, հայերին մնում էր բասարանների հետ շինութեան ձեւերն էլ փոխ առնելի Փանի որ, ինչպէս նկատեցինք, մինչ այդ Հայաստանում չի հաստատում հեթանոսական ժամանակւայ շինարարական ինքնուրոյն դործունէութիւն, հարկաւոր դէպքում էլ ճարտարապետներ դրսից էին հրաւիրւում, ուստի պիտի ընդունել, որ ոչ միայն ձեզ, այլ նաև առաջի եկեղեցի շինողներն էլ յոյներ էին կամ ասորիներ։ Այդ բանը զրականապէս հաստատում է Փաւմտուար իւր մի գեղեցիկ վկայութեամբ (Ե, դ, էջ 162)։ Պարսիկները Ազուանից Ուռնայր թագաւորի հետ միացած պատերազմ են դուրս գալիս հայոց և յունաց գէմի Ուռնայրը իւր զօրագնդին պատիրում է յոյներից աշխատել շատ գերիներ բռնել, որ տաննեն «ի դործ կաւագործութեան զաղացոս որմաշէնս պիտոյից մերոց քաղաքաց ապարանից

և այլոց պիտոյից»։ Հին գրական գաղատոս, ժողովրդական կալատօղ յունական բառը աւելի է հաստատում այդ միտքը։ Ապա հայերը փոքր առ փոքր աշակերտելով նոցա մօտ, ձեռք բերին ինքնուրոյնութիւն և զարդացրին բիւզանդական, լայն մտքով առած, ճարտարապետութեան լարւեստի մի ճիւղը, որ մասնագիտական գրականութեան մէջ յայտնի է նայկական ոն անունով։

Պեղումներ և հնագիտական հետախուզութիւններ ժամանակին շատ բան կարող են երևան հանել, այժմ ճարտարապետութեան սկզբնաւորութեան մասին պէտք է մեր ասելիքը սահմանափակենք դրականութեան մէջ պահպանւած ցանցառ տեղեկութիւններով։

Հնդհանրապէս հինգերորդ դարու պատմագիրները և կեղեցու շինութիւններ շատ քիչ են յիշատակում։ Բիւզանդը ամենից յառաջ յիշում է միայն Տարօնի Աշտիշատ քաղաքի մայր եկեղեցին, որի մասին համարեա միշտ գրում է «մայր եկեղեցեաց հայոց»¹⁾։ ապա նոյն տեղի՝ Մարգարէանոց կամ մատուռ Յովհաննու, և առաքեալների հանգիստը, կամ առաքելարանը²⁾, Նա յիշում է նաև եկեղեցի Աղուանքի Հարանդ գաւառի Ամարազ գիւղում³⁾, որ չինել էր Լուսաւորիչը և ուր թաղեցին նրա թռո Գրիգորիսին⁴⁾, ապա Աղրիանոսի եկեղեցին⁵⁾։ Դարանազեաց գաւառի Թորդան գիւղի եկեղեցին, որտեղ թաղել էին Լուսաւորչին և նրա յաջորդներին⁶⁾, Կաթուղիկէն՝ Վաղարշապատի մայր եկեղեցին և նրա մօտի Գայիհանէին և Հոփիսիմէի վկայարանները և Աղարակի եկեղեցին, որի մէջ կայծակնահար եղան Յուսիկի անարժան որդիքը՝ Պապ և Աթանագինէ։ Յիշում է վկայարաններ (187), կուսանոցներ (192) եւն., սակայն դոցանից ոչ մէկի շինութեան կամ ձեր մասին ոչ մի մանրամասնութիւն չի տալիս։ Նրա մի դարձւածը՝ սահմանը եկեղեցեաց (էջ 10), եթէ այն էլ կեանքից փոխ առած է, կարող է եղրակացնել տալ, թէ եկեղեցիկ սիւներ ունէին։ Աւելին չեն տալիս Դ. Փարպեցին, որը յաճախ յիշելով Վաղարշապատի կաթուղիկէն⁷⁾, և Աղաթանգեղոսը—որը պատմելով Լուսաւորչի

1) Փաւստոս Բիւզանդ. ՍՊԲ. 1885. էջ 7. 9. 52. 57. 44. 65 եւլն.

2) էջ 7. 52. 58. 59.

3) Սորա մասին տես Ճռաբաղ. 1859. էջ 538—542.

4) էջ 45. 5) էջ 9. 6) էջ 52.

7) Պատմագիրը Հայոց. Ա. Դ. էջ 44. 28. 29. 64. 122 եւլն.

մանաւանդ 187 եւ 196 երբ խօսր կա կաթուղիկէի վերանորոգման մասին Վահան Մամիկոնեանի ծեռքով։

հրաշալի տեսիլը և նկարագրելով տեսիլքում ցոյց տւած յատակազգիծը եւ ֆասադը, աւելացնում է միայն, որ թագաւորը, թագուածին, իշխանները, արք և կանայք բոլորը միացած բերել են քար, վէմ, աղիւ, մայր փայտ¹⁾։ ոչնչով չի բացաւրում, թէ այդ հաւաքւած նիւթից ինչպիսի շինութիւն կառուցին։ Առաջի որոշ տեղեկութիւնը գտնում ենք Կորիւնի մօտ Վահան Ամատունին, նրա պատմելով, Օշականում, Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի վրայ եկեղեցի է կառուցանում, տեսպով պահնչելի, տաշած քարերով քանդակւած—տաշածոյ վիմզք քանդակելով, և ի ներքնագոյն խորանին դարբոյն հանդիսան յօրինեալ—Այդ հանդիսար աւագ սեղանի տակ կամարակերպ ծածկոցով պահնաւած է մինչև այսօր, թէ եկեղեցին դժբախտաբար հնացած լինելով, 1874 թ. Գէորգ կաթուղիկոսը հիմքից նորոգել է, առանց հնութեան ձեզ պահպանելու։

Աւելի որոշ է գրում Սերէս պատմագիրը. Նրա ժամանակ Կոմիտաս, Եղի, Ներսէս կաթուղիկոսները, նոյն իսկ մասնաւոր անձինք, կառուցանում են Հայաստանի ամենափառահեղ տաճարները և պատմագիրը սոցա շինութիւնները համեմատելով հների հետ վկայում է, որ, օրինակ, Գայիանէի և Հոփիսիմէի հին շինութիւնները և կարի ցած և մթին—կամ—խրթին և մթին էին նոյն իսկ էջմիածինը, թէն չորրորդ դարում պարսիկներից կործանւելով, նորոգւել էր Ներսէս (Փաւաստոս), Սահակ (Եղնակ երէց) կաթուղիկոսներից և աւելի փառահեղ Վահան Մամիկոննեանի ձեռքով (Ղ. Փարագ.), սակայն առանձին շքեղութիւն շունէր, զուրկ էր գմբէթից և ծածկւած էր փայտեայ ծածկով, ինչ որ այժմ ամենաղքատ գիւղերում կարելի է տեսնել։ Հինգերորդ դարում մինչև իսկ Դուբին աթոռանիստ քաղաքում եկեղեցիներ էին շինում փայտեայ ծածկով և թշնամինները երկիրն աւերելիս, հրդեհում էին եկեղեցիները։

Պատմական այս բոլոր տեղեկութիւնները միայն մի բան են ապացուցանում, որ քրիստոնէական առաջի երկու դարում հայոց նոյն իսկ հանաւոր քաղաքներում եկեղեցիները ամենապարզ շինութիւններ էին, —մեծաւ մասամբ անտաշ քարից և փայտով ծածկւած։ Պատմութեան վկայութիւնը հաստատում են Հայաստանի մասին մինչև այժմ մեզ յայտնի հնագիտական հետախուզութիւնները։ Այդ երեսոյթը կարող է միայն այսպիսի բացատրութիւն ունենալ, որ, նախ, փառայեղ տաճարներ կառուցանելու պահանջ չկար. և երկրորդ, երկրի մէջ պատրաստած, հմուտ ճարտարապետներ

1) Աղաթանգեղոս. Թիֆլիզ. 1882. էջ 440.

չկային։ Վերջապէս, որովհետեւ արուեստի այդ ճիւղը առանձնապէս զարգացած չէր հարևան երկիրներում ևս Ուստի, երբ Հայաստանն անկախ էր և հարուստ, ունէր իւր թագաւորներն կամ հայազգի մարզպաններ, շիողեց լիշելու արժանի յիշատակարաններ, բաղդատելու ոչ միայն եօթից մինչև տասնեւմէկերորդ դարու շինութիւնների հետ, այլ մինչև անգամ հետեւեալ դարերի եկեղեցիների և վանքերի հետ, երբ Հայաստանը կորցրել էր ամեն մի անկախութիւն և շարունակ ենթակայ էր ամենատեսակ հալածանքների և աւարառութիւնների։

Այդ գրութիւնը երկար շտեց, գրականութեան զարգացման հետ անեց և զարգացաւ հայերի գեղագիտական ճաշակը։ Բագմաթիւ հայ երիտասարդներ ուսումնական նպատակով ճանապարհորդելով Ասորիք, Բիւզանդիոն մինչև Աղէքսանդրիա, հայ իշխանները շարունակ շիւելով Բիւզանդիոնի հետ, մինչև Խոտալիա հասնելով, շատ բան էին տեսնում և սովորում և ըստ յարմարութեան աշխատում ինչ հնար է տեղափոխել հայրենի հողի վրայ։ Վահան Մամիկոնեանը իջմիածնի կաթուղիկէն հիմքից նորոգում է և նրա մէջ վանահայր կարգում Ղազար Փարպեցուն։ Միթէ կարելի է կասկածել, որ իշխանին մղոյը յունական կրթութեամբ մնաւած Ղազարն էր, երբ եօթներորդ դարու պատմագիրը մի տեսակ արհամարհանքով մթին և խրթին է կոչում Գայիանէի և Հափսիմէի նախկին շինութիւնները, որտեղ ազօթել էին հայ թագաւորները և մեծանուն կաթուղիկոսները, այդ միայն ապացոյց է, թէ որ աստիճանի նրբացել էին ժամանակւայ հայի ճաշակը և մնծացել նրա պահանջները։

Եթէ նիւթեր շատ ժողովւին, գուցէ յաջողւի տալ հայ ճարտարապետութեան աւելի ամփոփ նկարագիրը, այժմ մենք կրաւականանք շօշափել միայն այն եկեղեցիները, որոնք կապ ունին մեր առաջադրած մասնակի խնդրի հետ։ Աւելորդ չեմ համարում յիշատակել, որ մի քանի մասնագէտներ հայ ճարտարապետութեան, յատկապէս նրա ծաղկման շրջանների մասին այս տեսակ կարծիքներ ունին յայտնած։

Հայաստանը շատ ճանապարհորդներ են հետախուղել, բայց երկար ժամանակ ուսումնականների քննութեան նիւթ ծառայել են գլխաւորապէս Փառանախայի Դիւրուայի և Տէքսիէի հրատարակութիւնները¹⁾ և դոցա տւած հնացած, ցանցառ և թերութիւններով լի

1) Dubois de Montpereux, Voyage aux tour du Caucase (1833—34), Paris, 1839—43, վեց հատոր եւ մի առջաւ. Texier.

տեղեկութիւնների վրայ հիմնւած եզրակացութիւններ են արել Եւրոպայի ականաւոր ուսումնականներ։ Այդպէս, օրինակ, գերմանացի Շնագէն¹⁾ միանգամայն համաձայնելով երկու ֆրանսիացիների հետ, ընդունում է, որ հայ ճարտարապետութիւնը սկիզբն է առել եօթներորդ դարում և իւր կատարեալ ծաղկման հասել է տասներորդում, Բագրատունի թագաւորների օրով Երկար ժամանակ իշխում էր այդ կարծիքը, մինչև ոռու մասնագէտ Կոնդակովը առանց որեւ հիմքի, սկսեց կասկածի ենթարկել հայոց հին եկեղեցիների թւականները և թ. Սարիժիգովսկին ճարտարապետութեան ծաղկման գագաթնակէտը յայտարարեց իններորդ դարը։ Աւելի նիւթեր ունենալով մեր տրամադրութեան տակ և ուշադրութեամբ քննելով մասնագէտների առարկութիւնները, կարող ենք մեր կողմից միայն այս ասել, որ չափազանց վաղաժամ է դրական կարծիքներ յայտնելը։ Հոիսիսիմէի շինութիւնը շատերի համար հայկական արւեստի կատարելատիպն է, ուրիշները առաջնութիւն են տալիս Անիի Մայր եկեղեցուն կամ Տիկոսին։ Հողի տակից հրապարակ հանւեց Զուարթնոցը և նա բնականաբար կարծիքների մէջ պէտք է որ յեղաշրջում առաջ բերի։

**

description de l'Arménie, la Perse et la Mésopotamie (1839), Paris, 1842, 2 հատոր. Եւ նորա Renseignements archéol. et géographique sur quelques points de l'Asie Mineur, de l'Arménie et de la Perse, sér. 2, XV, 26—38, 1841.

1) Schnaase, Geschichte der bildenden Künste III, էջ 555 եւն։ Համեմատիր նաեւ անգիտացի Fergusson, A history of architecture, London, 1893, I էջ 472 եւն։

Ժ.Դ.

ԵՕԹՆԵՐՈՐԴԻ ԴԱՐՈՒԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.


Կիբորձենք մի տեսակ ցուցակ կազմել այն եկեղեցիների, որոնք անպայման շինւել են կամ այդ դարում, կամ աւելի շուտ, կտանք նոցա մասին մեր ունեցած պատմական և հնագիտական տեղեկութիւնների համառոտութիւնը և գլխաւորների նկարները: Զուարթնոցի շինող վարպետների մասին հարց էինք դրել. այդ հարցի պարզաբանման տեսակիտից անհրաժեշտ է լաւ ծանօթանալ ժամանակակից շինարարական գործունելութեան հետ:

1. Վարօնիկէ Վաղարշապատի—էջմիածինը կառուցւած է Արարատեան դաշտի վրայ, երբեմն Հայաստանի մայրաքաջաք Վաղարշապատի կենդրում, հիմնարկւելով Լուսաւորչից և Տրդատ Բագաւորից Չորրորդ դարում պարսից Շապուհ թագաւորի զօրքը կործանում է Վաղարշապատը, միջի բոլոր շինութիւններով (Փաւաստոս, 146) և մի քանի տարի անց Ներսէս Մեծը հիմքից շինում է քանդւած եկեղեցիները (Փաւաստոս, 157, 158): Շատ չանցած ա. Սահակը Արդարի երէցի վանահայրութեան օրով, հարկ է տեսնում նորոգել Ներսէսի շէնքը¹⁾, իսկ Վահան Մամիկոնեանը նորից վերաշնում է հիմքից—հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շրքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց (Ղազար, 157)—և այնտեղ վանահայր կարգում Ղազար Փարպեցուն: Վահանի շինութիւնը թէն կոփածոյ քարով և հաստատուն պատերով էր, սակայն փայտեայ ծածկ ունէր և առանց զմբէթի էր: Այդ թերութիւնները եօթներորդ դարում լրացրեց Կոմիտաս կաթուղիկոսը, որը, ըստ Սեբէսոսի, «Վերացոյց և զփայտակերտա որբոյ կաթուղիկէին, նորոգեաց և զխախուտ որմոյն, շինեաց զքարայարկուն»: Այնուհետև էջմիածնի նորոգութիւնների մասին մինչեւ տասնուշինգերորդ դարը, կաթուղիկոսութեան այդտեղ վերահաստատւիլը,

1) Այդ տեղեկութիւնը տալիս է Եղիշակ երեցը հայոց կաթուղիկոսների անւանց ցանկին նկիրւած մի փոքրիկ աշխատութեան մէջ. տես. Սամուէլ երէցի Ժամանակագրութիւնը. Վաղարշապատ. 1893. էջ 267.

շատ բան չենք իմանում։ Սա, Օրբելեանի¹⁾ Ողբը կամ Անանիա
Նարեկացու Ներբողեանը²⁾ հնագիտական տեղեկութիւններով հա-
բուստ չեն։

Ինչ որ ամենավերջին դարերումն են աւելացել, բացի զան-
գակատնից, եկեղեցու արևմտեան կողմում, ոչ միայն ի վեաս հը-
նութեան են ծառայել, այլ ցաւալի ապացոյց են «օփնարար» կա-
թուղիկուների հաշակից զուրկ լինելուն։ Յիշենք արևելքից 1879
թ. յաւելեալ «թանգարանը», 1886 թ. եկեղեցու հին աստիճան-
ների փոխելը, որից յետոյ շինութեան հիմքը շրջափակել են ինչ
որ տգեղ և անճաշակ պատնէշով։ Աւելի հին, 1682 թվին են պատ-
կանում եկեղեցու հարաւ-հիւսիսում և աւագ սեղանի վրայ աւե-
լացրած փոքրիկ գմբէթները։ Պակաս ողբալի չէ ներսի անփառու-
նակ վիճակը։ Որքան զեղեցիկ կլինէր, եթէ եկեղեցին մնացած լի-
նէր իւր սկզբնական վիճակում, ինչպէս վահան Մամիկոնեանն էր
հիմնարկել և կոմիտաս կաթուղիկոսը լրացրել։



1) Ողբ ի ս. Կաթուղիկէն. Թիֆլիս. 1885։

2) Ներբողեան ի ս. Կաթուղիկէ եկեղեցի. Տուարադ. 1854։ Թիւ
լ-ժբ։

իսկ այդ ձեր, մեծ հիմք ունինք այսպէս երեակայնլու. խաչաձև յատակազիծ, արևելքից արևմուտք աւելի երկար ձգւած, քան հարաւ-հիւսիս, նման Հոփիսիմէին Խաչի թերը կազմել են քառանկիւնի տարածութիւնից դուրս ընկած կիսաբոլորակները, ասպիս կոչւած, որոնցից արևելեանը դրսից աւելի քիչ է երեացել, որովհետև խորանների պատերը ծածկել են նրա մասերը Արդարք Վահանի օրով եղել են միջի հաստ սիները, թէ կոմիտասն է քարեայ կտրի պատճառով աւելացրել, զժւար է ասել, Դրսից պատերի փաստակները աչքի ընկնող զանազանութիւն չեն ունեցել. միայն խարսիսի մօտ գտնւել են դուրս ցցւած երեք աստիճանները և վերեի անկիւնում եղերւած էր միատեսակ պարզ կարնեղով, Ամեն մի պատի մէջ բացւած էին երեքական պատռհան՝ մի տեսակ պատկերացումն Երրորդութեան գաղափարի, Մայր գմբէթը հին լինել չի կարող. Կօթներորդ դարում այդքան բարձր թմբուկով և որածայր վեղարով գմբէթներ չէին շինում: Նրա ըսկզբնական ձեր պէտք է մօտաւորապէս Հոփիսիմէի գմբէթի պէտք երեակայինք:

Այսքան համառօտ անցնելով Հայոց Մայր եկեղեցու նկարագրութիւնը, հետաքրքրուղներին կարող ենք մատնանիշ անել Էջմիածնի մաօին եղած բազմաթիւ համառօտ և ընդարձակ նկարագրութիւններից Շահիսաթունեանի, Ալիշանի, Գրիմի և մանաւանդ Լինչի աշխատառութիւնների վրայ¹⁾:

Մեզ յաջողւեց ձեռք բերել պ. Թումաննեանի մի խիստ յաջող լուսանկարը, որից և կիշէ պատրաստել տվինք²⁾: (Տես տախտակի ԽV):

Ս. Հոփիսիմէի եկեղեցին հիմնարկել է դարձեալ Գրիգոր Լուսաւորիչը Վաղարշապատ քաղաքի հիւսիս-արևմելեան կողմում (Ագաթանգեղոս 441), կոյսի և նորա երեսուն երեք ընկերունինների նահատակութեան տեղում: Գտնւելով Էջմիածնի տաճարի համեմատութեամբ արենեակիւսում, մօտ վերստ ու կէս հեռաւորութեամբ, իւր դարեսոր գոյութեան ընթացքում բստ ամննայնի վիճակակից է եղել Մայր տաճարին Նրան էլ չորրորդ դարում քանզեկ են պարսիկները և նորոգել է Մեծն Ներսէսը և ապա սուրբ Սահակը: Սակայն Եղնակ երէցի վկայութեամբ Սահակը այս և

1) Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի, 1842. Ա. էջ 44—255. Այրարատ. 209—229. Բիզանտիйскія древности էջ 42 և 1, II, III նկարներ. Ճամենի, I, էջ 228—544.

2) Պ. Թումաննեանը պատրաստել է բազմաթիւ նկարներ և մտադիր է էջմիածնի յատուկ ալբոմ հրատարակել.

Գայիշանէի շէնքերը աւելի հիմնաւոր է շինել, քան կաթուղիկէնտ Նա տեղից հանել է Գայիշանէի, Հոփիսիմէի և միւս կոյսերի լուսաւորչի ձեռքով ամփոփած նշխարները—և այս շինեաց զվկայարանն վիմատաշ, կոփածոյ քարամբը: Ինչպէս քանից յիշեցինք, սուրբ Սահակի շինած վկայարանները եօթներորդ դարում կոմիտաս կաթուղիկոսին դուր չեն եկել, որովհետև ցած և մթին էին և նա պարսից Ասպրուէզ-Խոսրով թագաւորի օրով, 618 թվան շինեց այն գեղեցիկ տաճարը, որ արդարացի կերպով ամեն մի այցելուի ուշադրութիւնն է գրաւում: Մեր յիշած օտարազգի մասնագէտներից ուսւ Ն. Պ. Կոնդակովը հնագիտական տեսակէտով, ընդդէմ պատմական փաստերի և եւրոպացի մասնագէտների կարծիքի, փորձում է մերժել եկեղեցու հնութիւնը¹⁾, Կոնդակովը տեղեակ չէր որ շինութեան վրայ կան Կոմիտաս կաթուղիկոսի երկու արձանագրութիւնները, մէկը արեմտեան պատի տակ դրսի ճակատի վրայ, զլիաւոր դռան վերել, քաջածանօթ Շահնաթունեանցի, Ալիշանի և ուրիշ հրատարակութիւններից, միւսը արենելեան պատի վրայ, ներսի կողմից, սեղանի կիսարոլորակ պատի մէջտեղում: Վերջի արձանագրութիւնը նախսկին նորոգողները կրածեփի տակ ծածկել էին և նորից բացւեց 1898 թւի վերանորոգութեան ժամանակ:

Առաջի արձանագրութիւնն է. «Ես Կոմիտաս եկեղեցապան սրբոյ Հոփիսիմէի կօշեցայ յարու սրբոյն Գրիգորի օհնեցի զանաց սրբոց վկայիցն Քրիստոսի»²⁾:


Երկրորդն է. «Քրիստոս Աստուած յիշեա զկոմիտաս օինոյ սրբոյ Հոփիսիմէի»³⁾: Եկեղեցին թեմեւ նորոգութիւնների է ենթարկել 1658 թ. Փիլիպպոս կաթուղիկոսի ձեռքով. 1898 թ. ներկայ Մկրտիչ Ա. կաթուղիկոսի օրով, իսկ 1790 թւին Դուկաս կաթուղիկոսը արեմտեան կողմից աւելացրել է դանդակատունը, որ միմիայն եկեղեցու տգեղութեանն է ծառայում:

1) Տես Ռյուսկիա древности, IV, էջ 56—57 եւ Ճревная архитектура Грузинъ էջ 7. պ. Կոնդակովը գրում է. «Հոփիսիմէի եկեղեցին լի կարող պատկանել այնպիսի հին ժամանակի. ինչպէս գրում է Դիւրուան». իսկ Դիւրուան պատմութեան վրայ հիմնած նրան վերագրել է եօթներորդ դարուն.

2) Շահնաթունեան. Ա. 264. Այրարատ 258. երկուսի մէջ էլ կան աննշան Թերութիւններ. որ սրբագրել է Արարատ Թերթի մէջ 1898. էջ 442:

3) Արարատ. 1898. էջ 444.

Պամագիրների միաձայն վկայութիւնը՝ Սևքէսս, Յովհաննէս կաթողիկոս, Ասողիկ, Վարդան ևն., կրկնակի արձանագրութիւնները, շինութեան ոճի հնութիւնը, որ միաձայն ընդունւում է եւրոպացի մասնագէտներից, միանդամայն անզօր են կացուցանում շինութեան հնութեան դէմ յարուցած ամեն մի կասկած։



Հոփիսիմէի շէնքը ընդունւում է հայկական ճարտարապետութեան տիպիքական արտայայտութիւն, որովհետեւ նա գաղափար է ծառայել Հայաստանի և Վրաստանի մի շարք նշանաւոր եկեղեցիների համար։ Նրա առանձնայատկութիւնները կայանում են հետեւելում։ Եկեղեցին դրսի կողմից ներկայացնում է փոքր ինչ արևմուտքից արևելք երկարացրած քառանկիւնի, ուղիղ, տափակ պատերով, համարեած թէ զուրկ է որեէ զարդից, եթէ ներքեի աստիճանները և վերներ բարակ պատկերը չհաշւենք։ Բայց այդ թւացող միատեսակութիւնը ամենազեղեցիկ կերպով ձեաւորւած է, նախ զոյդ զոյդ, ամեն մի պատի մէջ, ներս ընկած խոստչներով-ներշնորով, որոնք պատի մէջ մի տեսակ եռանկիւնիներ են կազմում, վերներ մասում աղեղնաձև վերջաւորութեամբ և, երկրորդ, ամեն մի կողմի պատր մէջտեղից աւելի է բարձրանում, և վերջանում սրածայր անկիւնով՝ թեք կտուրով, հակառակ


կողմից ես դարձեալ թեք կտուրներով է բաժանւած միջի բարձրացող անկիւնաւոր պատը։ Այդպիսով, առանց որևէ զարդի, միմիայն ուղիղ կամ թեք գծերի խաղերով, ստացւում է ճարտարապետական ամենալաւ կերտածքի զօրեղ տպաւորութիւն։ Եթէ ի նկատի առնենք նաև այն հանգամանքը, որ նիշերի ներս ընկած մասերը եկեղեցու գմբէթի յենարան սիւներն են փոխարինում, որ դրանով պատից սիւն ներս առնելով, հնար է գտննել պատը անշնորհ և ապարդիւն կերպով չհաստացնել, լիուվի կմբոնենք թէ որքան առողջամիտ և բնական գեղեցիկ ճաշակով օժտւած մարդիկ էին այդ շինութիւնը ստեղծագործող ճարտարապետները։

Մեզ հեռուն կտանէք, եթէ փորձէինք ցոյց տալ, թէ ինչպէս ժամանակի ընթացքում այդ սկզբնական միտքը հայ սկեղեցիների շնորհում փոփոխւել և զանազան ձեակերպութիւնների է ենթարկւել, բաւականանք յիշելու, որ այդ եկեղեցու նմանութեամբ Հայաստանում բազմաթիւ եկեղեցիներ են շինւել։

Էջմիածնի պէս մեծ է Հոփիսիմէի մասին եղած գրականութիւնը, դարձեալ զլիսաւորները նոքա են, որ յիշատակնեցինք առաջնի վերաբերմամբ¹⁾։

Մենք տալիս ենք նրա նկարը, օգտաելով Վահան Խրիմեանի լուսանկարից (Տես տախտակ հ. XVII):

3. Գալիխանէի եկեղեցին ընկած է էջմիածնից հարաւ, կէտքերստ հեռու։ Նրա հիմնարկողը դարձեալ լուսաւորիչն էր, նորու-



1) Schnaase, յ. տեղում, III, էջ 528—529. Lynch, I էջ 269. 270, Գրիմմ, բարտէզ III, Ալիսան, 256—244. Շանխառնեան, Ա. 256—275.

գողները Մեծն Ներսէս և ա. Սահակ, իսկ ներկայ շինութիւնը, չը հաշւած 1688 թւին Եղիազար կաթուղիկոսի շինած գաւկթը, կամ ժամանակում, ծագում է 680 թւից, հարկաւ ոչ առանց կարկատան-ների Օքինակի համար գիտենք, որ 1652 թւին Փիլիպպոս կա-թուղիկոսն է շինել Եկեղեցու խոնարհած գմբէթը և ամբողջ տանիքը:

Նրա յատակագիծը Ներկայացնում է բիւղանդական բաղկլիկ կոչւած ձեզ, երկար քառանկիւնի, ուղիղ պատերովի, արենեւան կողմում ապսիսը, կամ կիսաբուրպակ խորութիւնը, սեղանի հա-մար: Գմբէթը բարձրանում է ուղիղ կենցըռնում, քառակուսի տարածութեամբ չորս անկիւններում բարձրացող չորս հաստ սիւ-ների վրայ: Այս Եկեղեցին էլ միշտ յիշատակւում է կջմիածնի և Հոփիսիմէի հետ, հետանապէս զրական աղբիւրները նոյնն են¹⁾:

Սորա նկարը մենք տալիս ենք, օգտակարով մի ոչ այնքան յա-ջող լուսանկարից: (Տես տախտակ XVII):

Ուստերէն աշխատութեան մէջ այս երեք Եկեղեցիների նկար-ները չէինք տեսլ, ի նկատի ունենալով աշխատանքի մասնագիտա-կան բնաւորութիւնը, իսկ իւրաքանչիւր մասնագէտի համար դժւար չէր զրական ցուցմունքով գտնել իւր ցանկացածը: Հարցը բնականարար փոխում է, երբ ի նկատի է առնեն հայերի աւելի մեծ ընթերցողների շրջան:

4. Ալեքսանդր կամ Հայաստանի «Մայր» Եկեղեցին Մշոյ դաշ-տում, նախկին Աշտիշատ քաղաքում, այժմ Տէրըք գիւղ, Լուսա-ւորչի շինած ամենաառաջին Եկեղեցին էր: «Եղ անդ զհիմունս Եկեղեցւոյն և ուղղեաց սեղան փառաց Քրիստոսի: Զի նախ անդ արար սկիզբն տինելոյ Եկեղեցեաց, և ուղղել սեղան յանուն սուրբ Երրորդութեանն» (Ազաթ. 472) իրեն նախահիմն Եկեղեցի Փաւոտոսը յիշելիս, միշտ գործ է զնում և Մայր Եկեղեցեացն Հայոց դարձւածը: Այդ հանգամանքը, միացած Աթանագինէ Հայրապետի և Յովհաննու Մկրտչի նշանակութեանը (Ազաթ. 472) իրեն նախահիմն Եկեղեցի Փաւոտոսը յիշելիս, որ այդ Եկեղեցին ամենահին ժամանակներից հայ ժողո-վրդի ամենաամեծ ուխտատեղին է եղել: Սակայն որոշել այդ մեծ սրբավայրի զմուվ անցածները դարերի ընթացքում, թէ նա ինչ վերաշնուրութիւնների և վերանորոգութիւնների է ենթարկւել, դժւարանում ենք: Պատրաստի աշխատանք ձեռքի տակ

1) Գրիմմ, քարտ. VI, 2. Lynch, 270—274. Ալիսան, 244—244. Շահխարունեան, Ա. 275—280:

չունէինք, առանձին ուսումնասիրութիւն կատարելը մեզ հեռաւն կտանէք¹⁾:

Լուսաւորիչը շինել է և ուրիշ եկեղեցիներ —վերև մենք յիշատակեցինք Ամարասի վանքը, որը հիմնովին վերաշինել է անցեալ դարու ութսունական թւականներում, շատ պատմագիրներ միայն ընդհանուր խօսքերով են յիշում Նոյնապէս անորոշ և ընդհանուր առմամբ են յիշատակւած Ներսէս Մեծի շինւածները չորրորդ դարում:

5. Ս. Մեսրոպի եկեղեցին Օսական զիւղում, Վահան Ամատունին շինաց յատկապէս սրբի նշանարները նրա մէջ ամփոփելու համար, Այդ առաջի եկեղեցին է, որի մասին հաստատապէս լսում ենք, որ հէնց սկզբից սրբատաշ քարով է շինել (Կորիւն, 46): Այժմ նրա տեղը բարձրանում է 1879 թ. Դէռդ կաթողիկոսի կանգնեցրած յիշութիւնը և միայն պիտի ցաւել, որ նորը շինելուց առաջ հնի յատակագիծը և այլ մանրամասնութիւններ չեն պահպանել: Մեզ մօտ կայ այժմ հին աւերակի ջրաներկ մի էսկիզ, որ 1868 թ. Հոկտ. 11 նկարել է Խ. Յուսիկեանը, և 1903 թ. մեր Նոր Նախիջեանում գտնւած ժամանակ, մի շարք ուրիշ եկեղեցիների էսկիզների և յատակագծերի հետ մեզ տւեց ի պահպանի հարկին օգտակառ: Նկարից զժբախտաբար շատ բան հասկանալ չի կարելի: Նրա վրայ կան միայն պատերը, առանց կտորի, հարաւից երկու պատուհանով: Իսկ արենելեան ծայրում բարձրանում է աշտարականման մի շինութիւն, միջից երկու մասի պատուած: Պատի շարւածքը այնքան էլ կանոնաւոր չէ եղել, այն էլ ոչ խոշոր այլ մանր քարերով շարւած:

6. Դուինի ս. Գրիգոր եկեղեցին ըստ վկայութեան թովմայ Արծրունու շինել է Վարդան երկրորդ Մամիկոնեանը²⁾ քանդելով հին կրակատունը և գործածելով նրա քարերը: — Քանդեն, աւերեն զմնեանն և յատակեալ զտեղին, շինեն նորին քարամբը զմնե եկեղեցին զսուրը Դրիգորն ի Բլուր տեղուցն և փոխեն անդ զկա-

1) Հ. Ս. Էմերիկեան, Բնաշխարհի մէջ Աւսիւատի նկարագրում հաղորդում է, որ է. գարու կիսում Մամեդի քեռորդի Արդոււահիմը կործանել է այդ եկեղեցին: յետոյ Մամիկոնեանները վերաշինել են: բայց կրկին անզամ կործանել է Լէնկթէմուրը: Աւերակներն ունին 38×5 ոսք մեծութիւն: 8 ոտ հաստ պատերով:

2) Թովման այս դէպրում իսկապէս շփոթել է առաջին եւ երկրորդ Վարդաններին:

Քուղիկոսն Հայոց զԳիւտա . . 1): Այդ ազստամբութիւնը տեղի է ունեցել 571 թւականին²⁾: Սակայն պարսիկները նորից տիրնցին Հայաստանին և պատերազմի մէջ մտան յոյների հետ, որոնց հովանաւորութեան էին դիմել հայերը: Հայ և յոյն միացեալ գորքը պաշարնց Դուին քաղաքը, յաղթեց և առաջ քաղաքը, բայց հայերը փոխանակ ուրախանալու տրտմութեան մէջ ընկան: «Ղի զեկւողիցի որրոյն Դրիգորի, որ շինեալ էր մերձ ի քաղաքն, էին արաբեալ համբարանոցս պարսիկքն, հարին հուր և այրեցին»³⁾: Եկեղեցին այդպէս աւերակ վիճակում մնաց նաև երկիրը խաղաղւելուց յետոյ, որովհետեւ պարսիկները արգելք էին դառնումնրա վերաշնուրթեանը: Մինչև անդամ երբ Սմբատ Վրկան մարգապանը Արքահամ կաթուղիկոսի օրով պարսից թագաւորից հրաման ստացաւ և կեղեցին վերաշներու, պարսիկ բերդակալը խանգարում էր առարկելով: «Կարի մերձ է առ բերդն և վասակար առ թշնամին»: Առ այդ թագաւորը այսպիսի վճիռ է տալիս: «Բերդն քակեսցի և եկեղեցին անդրէն ինմին տեղուցն շինեացի»⁴⁾: Եկեղեցին վերաշինում են հիմքից, քարաշէն—«Ճողովկեաց ճարտարապետս բարի—և կարողանում են վերջացնել միայն կոմիտաս կաթուղիկոսի օրով»⁵⁾: Այդ եկեղեցին մօտաւորապէս Զուարթնոցի չափ տեսղութիւն ունեցաւ: և կործանւեց նոյնպիսի պատճառով: Խններորդ դարու վերջում, երբ կաթուղիկոս էր Գէորգ Երկրորդը, սաստիկ երկրաշարժը հիմնայատակ տապալեց այն շինութիւնը, որի վրայ աշխատել էին հայադրի ամենահռչակեալ մարգապանը և երկու կաթուղիկոս»⁶⁾: Իշխանանիստ քաղաքի և հայոց կաթուղիկոսարանի եկեղեցին երևի Հայաստանի անդրանիկ փառայնդ շինութիւնն էր և ամենայն հաւանականութեամբ մի օր եթէ կատարւեն պեղումներ՝ գեղեցիկ արդիւնք կտան:

7. Տեկորի եկեղեցին գտնւում է կարսի նահանգում և Հայաստանում պահւած հնագոյն, եթէ ոչ ամենահին շինութիւնների կարգին է պատկանում: Առաջին անդամ այդ եկեղեցու նկարագրութիւնն ու նկարը տևել է Տեքսիէն⁷⁾, բայց անկարող լինելով

1) Թովմա Արծրունի. էջ 78. 79:

2) Տես Զամեան, Բ. 284 եւլու:

3) Սերէոս, Գ. զլ. Ա:

4) Սերէոս, Գ. զլ. Ժէ:

5) Սերէոս, Ա. զլ. ԻՊ. «Առ սովաւ (Կոմիտասիւ) կատարի շինած եկեղեցւոյն սրբոյն Դրիգորի»:

6) Թովմա Արծրունի. Գ. զլ. 22. էջ 25:

7) Description de l'Arménie etc. I, էջ 120 եւ հետո:

արձանագրութիւնները կարդալու, դժւարացել է շինութեան ճիշտ-ժամանակը որոշելու Ամենալին թւականը, որ նա կարողացել էր գտնել իւր հայ թարգմանի օգնութեամբ 1248-ն էր Սակայն յետոյ Տեքսիէն քննելով շինութեան ճարտարապետական առանձնա-յատկութիւնները, նրա ծագումը աւելի կանուխ է համարել, ինն, մինչև անգամ եօթներորդ դար տանելով¹⁾: Դրա փոխարէն հ. Ալի-շանին յաջողել է ձեռք բերել շինութեան բազմաթիւ արձանա-գրութիւնները, ի լոյս ածել իւր Շիրակ և Այրարատ գործերում²⁾ և դոցա մէջ հիմնարկութեան արձանագրութիւնը, Ալիշանի աշխատութիւնները եւրոպացի մանագէտներին զիւրամատչելի շի-նելով, դժբախտաբար անծանօթ են մնացել և սոքա շարունակում են օգտուել միայն հին նիւթով: Այդպէս անդդիբացի Ֆիրզուտոնը ես-իւր հոչակաւոր Շմարտարապետութեան պատմութիւնը գրքի մէջ կանգ առնելով Տեկորի եկեղեցու վրայ, միմիայն հնագիտական հիմունքներով եկեղեցին համարում է եօթներորդ դարու շէնք և դրան է յայտարարում հայ ճարտարապետական ոճի տիպիքական արտայայտիչը³⁾: Ալիշանի մօտ հրատարակած թւականներով արձա-նագրութիւնները պատկանում են 971—1042 թւերին, իսկ շինու-թեան արձանագրութիւնը անթւական է:

«Ուրանայ եւ Հոռո... եպիսկոպոսի եւ Տ. յրանի Տեկորոյ վա-նաց երցու եւ Մանամայ հազարապետի հիմնարկեցաւ տեղիս ի-ձեռն Յոհանու հայոց կարօղիկօսի եւ Յոհանու Արօրունեաց յիւր բարեխաւսութիւն եւ բոլոր ազգիս եւ ամսանի եւ որդեկաց եւ սիրելեաց եւ սրբոյ Սարգսի. Սանակ Կամսարական սինեաց զայս վկայարան»⁴⁾:

Ալիշանն ընդունում է, որ Սահակը ներսէն և Հրանատ Կամ-սարականների, Վահան Մամիկոննեանի քաջ ընկերակիցների երէց եղբայրն է և Յոհան կաթուղիկոսը Մանդակունին է, հետեապէս շի-նութիւնը պատկանում է հինգերորդ դարու վերջին նա կարծում է, որ Մանանի փոխարէն Վահան (այսինքն Վահան Մամիկոննեան) պիտի կարդալ Գալուստ Տէր Մկրտչեանը Սահակի անւան վերա-բերմամբ համաձայն է հ. Ալիշանի մեկնութեան հետ, միայն սխալ է համարում Վահան և Մանան անունների նոյնացումը, որովհետե-վահանը Հայաստանի հազարապետ չի եղել: Դրա փոխարէն Վա-

1) Architecture Byzantine, էջ 474:

2) Շիրակ. էջ 426—451—453 եւ Այրարատ. 428:


3) A history of Architecture, I, 466—468.

4) Շիրակ 452:

հանի ապստամբութեան ժամանակ Հայաստանում մարզպան էր պարսիկ Վեհնամը և ապստամբութիւնից առաջ բնակում էր Շիրակում, ուրիշն Տեկորի մօտ Ահա այդ Վեհնամը կարող է Մանան անուան տակ թագնւած լինել¹:

Խնչպէս հ. Ալիշանն ու Տէր Մկրտչեանը, մենք էլ այն կարծիքի ենք, որ այդքան խիստ կարենոր արձանագրութիւնը—որ ճշտուելու դէպքում մեր ձեռքը հասած ամենահին հայ գրերը կլինին, անհրաժեշտ է անպատճառ լուսանկարով հրատարակենք:

Եկեղեցու յատակադիմը, որ հ. Ալիշանը տպել է Այրարատի մէջ (128) և եկեղեցու մի քանի տեսարանների հետ նաև Շիրա-



4) Գ. Տէր Մկրտչեան. Անանիս Շիրակացի, Յաղագս հարցման եւ լուծման, Յառաջ. էջ 46. 47 Ժանօթ: Վեհնամի մասին տես Դ. Փարպեցի: 448. 464. որի անւան մեւը նոր հրատարակիչները մի անդամ Վեհնվենամ են կարդում, միւս անդամ Վեհն-վենամ, առանց որեւէ բացարութեան:

կում, ներկայացնում է երկար քառանկիւնի բազիլիկ ձեր, արենելու եան գուրս ընկած կիսաբոլոր մասով, Բայցի այդ եկեղեցու երկու աւանդատները կամ խորանները, հարաւ և հիւսիս պատից դուրս են ցցւած և միացնում են եկեղեցին երեք կողմից շրջափակող գալերիայի հետ, ուղիղ այնպէս, ինչպէս Օձունի եկեղեցին է։ Միջում բարձրանում են չորս չափազանց հաստ սիւներ։

Մենք տալիս ենք եկեղեցու նկարը, օգտական հ. Դարրիէլ Նահապետեանի լուսանկարից¹⁾։ (Տես տախտակ ՀХIII)։

8. Բազարանի եկեղեցին, որին տեղացի բնակիչները անւանում են Թէոդորոսի եկեղեցի գտնուում է Ախուրեան կամ Արփաչայ գետի աջ ափին, Արաքսի խառնարանից մօտ երկու ժամ հեռաւորութեան վրայց²⁾։ Դորա վրայի գլխաւոր արձանազրութիւնը առաջին անգամ հրատարակեց պրոֆ. Մառը։ Արձանազրութիւնը գոտիի պէս շրջափակում է եկեղեցու վերեի մասը, երբեմն մի, երբեմն երկու տողով, թէն արձանազրութիւնը վեաւած է, բայց պահւած է թւականը, եկեղեցին հիմնել է բուղը, Արովեղեանի մեծ իշխանը, որը չվերջացրած մեռնում է, իսկ նրա կին Աննան գլուխ է հանում շինութիւնը, եկեղեցու հիմքը ձգւել է Խոսրով Փարվեզի թագաւորութեան 34-երորդ տարում, իսկ վերջաւորութիւնը եղել է Վարագ-Ծիրոցի մարզպանութեան օրով Հայաստանում, այսինքն 624—631 թւերին։

Այդ եկեղեցու նկարը մենք տալիս ենք օգտական պ. կ. Օհանջանեանի լուսանկարից, Լսելով որ նա Շիրակի հնագոյն եկեղեցիների լուսանկարներն ունի, դիմեցինք նորան Թիշինն (պարոնը կոնսիստորիայի քարտուղարն է) և նա սիրայօժարութեամբ մեզ ուղարկեց իւր ունեցած օրինակները։ (Տես տախտակ հ. ԽVIII)։

9. Նախնավանի ս. Ստեփաննօս եկեղեցին գտնուում է զարձեալ կարսի նահանգում, համանուն գիւղի մէջ։ Պատմական տեղեկութիւն եկեղեցու շինութեան մասին չկայ պահւած։ Միայն պատերի վրայ կարդացւում են երեք արձանազրութիւն, մէկը 1085 թւականից, միւս երկուսը թւական չունին և թերի են Դուցանից մէկի մէջ կան միայն Ստեփաննօս նախասարկաւագի և

1) Ն. Նահապետեանը Կաեկաչքի Վիճք ահւամբ հրատարակել է երկու հատորում 80 հատ Հայաստանի հին եկեղեցիների խիստ յաջող լուսանկարներ, որից օգտական ենք ուղարկեն աշխատութեան մէջ, բայց պիսալմամբ նրա անունը Պողոս ենք գրել։

2) Տես Մարք, Ամա Եստъ или Будъ. Записки Вост. Отд. Имп. Арх. Общ. т. VII, էջ 522—525.

«զԳրիգորի ծնաւղն ... Հիպատո ...» անունները, հնագոյն ձեր գրեռով դրւած: Բայց անցեալ դարու եօթանասնական թւերին եկեղեցուն կից գտնեել է գետնափոր, քարէ աստիճաններով դրսի հետմիացած մի դամբարան հետեեալ արձանադրութեամբ.

«Ասուուծոա հրաման և քրիստոսակոչ հրաժարման ... մամբ ... իւք ի սա է հանգուցնեալ ընդ հարս իւր ... երանելի Տէր Արտաւազդ Կամսարական ապաւէիւպատ պատրիկ . . . և իշխան հայոց, որդի Հրահատա պատրիկ Շիրակա և Աշարունեաց և . . . ամուսին Շուշանա Մամիկոններց¹⁾»:

Որովհեան Արտաւազդ Կամսարականի անունը պատմութեան մէջ չէ յիշւած, ուստի և Ալիշանը կարծել է, որ դա կարող է Վահան Մամիկոննեանի զինակից-ընկեր Հրահատի որդին (իինել²⁾): Դրա դէմ մենք պէտք է առարկենք, որ հինգերորդ դարում Կամսարականները չունէին ապիհիւպատ պատւոյ անունը, որ գործ են ածում եօթներորդ, գուցէ նաև վեցերորդ դարու Կամսարականները, բայց դրա փոխարէն ունինք բազմիցս յիշւած ներսէն³⁾ ապիհիւպատ Կամսարական որդի Հրահատին, որի անունը կայ Թալիխնի մատուիթ յիշատակարանի մէջ: Մենք աւելի հաւանական ենք համարում Արտաւազդին սորա որդի համարել: Ներսէնը ապրում էր եօթներորդ դարու առաջի կիսում, նրա թուան մահը կարող ենք ութերորդ դարը տանել, թէն հարկ չկայ եկեղեցու ժամանակն էլ այդ դարն իջնեցնելու, որովհեան եկեղեցու մէջ պատահած գերեզմանը կարող է յետոյ լինել, իսկ եկեղեցին կարող էր աւելի շուտ շինեած լինել:

Մեզ չյաջողւեց ձեռք բերել այդ եկեղեցու լուսանկարը. ըստուգութեան կարօտ է նաև արձանագրութիւնների ընթերցումը:

10. Մրենի եկեղեցին, դարձեալ կարսի նահանգում, շինել է Դաւիթ կիւրապազատ Սահառունին, որ իշխան էր կարգւած Հայաստանում եօթներորդ դարի սկզբին (600—625): Հայ պատմագիրներից այդ եկեղեցին յիշատակում են Յովհաննէս կաթուղիկոսը. Սամուէլ Անեցին և Վարդան պատմագիրը: Նրա պատերը մինչև այժմ էլ պահւած են լաւ վիճակում և լի են բազմաթիւ արձանագրութիւններով 992—1295 թւականներից: Շինութեան

1) Շիրակ. 456. Արժանագրութիւնը սրբադրել եմ Լէօյի մեռադրից:

2) Շիրակ. 456.

3) Մ. վ. Տէր Մակուսեան. Սոկրատ սրուաստիկոս. Պատմ. եկեղայառաջ. էջ 26.—Դ. որ ի մի ենք հաւաքել ներսէի մասին եղած տեղեկութիւնները.

արձանագրութիւնը թէե կայ, բայց դժբախտաբար թերութիւններով է. Նրա մէջ յիշւում են Հերակլ թագաւորը, Պատրիկ կիւրապաղատ, Թէոփիլոս եպիսկոպոս, ով տանուտէրութեան Ներսէնի Շիրակայ և Արշարունեաց Տեսան շինեցաւ սուրբ Եկեղեցիս ¹⁾: Եկեղեցու նկարը մենք տալիս ենք պ. Օհանջաննեանի լուսանկարից, իսկ յատակազիծը կարելի է տեսնել Հ. Ալիշանի՝ Շիրակի 187 երեսում: Այս Եկեղեցին նշանաւոր է նրանով, որ գիւտաւոր մուտքի ճակատին բարձրաբանդակի մի պատկեր ունի, ուր ներկայացրած է վերեւում երկու հրեշտակ, ներքեւում վեց մարդիկ զանազան դիրքերով: Արտանկարած է Ալիշանի մօտ ²⁾, սակայն այնքան էլ պարզ չէ. Ալիշանի բացատրութեամբ այդտեղ կայ նաև Սահառունու պատկերը: (Տես տախտակ հ. ԽХІV):

11. Ս. Անանիայի եկեղեցին գտնուում է Կարսի նահանգի Ալամսն կամ Ալիս գիւղում, որի գմբէթի և տանիքի ծածկերն են քանդւած, իսկ ընդհանրապէս լաւ վիճակում է: Բարեբախտաբար շինութեան արձանագրութիւնը պահւած է անվնաս և նորանից տեղեկանում ենք, որ Եկեղեցին շինել են ովն Գրիգոր մականւանեալ եղուստրիս (illustris—հռչակաւոր) և իւր Մարիամ ամուսինը, Հերակլ թագաւորութեան 27-երորդ տարին, այսինքն 636—637 թ. ³⁾: Հայ պատմագիրները այդ Եկեղեցին չեն յիշատակում. նախ, որովհետեւ նա իրեն շինութիւն այնքան էլ աշքի չի ընկնում, երկրորդ, երեսի Գրիգոր իլուստրը պատմութեան մէջ առանձին դեր չի կատարել:

Այդ Եկեղեցու նկարը մենք տալիս ենք օգտակարով հայր Նահապետեանի լուսանկարից: (Տես տախտակ հ. ԽХV):

12. Մաստարա գիւղի եկեղեցին, որ գտնուում է պատմական Արագածոտն գաւառում, Արագածի արևմտապ-հարաւային վեհերի վրայ, Երևաննեան նահանգում, հարկաւ ոչ առանց նորոգութեան պահւած է շատ լաւ վիճակում և մինչև այժմ էլ ծառայում է իրեն ծխական Եկեղեցի: Դորա մասին էլ է պատմութիւնը լուսում, երկու

1) Ալրարատ. 415. 414 եւ Շիրակ, 156—142.

2) Ալրարատ. էջ 444. 453 եւ Շիրակ. 158.

3) Տես Շիրակ. էջ 125. «Քսան եւ եւ Թնամոյ Հերակլի բարեպաշտ Թագաւորի. Ներսէնի Շիրակա եւ Արշարունեաց տեառն եւ Թէօփիզոսի Արշարունեաց եպիսկոպոսի. և Դրիգոր եղուստր եւ Մարիամ իմ կին շինեցար զսուրբ Եկեղեցիս»: Սորա մէջ յիշած Ներսէն. Հերակլ եւ Թէօփիլոս անունները գտնում ենք նաև Մրենի արծանագրութեան մէջ: (Տես Շիրակ. էջ 404):

թւականով արձանագրութիւնը պատկանում էն 1010 և 1015 տարիներին, իսկ երկուսը, առանց թւականի անպայման հին են¹⁾: Դոցա մէջ յիշւած անունների վրայ հիմնւած հ. Ալիշանը արդարացի կերպով շինութեան ժամանակը համարում է եօթներորդ դար:

Մենք տալիս ենք նկարը հ. Նահապետեանի լուսանկարից: (Տես տախտակ հ. XXII):

13, 14. Մայր եկեղեցի եւ մատուռ Թալինում, գտնուում են Մաստարի մօտ, ոչ աւելի քան 3—4 վերստ սրանից դէպի արեելք ընկած: Մատուռը խիստ փոքր է, պահւած է անհամեմատ լաւ վիճակում և քանի գիւղի ժողովուրդը քիչ էր, այդ էր նրա ծխական եկեղեցին: Նրա ճակատի մասամբ վնասւած արձանագրութիւնից տեղեկանուում ենք, որ մատուռը շինել է Ներսէհ ապիհիւպատ Կամարականը ի յիշատակ իւր, իւր կին Շուշանի և որդի Հրահատի²⁾:

Նկարը տալիս ենք համեմատ հ. Նահապետեանի լուսանկարին: (Տես տախտակ հ. XX):


Անհամեմատ աւելի նշանաւոր է Թալինի մեծ Մայր եկեղեցին³⁾, որը իւր 25,82×24,45 մետր մեծութեամբ, խաչաձև յատակագծով, մաքուր սրբատաշ գեղեցկաչն պատերով, արկադներով և գեղեցիկ քանդակներով, որ ըստ ամենայնի յիշեցնում են Զուարթնոցի և Արուճի ո. Գրիգոր եկեղեցու քանդակները, պատկանում է ժամանակաւայ լաւագոյն շինութիւնների թւին: Դժբախտարար սաստիկ կործանուած է և ընկած կտուրի մեծագոյն մասը, գմբէթից բեկորներ են պահւած, ինչպէս նաև արևմտեան և հիւսիսային պատերից: Կանգուն են միջի շրս սիւները, սեղանի գլխի ծածկը մի կտոր գմբէթով և հարաւային ու արևելեան պատերը: Զկայ շինութեան թւականը, ընկել է, գուցէ գանւի փլատակների տակ. պատմապիրներն էլ, զարմանայի է, լուռ են և ոչինչ չեն հազորդել նորա մասին: Մենք Սոկրատի եկեղեցական Պատմութեան յառաջաբանի մէջ ցոյց ենք տեսլ, որ ամենայն հաւանականութեամբ այդ եկեղեցին շինել է Շիրակայ և Արշարունեաց տէր Ներսէհ ապիհիւպատ պատրիկը, յայտնի Համառօտ Սոկրատի յի-

1) Տես Այրարատ. 434—457. անյաջոզ նկարով:

2) Տես Այրարատ. 457. 458 եւ յառաջաբան Սոկրատի եկեղեցամունքին:

3) Նկարի մէջ Թալինի Մայր եկեղեցու պատկերի տակ դրւած է. «Ա. Աստուածածին», պիտի է. այդ անունը փոքր մատուռինն է, որ պահւած է յիշատակարանում:

շատակարանի մէջ «եկեղեցեաց շինող» տիտղոսով¹⁾, եկեղեցու սիւներից մէկի վրայ մի արձանագրութիւն կայ, 183 թւականից թալին գիւղը ջուր բերելու համար, երբ եկեղեցին վաղուց զոյտւթիւն ունէր, Այժմ, երբ մեր առաջ դրած է եօթներորդ դարու եկեղեցիների շնչփերի շարքը, աւելի ենք համոզւում մեր մի անգամ յայտնած կարծիքի մէջ:



Հ. Ալիշանի տւած նկարը²⁾ յաջող չէ. ըստ ամենայնի բարար է Լինչի երկու՝ ընդհանուր և մասնաւոր զարդերը պարզաբանող տեսարանները³⁾. Մենք նկարը տալիս ենք հ. Նահապետանի լուսանկարից: Աւելորդ չենք համարում կցել նաև պ. Խ. Յուսիկեանի նկարած յատակագիծը թէև դժբախտաբար, պարզնը մասշտաբ չէ տուել: (Տես տախտակ հ. XXI).

15. Յովհաննու կամ ս. Գրիգոր եկեղեցի, այժմ յայտնի Ուշիլիսէ անունով, գտնուում է Տաճկահայաստանում, Ալաշկերտ գաւառում: Այդ եկեղեցու հիմնարկութիւնը, Ագաթանգեղոսի ցուցմանը, Լուսաւորչի ժամանակից է, միայն թէ նրա հիմնարկած ուրիշ եկեղեցիների պէս հիմքից ի վեր վերայինւել է եօթներորդ դարում՝ իսկ այդ վկայում է շինութեան արձանագրութիւնը: Խնչպէս Բագարանի եկեղեցում, այդ արձանագրութիւնը՝ փորագրւած

1) Սոկրատ. յառաջաբան, Ղ.Ա.—Ղ.Գ.

2) Այրարատ. 457—440. Սոկրատ. էջ Ղ.Ա.

3) Armenia, I, 322—324 եւ Fig. 62, 63.

խոշոր տառերով շրջափակում է եկեղեցու վերենի մասը և ծագում
է 634—640 թւականից: Եկեղեցու պատերի վրայ կան երեք ար-
ձանագրութիւն ասորերէն լեզով: Արձանագրութիւնների առաջի
հրատարակողը նզել է Բրոսոսէն և յետոյ Ալիշանն ու ուրիշները¹⁾:

16. Յովինաննա-վանի, Կարբի գիւղում, Էջմիածնից մօտ 25
վերսու հեռու, Արագածի հարաւային վիճերի վրայ: Այդ եկեղեցու
ներկայ հոյակապ շնչքը պատկանում է տասներկուերորդ դարուն,
բայց նրա հիմնարկութիւնը անհամեմատ հին է, որովհետեւ Զաքա-
րիս սարկաւագի պատմելով եկեղեցին հիմնել է չորրորդ դարում,
յետոյ Աշոտ ուն Դվին քաղաքից 578—4 թւին վերաշինել է, մա-
նաւանդ կտուրը քարով ծածկելով:

Մենք աւելորդ համարեցինք նրա նկարը տալ, որովհետեւ,
ինչպէս նկատեց, ներկայ վիճակով նոր է²⁾:

17. Ակօնիի եկեղեցին, Արարատ լեռան վրայ, Յովինաննէս
կաթուղիկոս և Վարդան պատմաղիբների վկայութեամբ չինել է
Ներսէս Շինողի յաջորդ Անտառաս կաթուղիկոսը: 1840 թ. երկ-
րաշարժը անհետ կորցրել է նրա հետքերը, բայց բարեբախտաբար
մի քանի մասի նկարներ կանխապէս վերցրել էր Դիւրուան³⁾:

18, 19. Եղուարդի եւ Արօնի եկեղեցիները, գտնւում են
դարձեալ ոչ հեռու Էջմիածնից, համանուն գիւղերում, միայն թէ
Արուճը այժմ կոչում է Թալիչ: Այդ երկուան էլ չինել է Գրիգոր
Մամիկոննան իշխանը, Ներսէս Շինողի կրտսեր ժամանակակիցը,
որի իշխանութեան օրով տեղի ունեցաւ կուսաւորչի մասունքների
տեղափոխութիւնը Զուարթնոց եկեղեցին:

Եղուարդի եկեղեցին, որ երբեմն նաև իրբև վանք է ծառայել,
կիսաւեր է. ունի չինութեան արձանագրութիւնը եկեղեցու
պատճ շուրջը. սակայն ձեռքի տակ չունինք: Բայց մենք Յովինան-
նէս կաթուղիկոսի պատմելով գիտենք, որ նրա շինողը Գրիգոր

1) Brosset, Notes sur la plus ancienne inscription arménienne connue, Mélanges Asiatiques, V. III (1857) էջ 4—14 եւ Այրարատ. 165—177. Հ. Ս. Էֆրիկեան. Նկարագիր բնաշխարհի Բա-
գաւանի:

2) Մանրամասն, նաեւ ճարտարապետական տեսակէտով նկարւած-
է Դրիմի մօտ տես նաեւ Այրարատ. էջ 165—177: Նորա յաջող լու-
սատիզը կարելի է գտնել Մարի-Գնունի ալբումում:

3) Dubois de Montregenix. Voyage, III, էջ 465 եւ
ատլաս 5. տախտակ XX, Fig. 8. Այրարատ. էջ 474—474:

Մամիկոնեանն էր: Հնագոյն այժմ հրատարակւած արձանագրութիւնը 1191 թւականիցն է¹⁾:

Այդ դժբախտ վիճակից ազատւել է Արուճի եկեղեցին, որը իւր գեղեցկութեամբ և զարդերով շատ մօտ է Զուարթնոցին և Թալինի եկեղեցուն: Չնայած աչքի ընկնող մեծութեան, սիւներ չունի և այնու ամենայնիւ մինչև այսօր էլ համարեա թէ կանգուն մնացել է: Խոնարհել է միայն գմբէթը, իսկ պատերի վլաւածքները շատ հեշտ կարելի է կարկատել:

Եինութեան արձանագրութիւնը պահւած է արեւելեան պատի վրայ, դրսի կողմէից, պատուհանից բարձր և տարիներ առաջ մեր յիշատետրում արձանագրած լինելով, առաջին անգամ ի լոյս ածեցինք²⁾:

«Ի եւ Թ ամի Կոստանդնի մարերի ամսոյ որ աւ(ր) Ժ և Ե հիմնարկեցաւ սուրբ կաթուղիկէս | ի ձեռն Գրիգորի Մամիկոնեանի | հայւոց իշխանի և Հեղինէ|ի նորին զուգակցի | ի բարեխաւութիւն շինաւղաց զսա | .— Քրիստոս Աստուած»:

Այս արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ Կոստանդնի 29-րդ թւականին, այսինքն 669 թւին, Գրիգոր Մամիկոնեանը շինել է այս եկեղեցին, ինչպէս արդէն պատմել են Յովաննէս կաթուղիկոսը և նրանից առաջ Ղեռնդ պատմագիրը: Պատերի վրայ կան ուրիշ արձանագրութիւններ են, 869, 987 և 1285 թւերից³⁾:

Նկարը տալիս ենք համեմատ հ. Նահապետեանի լուսանկարի: (Տես տախտակ հ. XIX):



1) Այրարատ. 443:

2) Համարեա մեզ հետ միաժամանակ հրատարակւեց Մխիթար վարդապետի Ընթերցմունքը: Zeitschrift der armen. Philologie, 1905. է2 40. 44:

3) Այրարատ. 442 եւ Lynch, Armenia, I, 143.

ԲՆԴՀԱՆՈՒՄ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀՆԱԳՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՎՐԱՅ.

Աեր առաջ բերած ցուցակը 20 եկեղեցիների — Զուարթնոցի
հետ միասին ամեններն չեն լրացնում հայոց հնագոյն եկեղեցիների
թիւք. դոքա հայ մասնագէտներին քաջածանօթ են, իսկ եւրո-
պացի ճարտարապետ մասնագէտներին՝ շատ քչերը, այն էլ ոչ
պատմական ճիշտ տեղեկութիւններով, ոչ էլ անթերի նկարներով
և նկարազրութիւնով! Սակայն մինչև օրս մեր ճարտարապետական
արւեստի մասին կարծիք յայտնողներ նոքա են եղել: Գրականու-
թեան մէջ վիճելու խնդիր չէ թէ ինչպէս պիտի վարւել, երբ հարց
կայ ազգերի փոխադարձ յարաբերութիւնը և գրական ազգեցու-
թեան չափը որոշելու: Քննում և ստուգում են այդ ազգեցութեան
չափը ոչ միայն ակնյայտնի թարգմանական գործերով, այլ նոյնը
վերատուգում են նաև ինքնուրոյն ճանաչւած երկերով: Որովհետև
հայոց ճարտարապետութիւնը շատ քիչ է ուսումնասիրութեան
առարկայ ծառայել, ուստի չափազանց վերիվերոյ են դրւել և լուծ-
ել նրա թէ ինքնուրոյնութեան և թէ հարսնան ազգերի արւեստ-
ների փոխադարձ ազգեցութեան խնդիրը: Շատ սովորական է լսել,
որ հայոց ճարտարապետութիւնը ծաղկել և զարգացել է բիւզան-
դականի ազգեցութեամբ, բայց ինչ մասեր են հայերը ինքնուրոյն
աւելացրել և ինչ մասեր փոխ առել, այդ կարելի է միայն ընդհա-
նուր գծերով որոշել: Օրինակի համար մենք նախընթացում ընդ-
գծեցինք Հոփիսիմէի շինութեան առանձնայատկութիւնները, որոնք
հայկական են ճանաչւած¹⁾: Սակայն Փրանսիացի Վոզիւէի Ասո-

1) Խայիկ վարդապետի վկայութեամբ Երեւան քաղաքից ոչ նեռու-
Քանարեռ գիւղի մօտ, գտնում են Յոհան Աւանեցի կաթուղիկոսի շինել
տւած եկեղեցու աւերակները, որ արտաքին ճարտարապետութեամբ ըստ
ամենայնի յիշեցնում են Հոփիսիմէի եկեղեցին, Եթէ այդպէս է, ասել է,
Կոմիտաս կաթուղիկոսը ընդօրինակութեան համար հեռու գնալու կարիք
չուներ:

թեքի ուսումնասիրութեան գեղեցիկ հրատարակութեան մէջ առաջ են բերւած մի շարք ասորական եկեղեցիներ, որոնք ունին նոյն պիսի ուղիղ պատեր, ներս ընկած նիշերով, և կտրի կտրտւած գծերով։

Աւելի կարեոր է հայ վրացական ճարտարապետութեան կապը. թէ նոքա շատ սերտ միացած են իրար հետ և շատ անգամ մի կամ միւս երկրի շնութիւնների ընդօրինակութիւն են ներկայացնում, այդ խիստ ակներն է։ Հարցը նրանում է, թէ որին պիտի առաջնութիւն տալ և ովքեր են նախաձեռնողներ և ուսուցիչներ եղել՝ վրացիներ թէ հայեր, Այդ հարցը գրականութեան վերաբերմամբ շնորհւ պրոֆեսոր Մասի լուրջ ուսումնասիրութիւններին, այժմ աւելի և աւելի է պարզում. Հայասահանն է եղել այն կամուրջը, որի վրայից ասորական և յունական քրիստոնէական քաղաքակրթութիւնը տարածւել է Վրաստանում: Ճարտարապետութեան վերաբերմամբ եւրոպացիները նոյնպէս առաջնութիւնը տալիս են հայերին, Սակայն, որքան մնաք կարողացանք եղրակացնել, այդ կարծիքը չի հիմնած իրական ուսումնասիրութեան վրայ, այլ, կարծում եմ, սխալւած չեմ լինիլ, եթէ ասելու լինիմ, թէ ինչպէս հին ժամանակները ներկայումս էլ Արևմուտքում առաջ հայերին են ճանաչել և յետոյ վրացիներին և ըստ այնմ էլ գերազատութիւնը տաել հայերին: Ուստ ակադեմիկ Կոնդակովը հակառակ կարծիքի է, բայց վարւում է խիստ վերիվերոյ և պատճառաբանում խախուտ հիմունքներով: Նա երկու անգամ մշակել է նոյն հարցը. նախ՝ «Վրաստանի նին նարաւապեսուրիւնը աշխատութեան մէջ, ապա. Ուստատանի ննութիւններ հրատարակութեան չորրորդ պրակի մէջ¹⁾:

Նախ ամբողջութեամբ առաջ բերենք նրա հիմնական միտքը իւր խօսքերով. «Վրաստանում և Հայաստանում արւեստը սկիզբն է անում արդէն քրիստոնէական շրջանում և եօթներորդ դարից ոչ վաղ Մինչև այդ Անդրկովկասի սահմանների բոլոր հոյակառ շէնքերը ամբողջապէս պարտական են Հռովմին և Բիւզանդիոնին: Էջմիածնի եկեղեցիների հնութիւնը, մինչև անգամ այն եկեղեցիներինը, որոնք աւերակ վիճակում են պահպանւած, հասնում են միայն մինչև ներսէս երրորդ կաթողիկոսի (+661) ժամանակը, որը Շինող անունն է ստացել և արւեստի ու ճարտարապետու-

1) Древняя архитектура Грузии, Москва, 1876 г. въ Русской Древности въ памятникахъ искусства, СПБ, 1891, выпускъ, IV, т. 56—76.




Церковь въ Багаранѣ.
Св. Гайанэ.



Բագարանի եկեղեցի.
Ո. Գալանէ.

Die Kirche in Bagaran.
Das Kloster Gaiane.



Церковь въ Аручѣ.

Արուչի Ս. Կրիպտ.


Die Kirche zu Arutsch.




Часовня въ Талинѣ.

Թալինի եկեղեցի.

Die Kapelle zu Thalin.



Главная церковь въ Талинѣ. Թալինի Ս. Առաքեածածին. Die Haupt-Kirche in Thalin.



Մաստարայի եկեղեցի.
Церковь въ Мастарѣ. Die Kirche in Mastara.



Церковь въ Текорѣ.

Տեկորի Ս. եղբայրութ. հկեղեցի.


Die Kirche in Tekor.



Церковь въ Мренѣ.

Մրենու եկեղեցի.

Die Kirche in Mren.



Ալամանի Ս. Առաքելու.
Die Kirche in Alaman.

Церковь въ Аламанѣ.

թեան սէրը հետը բերել է Բիւզանդիոնից ... Ռւսակ եօթներորդ դարուց առաջ հարց անգամ չի կարող լինել վրա-հայկական բնուրոշ ճարտարապետական ոճի մասին և նմանապէս հերքել պէտք է այն բոլոր ձգութեաները, որոնք վերաբերում են հայ եկեղեցիների հնութեանը՝ Հափիսիմէի (618?), Գայիխանէի (680?), Վաղարշապատում և Օձունի (718—729?). Նոցա մէջ վերջնականապէս մշակւած հայկական ոճը կարող է պատկանել միմիայն ամենավերջի շրջանին, ԺԵ—ԺԶ դարերին։ Մատաւորապէս հարցի դրութիւնը նոյնն է և վրաստանի վերաբերմամբ, որտեղ ճարտարապետութիւնը Ժ—ԺԱ դարում դեռ ևս զուտ բիւզանդական բնաւորութիւն ունի, իսկ ինչքնուրոյն գեղարւեստական գործունէութեան շրջանը ընկնում է ԺԲ—ԺԴ դարերը։ Յետոյ յայտնի է, թէ երկրի քաղաքակրթութիւնը ինչպիսի անկեալ վիճակի մէջ էր տասնեւինգերորդ դարում¹⁾։

Հաշակաւոր ակադեմիկը այդպիսով հերքում է, կամ հարց դնելով, կասկածի է ենթարկում հայոց հնագոյն եկեղեցիների թւականը. չպիտի զարմանալ, որովհետեւ նա հայոց պատմութիւն երեխ չզիտէ. այլապէս ծանօթ լինելով Հայաստանի քաղաքական և տընտեսական սոսկալի վիճակի հետ, ԺԵ և ԺԶ դարերում, չէր յայտարարիլ, որ հայերը այդ դարում ընդունակ էին յատուկ գեղարւեստական ոճ ստեղծելու²⁾։

Բայց կասկածի ենթարկելով հայոց հնագոյն եկեղեցիների թւականները, նա ամենայն հանդարտութեամբ դրում է. «Հնա-

1) Рүсскія Древности, էջ 57. 58.

2) Նա չեղած է յայտարարում. օրինակ. Բագրատունեաց շրջանի Հայաստանի համարեա ամեն անկիւններում կենդանի եւ վառ շինարարական գործունէութիւնը, որովհետեւ նրա կարծիքով. Անիի Մայր եկեղեցին Թէեւ ունի Կատրամիդէ Թագունու 1010 Թւականի արժանազրութիւնը (նա լուռթեամբ է անցնում 1042. 1059—1067. 1085. 1245. 1245. 1284 Թւերի արժանազրութիւնները) պատկանում է ԺԲ. ԺԴ—ԺԴ դարերին. այդ եկեղեցու ճարտարապետական ոճը եւ նրա մանրամասնութիւնների յատկապէս վրացական բնաւորութիւնը. իսկ ամենից առաջ նրա զանազան ճարտարապետական եւ զարգերի մեւերի նմանութիւնը Արեւմուտքի ԺԴ—ԺԴ դարերի շինութիւնների հետ. ցոյց են տալիս. որ նա ծաղել է աւելի ուշ ժամանակում։ Իսկ արժանազրութիւնը, իսկ Ասողիկ պատմազրի վկայութիւնը. նա այդ բաները հեշտ է բացարում. ԺԴ—ԺԴ դարերի վերաշնորդները հին արժանազրութեան քարերը ամրացրել են նոր պատերի մէջ։

գոյն շրջանից, է—ժ դարը շատ քիչ շինութիւններ են միացել. Ասենի եկեղեցին (վրացական), ո. Հոփիսիմէի եկեղեցին, էջմիածնի վանքի եկեղեցին, Օձունի եկեղեցին և մի քանի ուրիշները¹⁾:

Վրաց Ասենի ո. Սիռոն եկեղեցին գտնուում է 14 վերստ Գորի քաղաքից հեռու. Նրան շինել է հայազգի Ք. Ե. Թողոսա ...²⁾ ճարտարապետը ժ դարում, շատ թեթև փոփոխութեամբ ընդօրինակելով ո. Հոփիսիմէի եկեղեցին և իւր անունը փորագրել է եկեղեցու պատի վրայ³⁾:

Երբ մէկը կամենայ առանց կանխակալ կարծիքների աղքերի աղդեցութիւնների փոխազարձ յարաբերութիւնների մասին խօսել, երբէք իրան չպիտի թոյլ տայ բնագիրը պատճէնից գերազաս համարելու. Իսկ թէ Կոնդակովը կանխակալ զիտաւորութիւն ունի երեսում է հէնց նրանից, որ առաջ հերքում է հայ եկեղեցիների հնութիւնը, յետոյ մոռանալով իր հերքածը, դարձեալ յայտարարում է, որ կան եօթից—տաս զարու շինութիւններ, բայց ցանկի մէջ առաջի տեղը տալիս է տամներորդ (վրացական) և ոչ թէ, բնական մտածմամբ, հայ հնագոյն եկեղեցուն:

Նա այդպիսի թույցներ իրեն թոյլ է տալիս, ինչպէս ինքն է վկայում, կասկածի ենթարկելով արձանագրութիւնների հատութիւնը և գերազասում է գեղարւեստական-հնագիտական ձեւերի համեմատութիւնը՝ արդէն յայնի օրինակների հետ. Մենք մի օրինակով ցոյց կտանք, թէ լոկ այդպէս դատելով, ինչպէս կարելի է սիսալւել. Առ այժմ այս կասենք, որ նրա աշխատութիւններով ոչ միայն չի պարզել հայոց և վրաց ճարտարապետութեան փոխազարձ աղդեցութիւնների ինդիքը, այլ շատ անտեղեակներ կարող են նոյն իսկ շփոթութեան մէջ ընկնել. Իսկ մեզ համար այդ հարցը այնքան էլ կարնորութիւն չունի, որովհետև վրաց ճարտարապետութիւն մեր ուստումնասիրած շրջանում չկար. Նա սկիզբն է առնում,

1) Русскія Древности, էջ 48.

2) Brosset, Voyage Archéologique, Sixième Rapport, 1849,
էջ 24.

3) Պր. Մառը Պետերբուրգում ինծ յայտնել էր. որ Օլֆիում կայ Բանայի եկեղեցին շինւած. ինչպէս Գաղիկի եկեղեցին, Զուարթնոցի հետեւողութեամբ, Վերջերս Տակայշվիլին թիֆլիզում դրա մասին մի զեկուցում կարդաց եւ մենք տեսանք եկեղեցու մի լուսանկարը թէիւ այդ եկեղեցին էլ կործանւել է. բայց մեռում են սեղանի մասը. կտուրի ծածկի մի մասը. կանգուն են սիւնազարդերը եւ հետեւապէս դիւրին է. Թէ նրա վերականգումը եւ թէ նրա օգնութեամբ միւսներինը Ծննդօրում են, որ Բանայի ընդօրինակութիւնը աւելի առաջ էր քան Գաղիկի եկեղեցին.

Գրիմի և Կոնդակովի վկայութեամբ, միմիայն Ժ. բգ դարում, երբ հայերը շատ առաջ էին և կարող էին վրացիների համար այնպիսի ուսուցիչներ լինել, ինչպիսին մի ժամանակ էին հայերի համար յոյներն ու ասորիները:

Պակաս հետաքրքրական չեն նաև այն հարցերը, որոնք երբեմն հարեանցի կերպով իրեն լոկ ևնթաղբութիւն, երբեմն փոքր ինչ աւելի պարզաբանւած արևել են այս կամ այն մասնագէտի կողմից հայոց ճարտարապետութեան ազգեցութեան մասին ոչ միայն հարեան փոքր ազգերի այլ նաև հեռաւոր մեծ ազգերի վը-րայ Օրինակ, Տեկոսիէն գտել է, որ արաբական ճարտարապետութեան մէջ խիստ բնորոշ պայտաձև կամարը առաջին անգամ պատահում է Տեկորի տաճարի մէջ, հետեւապէս շատ աւելի վաղ, քան արաբների ասպարէջ գալը և զարգանալը. նշանաւոր հնագէտ Շնազէն գտել է ակնյայտնի ազգեցութիւն ուստական հին ճարտարապետութեան վրայ, մանաւանդ կիսի Սոփիայի եկեղեցում և այդ ասիթ բռնկով, երկար կանգ է առնում երկու ցեղերի բնաւորութեան, նոցա կրօնական աշխարհանայեցողութեան, ճաշակների և զեղագիտական ըմբանման յատկութիւնների մասին: Անգղիացի Ֆերգիւսոնը նոյն ազգեցութիւնը որոնում և գտնում է հեռաւոր Խոլանդիայում և վերջապէս ամենավերջին ժամանակներս գերմանացի Ստրիմիգովսկին ուզեց այդպիսի ազգեցութիւն ցոյց տալ նաև գերմանական ճարտարապետութեան վրայ, իրար հետ համեմատելով Զուարթնոց եկեղեցին և Ատենի եկեղեցին:

Մենք շատ հեռու ենք համանման ևնթաղբութիւնները ճշմարտութիւն հրատարակելու. մեզ քաջ ծանօթ է, որ ամենանշանաւոր դիմանականներն էլ երբեմն մոլորութիւնների մէջ են ընկնում, սակայն հայ մասնագէտների պարտըն է ուսումնասիրել այն ինչ որ կայ, որպէս զի կարելի լինի փոքր ինչ կիմնաւոր վճիռ արձակել համանման ևնթաղբութիւնների առթիւ Եթէ մասնական այսատութիւններ կատարեն, շատ կդիւրանայ և հնարաւոր կդառնայ ապագայի ստեղծագործող ոյժի երեան գալը, Որպէս զի այդպիսի աշխատանք արդիւնաւէտ լինի, որպէս զի ստացած եղրակացութիւնները անվիճնելի լինին, պէտք է ամեն մի ինդրական դէպում միաժամանակ օգտական երեք մասնագիտութիւնից. պատմութիւնից, արձանագրագիտութիւնից և հնագիտութիւնից: Մի կամ միւս ասպարիզի թուլութիւնը կամ պակաս ծանօթութիւնը խիստ զգալի է զառնում ընդհանրացումներ և վերջնական եղրակացութիւններ անելիս: Օրինակ վնասելու համար հեռուն գնալու հարկ չկայ, Մենք տեսանք, որ հայկական ճարտարապետութեան լաւագոյն օրինակներ ոմանք Հոփիսիմէն են համարում, ուրիշները Տեկորը:

Հոփիսիմէն առաջին անգամ հրատարակել է Դիբուան և ժամանակը որոշնլ միմիայն պատմութիւնով. Տեկորը հրատարակել է Տեքսիէն և թւականը որոշել սխալ արձանագրութիւնով Հոփիսիմէն նկարի նկարի հնագիտական ուսումնասիրութիւնը Շնաղէին համոզեց, որ պատմական թւականը ուղիղ է, իսկ կոնդակովը հակառակ եղակացութեան եկաւ և կասկածի ենթարկեց այդ թւականը: Այժմ մենք ունենք արձանագրութիւն տաճարի երկու հակաղիր պատերի վրայ, ունենք պատմական տեղեկութիւն և ժամանակի մի շարք շինութիւնների ժողոված նիւթը և հետեւապէս կարող ենք ամենայն վստահութեամբ Շնաղէի կողմը բռնել: Աւելի հետաքրքրական է Տեկորի գէպքը: Տեքսիէն իւր հետ ունէր հայ թարգման, որը բազմաթիւ արձանագրութիւնների մէջ կարդացել է ամենից նորը, 1243 թ., այն էլ ոչ ուղիղ, որովհետեւ այդ թւականի արձանագրութիւն իսկապէս չկայ: Բայց յետոյ նոյն Տեքսիէն զուտ հնագիտական դատողութիւններով, եկեղեցու ժամանակը յետ յետ տանելով, տարաւ իններորդ յետոյ եօթներորդ դարը Ֆերգիւսոնը այդ քայլն անում է առանց կասկածի: Նա ուղղակի եկեղեցին յայտարարում է եօթներորդ դարու չէնք: Խիստ խրատական են այդ առթիւ Ֆերգիւսոնի հետեւեալ խօսքերը. Ալյսունզ ոչ աւանդութիւն կայ և ոչ էլ արձանագրութիւն եկեղեցու թւականը որոշելու համար, սակայն, հիմնելով նրա ձևերի պարզութեան և նրա այսպէս ասած դասական պատկերի վրայ, այդ եկեղեցին ակներն կերպով աւելի հին է քան թէ մինչև այժմ ճանաչած որնից ուրիշ (հայկական) եկեղեցի: և հիմնելով այն տեղեկութիւնների վրայ, որ գտնում ենք Վոդուէի վերջի հրատարակութիւններում, մենք ամենափոքր չափով կասկածել չենք կարող, որ նա պատկանում է եօթներորդ զարունակութիւնը¹⁾:

Այժմ մենք ունենք հնագոյն արձանագրութիւն և գիտենք, որ եկեղեցին իսկապէս իւր պարզ ձևերով ոչ թէ եօթներորդ դարու է, այլ էլ աւելի հին է:

Առ այժմ սահմանափակել ենք միմիայն հայոց հնագոյն եկեղեցիների ցանկը տալով, որովհետեւ նորա են, որ ցոյց են տալիս թէ ինչ ձեռով և երբ Հայաստանում սկիզբն առաւ ճարտարապետութիւնը և սկզբում ինչպիսի զարգացում ունեցաւ:

Բայց որպէս զի մեր առաջ բերած ցանկից կարողանանք մի քանի ընդհանուր եղակացութիւն հանել, կասենք հետեւեալը: Քրիստոնէութիւնը Հայաստանում հաստատելուց յետոյ, այսինքն չոր-

1) Ferguson. A history of architecture, I, 468.

րորդ դարսոց, սկիզբն է առնում նաև քրիստոնէական ճարտարապետութիւնը, արտայայտուելով եկեղեցիների շինութիւններում։ Առաջի եկեղեցիները, մինչև անգամ վերաշինութիւնից յետոյ անփառունակ էին, ցած և մութի Պատերը շարում էին հասարակ, անտաշ քարերից, կտորները փայտածածկի չինգերորդ դարում հանգամանքները դէպի լաւ են փոխառում, յոյն կողոտոնները փոքր առ փոքր պատրաստում են աշակերտներ, զարգանում է ժողովրդի ճաշակը և սկսում են տաշած քարեր գործ ածել, փառաւոր կերպով վիրաշինում են Մայր եկեղեցին, Էջմիածնի կարուղիկեն, որի էական մասերը՝ մինչև օրս պահւած, փայլուն ապացոյց է թէ որքան արդէն արուեստը առաջ էր գնացել։ Ոչ մի շինող վարպետի անուն պահւած չէ, զրա փոխարէն աչքի են ընկնում շինել տուողները՝ իշխաններ, երկրի կառավարիչներ և կաթողիկոսներ, Վեցերորդ դարում, հարկաւ, սկսուած շարժումը կանգ չի առել. մեր թուած եկեղեցիներից մէկն ու միւսը այդ թւականում են հիմնարկւել, բայց ընդհանրապէս այդ դարը աղքատ է։ Մենք գիտենք, որ զրական տեսակէտից ևս այդ դարը առանձնապէս աչքի չի ընկնում։ Դրա փոխարէն շատ նշանաւոր և փայլուն է եօթներորդ դարը իւր մի շարք փառայելոց յիշատակներով։ Արւասի մէջ այնպիսի թոփչք կայ, ճարտարապետութեան ձեռքների մէջ այնպիսի հարստութիւն և զանազանատեսակութիւն, որ առանց տատանուելու ճարտարապետական տեսակէտից այդ դարը ամենափայլուն շրջաններից պիտի համարենք։ Մենք արդէն խոստովանել ենք, որ այդ դարի կանգուն եկեղեցիները, մանաւանդ կտորների և գմբէթների մասերով ենթ արկուել են փոփոխութեան, Բայց երբ համեմատում ենք Զուարթնոցի վլատակների տակ դարերով անազարտ պահպանւած նանենու, խաղողի քանդակները, դրսի արկադների շուշանաձն զոյտ խոյակները, կոլոր և երկարձիգ պատուհանները և գեռ ևս ուրիշ մանրամասնութիւններ, Թալինի մայր եկեղեցու, Արուեմի (Թալիշի) ու Գրիգոր եկեղեցու, Յագրանի ու Ստեփաննոս եկեղեցիների պատերի վրայ յար և նման քանդակների հետ, միթէ կասկած կարող է ծագել, որ այդ բոլորը նոյն արևստի, նոյն ժամանակւայ վարպետների գործն է, և որ այդ մասերին ոչ մի փոփոխող ձեռք չի դիպել։ Անիում Ժ. Ռուդ դարում ընդօրինակում են Զուարթնոցը, բայց որքան փոխւած են Զուարթնոցի գեղեցկաքանդակ խոյակները. որովհետև ժամանակի ճաշակը փոխւել էր։ Այդ տարբերութիւնը չկայ մեր թւած եկեղեցիների մէջ։ Հետեապէս մենք իրաւունք ունինք պնդելու, որ և թներոդ դարում բարձր զարդար զարդարման էր հասել հայ ճարտարապետութիւնը։

Մեր տւած ցանկից ստացած առաջի օգուտն այս է:

Միւս օգուտը աւելի ընդհանուր է և խիստ կարենոր երկրի պատմութեան համար: Մտաբերենք մնը թւած եկեղեցիները, դոքա մեծամասնութեամբ ընկած են աշխարհազրական մի զիրքի վրայ՝ Արարատեան դաշտը իւր անմիջական հարեան գաւառներով և հնար ունինք Հայաստանի այդ մասի զարգացման պատմութեան մէջ նոր էջ աւելացնել: Կոնգակովը վիճելով Դիւրուայի հետ, հայերի ճարտարապետութեան վրացիների վերաբերմամբ առաջնութիւն տալու խնդրում ի միջի այլոց այսպիսի մի միաք է թերթե կերպով ասում և անցնում: Վկաստանի լեռնոտ երկիրը աւելի նպաստաւոր էր ճարտարապետութեան զարգացման համար, քան Հայաստանի տափարակները: Մի կողմ թողնենք Հայաստանի և Վրաստանի համեմատութիւնը. վերցնենք Հայաստանի լեռնոտ և տափարակ նահանգները, կտեսնենք, որ այդ միաքը ոչ միայն չի հաստատում, այլ միանգամայն հակառակ եղբակացութեան է հասցնում: Հետեւապէս, բացի այն, որ հիմնովին սիալ է Վրաստանն ու Հայաստանը իրար հետ համեմատելիս մէկը լեռնոտ միւսը տափարակ կոչել, Հայաստանումն էլ ճարտարապետութեան զարգացման նպաստել են ոչ թէ Սիւնիքի, Արցախի, Վասպուրականի, Բարձր Հայքի ելն. լեռնաշատ երկիրները, այլ ամենից առաջ Արարատի և Շիրակի բարձրաւանդակները, այն ժամանակ կհամոզւենք, որ լեռները գուցէ օգտակար են, բայց առանձին վերցրած բաւական չեն ճարտարապետութիւն զարգացնելու Հարկաւոր է ուշազրութեան առնել նաև այն հանգամանքը, որ գուցէ Հայաստանի ոչ մի մասում չկայ շինութեան այնպիսի յարմար նիւթ ինչպէս Արարատեան դաշտում և շրջակայի գոտում: Այդ երկիրը սկսած Երեանից մինչև Աղէքսանդրապոլ և Կարս քաղաքները, յատկազիս իւր դաշտային մասերով, ներկայացնում է մի ընդհանուր երկրաբանական համանման կազմ, ուր ընկած են հրաբիսային անոնի, անվերջ, իրար հետ միացած քարի շերտեր, մոյք կարմիր և մոյդ սե և այդ ծայրերի մէջ ընկնող ամեն տեսակ գոյներով: Ամենախոշոր սալերով, առանց մեծ դժւարութեան, այդ տեսակ քարեր հնարաւոր է երկրի ամեն մի անկիւնում հանել և այն էլ շինութեան տեղից հինգ-տաս վերստ հեռուն գնալու հարկաւորութիւն չկայ: Առատ է նաև կիրք: Բնութիւնը այդ կողմից չափազանց նպաստաւոր է:

Եւ մենք տեսնում ենք ընութեան պայմանները զօրաւոր կերպով նպաստում են եօթներորդ դարու հայերին ճարտարապետական արեւեստի մէջ խիստ յաջող և կենսունակ քայլեր անել, և յաղթերով ամեն տեսակ արգելքներ, առաջ բերել ինքնուրոյն արւեստ Բնորոշ է այն հանգամանքը, որ հինգերորդ դարուց սկսած թէն

մարմնաւոր և հսկեոր իշխանութեան կեղրոնը տեղափոխուում է Դվին քաղաքը, բայց Վաղարշապատը պահպանում է իւր նշանակութիւնը, չորհիւ իւր ընդհանուր ազդային մնջ սրբավայրին Այդանդ են ամենահոյակապ չենքեր կառուցւած և այդ տեղից այդ գործունէութիւնը շասաւիդներով տարածում է Դվին, Արարատի և Արագածի փէշերով ուզգուում դէպի Շիրակի պտղաւէտ դաշտը Այդ տարածութիւնը բնական սահմաններով իսկապէս մի ամբողջութիւն է ներկայացնում, միացած հազորդակցութեան դիւրին ճանապարհներով, առանց մնջ գետերի և լեռնաշղթաների:

Չորրորդ դարում Փաւաստոսի վկայութեամբ եկեղեցիների շինարարական կեղրոնը Տարօնն էր. Հայոց եկեղեցիների մայրը Աշտիշատումն էր, Կուսանաց վկայարանները և Կաթուղիկէն Արարատեան դաշտում, աւելի նշանակութիւն են ստանում հինգերորդ մանաւանդ եօթներորդ դարում Բարձրանում է Կաթուղիկէի նշանակութիւնը, հայ հնդինակաւոր կաթուղիկոսները իրենց շինարարական գործունէութիւնը կեղրոնացնում են այդանդ և նըպաստում հայկական ճարտարապետութեան զարգացմանը. Այդ գործունէութիւնը սկսուում է Կաթուղիկէի վերաշինութեամբ Վահանի օրով և իւր ծաղկման հասնում Զուարթնոցի շինութեամբ Ներսէս երրորդի օրով. Մենք կարող ենք ամենայն իրաւամբ այդ համարել հայկական ճարտարապետական ինկնուրոյնութեան առաջի շրջանը և, որովհետեւ գլխաւոր դեր է կատարել կամիրածնի Կաթուղիկէն, ուստի նպատակայարմար դաշնք այդ անւան շուրջը համախմբել հայոց հնագոյն եկեղեցիները:

Մնում է որոշել թէ կայ արդեզք յայտնի մերձաւորութիւն մեր թւած եկեղեցիների և Զուարթնոցի մէջ, վերջինիս յատակագիծը Հայաստանում անպայման բացառիկ երևոյթ է, կողոր եկեղեցիներ հետեւել զարերից կարելի է մի քանիսը թւել, բայց Զուարթնոցի սիւնազարդը վեղեցիկ խոյակներով բացառիկ է: Հաստատապէս չիտենք ինչպէս է եզել նորա ձեր, որքան թմրուկի և վեղարի բարձրութիւն, թէ և այդ անորոշութիւնը որոշ չափով վերաբերում է նաև միւս եկեղեցիներին. որա փոխարէն զարդերի մնծագոյն մասը կրկնուում են ժամանակւայ շէնքերի վրայ: Սակայն համանման զարդեր կան նաև ասորական եկեղեցիների մէջ, խոյակների ձեր ու փորագրութեան համանմանութիւնը կը դանենք գարձեալ ասորական և Խոտայիսի ռավիննական եկեղեցիներում, իսկ նոյնութիւնը ոչ մի տեղու Ո՞րքան քիչ բան գիտենք հնագոյն ժամանակների վերաբերմամբ թէ հայերը ունէին արդեզք սերտ յարաբերութիւն Խոտայիսի հետ և ինչ չափով. Վեցերորդ դարում հայերը Հռովմում Վերսին — ծնեալների

(Regenerati) վաճքը ունէին, յատկապէս Ռավեննայում մի ամբողջ թաղ կոչւում էր Armenia—Հայաստան և այդ քաղաքի էքսարխուներից մէկը ազգաւ հայ էր՝ Խսահակ անունով։ Ուշադրութեան առնենք Կազանկատացու առասպելանման պատմութիւնը՝ թէ Կոստանդինը հաւանելով եկեղեցու շինութիւնը, Հայաստանից հետը վերցրեց ճարտարապետին, որ Բիւզանդիոնում նոյնպիսի շինութիւն շինել տայ։ Ասել է պատմագէտի հասկացողութեամբ Հայաստանում այնպիսի ճարտարապետներ կային, որ գերազանցում էին բիւզանդացիներին և նա այդ լուրջ շատ սովորական եղանակով է հաղորդում։

Կշոելով այս բոլոր փաստերը, իրաւ է, բացարձակապէս չենք կարող ասել թէ Զուարթնոցի շինողը հայ որմնադիր թէ յոյն կազատոս էր, փաստերը յամենայն զէպս աւելի յօդուտ հայի են քան յոյնի Զուարթնոց եկեղեցին իւր ինքնատիպ պատկերով Հայաստանում շինւել է այն ժամանակ, երբ երկրի աշխատաւորների ձեռքով ննարաւոր եր այդպիսի ձեռնարկութիւն։ Հայաստանում այդպիսի երկրորդ շինութիւն չկայ, նմանը չկայ նաև Յունաստանում և այդ խօսում է յօդուտ հայ ստեղծագործութեան։

